




Է. ՋՄԻԱԾԻՆ

ՕԳՈՍՏՈՍ

2001

Summa

0 4 . . 7 . .
2001



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Եկեղեցաշեն Հայրապետի հոբելյանը 3

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ ԵՎ ԲԱՐԵՄԱՂԱՎԱՆՔՆԵՐ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԾՆՆԴՅԱՆ 50-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքների շնորհավորական գրերը	6
Համայն Ռուսիայի և Վրաստանի Պատրիարքների շնորհավորական գրերը	8
Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ղեկավարների շնորհավորական խոսքերը	9
Ռուսաստանի Դաշնության և Վրաստանի Հանրապետության ղեկավարների շնորհավորական խոսքերը	12
Երևանի Մարենադարանի փնօրենի շնորհավորական գիրը	14

ԱՐԹՈՒՐ ՍՐԿ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - Վեհափառ Հայրապետի ծննդյան հիստունամյակին նվիրված հանդիսությունները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում	16
--	----

ՈՐԴԻԱԿԱՆ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԽՈՍՔԵՐ

ՊԵՏՐՈՍ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոս. կյանքի և գործունեության համառոտ ուրվագիծ	21
Տ. ԲԱԳՐԱՏ ԱԲՂ. ԳԱԼՍՏՅԱՆՅԱՆ - Վեհափառ Հայրապետի մանկավարժական գործունեությունը	31
ՎԱՐԴԳԵՍ ՍԱՐԿԵՎԱԳ ՄԱՆՈՒԿՅԱՆ - Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ-ի էկոմենիկ գործունեությունը	35
ՄԱՆՎԵԼ ՄԱՆՈՒԿՅԱՆ - Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին	40
ՎՈԼՈՂՅԱ ԱՐԲԱՆՍՅԱՆ - «Զի ըստ ընդրությունան յառաջադրությունն Աստուծոյ հաստատեցի»	42
ՎԵՀԱՓԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄՏԱԾՈՒՄՆԵՐԻՑ	44
Վ. ԴԵՎՐԻԿՅԱՆ - Նորընծաների ընծան	67

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության գիրը Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանին ծննդյան 50 և քահանայագործության 30-ամյակների առթիվ	68
Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքը ևոր ռառամնական տարվա առիթով	70
Հայրապետական գնահատություն	71

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎՐԵԺ ՄԿՐՏՉԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ - Սահակ Չորափորեցի՝ նահապարակ Կաթողիկոսը	72
ՈՒՌԵՆ ՄԻՄՈՆՅԱՆ - Վերջապես որտե՞ղ է գտնվել Հին Գերիկի վանքը	80
ԱՄԱՏՈՒՆԻ ՎԻՐԱՔՅԱՆ - Հայ Եկեղեցու Սահմանադրության ընդունման հարցի պատմությունից	86

1700-ԱՄՅԱԿ

ՄԻՐԱՆ ՆԵՎՐՈՒԶՅԱՆ - Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու 1700-ամյակին և Ռումինիայի հայոց թեմի առաջնորդական Աթոռի հաստատման 600-ամյակին նվիրված հանդիսություններ	91
ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ - «Հայաստանը և քրիստոնյա Արևելքը» գիրաժողով Սանկտ Պետերբուրգում	95

ՀՈՔԵԼՅԱՆ

Խ. ՊԱՅԱՆ, Մ. ՄԱՆՈՒՐԶՅԱՆ - Հահեռ արքեպիսկոպոս Աճեմյան	100
---	-----

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱՆԴԱՆԻԿ ՏԵՐՏԵՐՅԱՆ - Մեծ բանաստեղծի հոգու աղոթքները	103
---	-----

ՄԱՅՐ ԱԹՈՂՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Երկու տասնյակից ավելի անապաստան երեխաներ մկրտվեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում	108
Գարեգին Ա Կաթողիկոսն ընդունեց Ուկրաինայում հավաքարմագրած դիվանագետներին	108
Վերածվեց 800-ամյա Սաղմոսավանքը	109
Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետի ողջույնի խոսքը հուլիսի 18-ին սկսված Համահայկական երկրորդ խաղերի բացման առիթով	110
Ամենայն Հայոց Կաթողիկոսն առաջիկայում կայցելի Վրաստան	111
Մայր Աթոռը չի քաջալերում ցլամարտի անցկացումը Երևանում	111
Ամենայն Հայոց Կաթողիկոսը և ՀՀ նախագահը քննարկեցին Երևանի Մայր եկեղեցու և Մայր Աթոռի նորակառույց Բաց հտորանի ու կամարի շինարարության ավարտական փուլի աշխատանքները	112

ՄԱՀԱԳՐԱԿԱՆ

Հանգիստ Արժանապատիվ Տ. Սարգիս ավագ քահանա Չափարյանի	113
Վեհափառ Հայրապետի ցավակցական գիրը Տ. Սարգիս ավագ քահանա Չափարյանի սգակիր ընտանիքին	115
Վեհափառ Հայրապետի ցավակցական գիրը Հովհաննես Բադալյանի մահվան առիթով	116
Վեհափառ Հայրապետի ցավակցական գիրը Լևոն Մկրտչյանի մահվան առիթով	117

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ԶԵՅԹՈՒՆՅԱՆ - «Էջմիածին» ամսագրի մատենագիտություն (1984-2000 թթ.)	118
Եկեղեցական բնմ. լուրեր	136
“Эчмиадзин” официальный журнал Эчмиадзинского Католикосата	137
“Etchmiadzin” official monthly of Holy Etchmiadzin	141
“Etchmiadzine” organe officiel du Saint-siège d’Etchmiadzine	144

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄԱՍԻՍ-ՋՈՅՈՒՄ

ԳԱՐԵԳՆԻ

ՏՈՒՆՆԵՐ ԴՐԱՄԱՆ

ՄԱՍԻՍ-ՋՈՅՈՒՄ

ԳԱՐԵԳՆԻ

ՄԱՍԻՍ-ՋՈՅՈՒՄ

(1) Գ - Գ

1888



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԱՇԵՆ ՆԱՅՐԱՊԵՏԻ ՆՈՐԵԼՅԱՆԸ

Բոլորնց Գաբեգին Բ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ծննդյան 50-ամյակը: Այդ հինգ տասնամյակներից ավելի քան երեքն անցել են Հայոց Եկեղեցու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հարկից ներս:

1970 և 80-ական թթ. առաջին կեսին Հայաստանում եկեղեցական կյանքը շարունակվեց այն ընթացքով, որն աստիճանաբար ձևավորվել էր Վազգեն Ա-ի ընտրությանը հաջորդած փարիսերից, երբ Եկեղեցուն պարտադրվել էր ծիսա-արարողական գործունեությամբ խստորեն սահմանափակված մի շրջանակ: Նրանում իսկ, սակայն, Վազգեն Վեհափառն իր իմաստուն քաղաքականությամբ կարողացավ Ս. Էջմիածինը հայ ժողովրդի հոգևոր կենտրոնին վայել բարձրության վրա պահել, որում Հայոց Հայրապետական Աթոռը խորհրդանշում էր մեր ազգային-հոգևոր ինքնությունը:

Ս. Էջմիածինը, սակայն, որպես ընդհանրական կենտրոն որքան խորհրդային Հայաստանի ժողովրդին էր, նույնքան՝ համայն հայությանը:

Այս պայմաններում Երևանը ոչ միայն որպես հայրապետական թեմի առաջնորդանիստ, այլև իր մեկ միլիոնից ավելի բնակչությամբ և շրջանների հեծյալ սերտ կապվածությամբ դարձել էր նաև հոսերապետության ամենօրյա եկեղեցական կյանքի կենտրոնը, ուստի առանձնակիորեն էր կարևորվում Արարապյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդի դերը:

Ուղիղ քսան փարի առաջ Արարապյան Հայրապետական թեմում եկեղեցական ծառայության է անցնում մեր այսօրվա Հայրապետը՝ իր եկեղեցական նվիրյալ ու եռանդուն գործունեության շնորհիվ կարճ ժամանակում արժանանալով Վազգեն Վեհափառի ամենաբարձր գնահատությանը և վստահությանը, ի նշան որի երկու փարի անց երիտասարդ վարդապետը Հայրապետի կողմից նախ նշանակվում է առաջնորդական փոխանորդ, ապա ձևակազմվում եպիսկոպոս: Առաջնորդական նշանակման մասին Հայրապետական կոնդակում ասվում է, որ այն արվել է «ի գնահատումն Ձեր սուկի քան երկու փարիների անձնուէր ծառայութեանց նոյն թեմում, վստահ լինելով, որ Ձեր երկու պաշտօնում պիտի շարունակեք Ձեր եկեղեցաշէն գործունեությունը. Ձեր անձը բնորոշող հոգևոր եռանդով և պարասխանաբարության գիտակցությամբ» («Էջմիածին», 1983, Բ-Գ, Լջ 3):

Վստահաբար կարող ենք ասել, որ այն գործունեությունը, որը Վազգեն Վեհափառը ծավալել էր Մայր Աթոռում, նույնը Գաբեգին Սրբազանը ծավալեց Երևանում և այն ժամանակ Արարապյան թեմն ընդգրկող հանրապետության մի զգալի մասում

և վերադիտել Վազգեն Առաքինի ընդհանրացված բնորոշմամբ՝ «նա Արարապյան թև-մի իբրև առաջնորդ իր հոգածությունը տարածում է նաև այլ եկեղեցիների վրա, և ես ուզում եմ այս առիթը օգտագործել զինքը շնորհավորելու և գնահատելու իր աշխատանքը, և մաղթելու իրեն բաշատոդջություն և անսպառ եռանդ և նորանոր ներշնչանքներ, որպեսզի ծառայի մեր Սուրբ Եկեղեցուն, մեր հավատագրյալ ժողովրդին, մեր Մայր Հայրենիքին» («Էջմիածին», 1987 թ., Թ-Ժ, էջ 10):

Մեր ժողովրդի համար ծանրին և փոթորկոտ 1990-ական թթ. այս գործունեությունն մարմնավորվելու էր Վազգենյան Հոգևոր Դպրանոցով, տասնյակ եկեղեցիների վերանորոգությամբ, նորերի կառուցմամբ ու հիմնարկներով, մի շարք հոգևոր-բարեսիրական և կրթամշակութային ծրագրերով, այդ թվում և բարեգործական ճաշարանների, Հայորդյաց տների, Մանրանկարչության դպրոցի և եամասնաւ հաստատությունների հիմնմամբ, որոնց նպաստակն էր հետաքննություն մղումը ժողովրդի վիճակը և եկեղեցին կենդանի ներկայություն դարձնել հայաստանյան կյանքում:

Նույն այս նպատակով Գարեգին Բ Վեհապետ Հայրապետը դնում Արարապյան թեմում հիմքը դրեց գեղեցիկ մի ավանդույթի՝ թեմական շրջանակում ապրիլի 23-ը հռչակելով նահապետիկ հայ հոգևորականաց հիշատակի ոգեկոչման, Ս. Սարգսի տոնը՝ Լորիտասարդության, իսկ Տյառնընդառաջը՝ նորապսակների օրհնության օր: Նույն կերպ մայիսին շրջանավարդների օրհնության օր հայտարարվեց ժողովրդական տարեվերջի օրը:

Այս արարողություններից վերջին երեքն այսօր ունեն արդեն ընդհանուր հայաստանյան ընդգրկում, Լորիտասարդությանը Ս. Սարգսի տոնի և Տյառնընդառաջի անմոռաց հուշերով կապելով իրենց Մայր Եկեղեցուն, իսկ շրջանավարդների՝ դեպ հաստատություն տանող ճանապարհի խորհրդանշական կերպով սկսելով եկեղեցի սպասարկությամբ և այնտեղ ստացած օրհնությամբ:

Ազգային-եկեղեցական սրբագրմամբ ժողովում ընտրվելով Հայոց Հայրապետ, Նորին Սիրությունն արդեն համահայկական ընդգրկմամբ ու հնչեղությամբ Լ շարունակում եկեղեցաշեն այս գործունեությունը:

«Էջմիածին» ամսագրի խմբագրության կողմից մեր բարեմադոթանքները միացնելով Գարեգին Երկրորդի ծննդյան 50-ամյակի առիթով այս օրերին սպասվող շնորհավորական բազմախաղաղ հեռագրերին, որդիական խոնարհությամբ Նորին Սըրբությանը կցանկանալինք 1710-ամյակի խորհրդով և լուսաշավիղ ընթացքով հայրապետական արդյունաշատ արտումների նորանոր տասնամյակներ՝ ի փառս հայ ժողովրդի և Հայաստանի Հանրապետության, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և նրա հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի:



ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ
ԵՎ
ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐ
Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԾՆՆԴՅԱՆ 50-ԱՄՅԱԿԻ
ԱՌԻԹՈՎ

ԵՐՈՒՄԱՂԵՄԻ ԵՎ ԿՈՍՏԱՆԴՆՈՒԴՈՒՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԵՐԸ



ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ, Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ-ԻՆ

Վեհափառ Տեր.

Հաճեյի էր անակնկալորեն փեսանել Հայաստանի Հեռուստատեսիլի վրա Վեհիդ ծննդյան 50-ամյակի նշումը, որ գոեունակության և բարի մատթանքի առիթ մըն է Հայաստանյայց Եկեղեցվո զավակներուն համար:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գաեակալը խորհրդանիշն է հայ ժողովուրդի հոգեվոր և մշակութային կյանքին աշխուժության, հարադաման և աննաեանջ հարազատության, իր պատմության անխորտակելի շղթային իբրև հավաքարիմ ու հարազատ արարաեայություն:

Սուրբ Գրիգոր Լուսավորչի հոռ Վիրապին հավաքքի, հույսի և սիրո լապտերին լույսը, իբրև մշտավառ կանթեղ, Վեհիդ ձեռքով սփռվեցավ ի Հայաստան և ի սփյուռքս ցրվյալ հայ ժողովուրդի զավակներուն: Մա Աստվածային օրհնություն է և երաշխիք, հավատալու, հուսալու և սիրով ակնկալելու, որ Տերը Վեհիդ կյանքին ճանապարհը լուսաշավիղ պիտի հարդարե:

Մեր մատթանքն է, որ Վեհիդ Հայրապետական Գավազանը ծաղկյալ մնա միշտ Ձեր անխոնջ նվիրումին իբրև պսակում, Մայր Հայրենիքի վերելքին նպաստող և հայ ժողովուրդի Զրիստոսաեստատար Մայր Եկեղեցիին առաքելությունը և աստվածաեան ծառայությունը անդադրում հառաջընթացով ծավալող:

Տերը պարզևե Վեհիդ առողջ և արդյունավետ րարեղարձներ:

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊՍ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԵՐՈՒՄԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ .



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ուրախությամբ տոնյակ դարձանք, որ այսօր կնշվի Սուրբ Օծությանդ ծննդյան 50-րդ տարեդարձը:

Այս երանագեղ առիթով, Մեր և Պապրիարքական Աթոռույս կրոնական ժողովուրդ անդամներուն անունով կու գանք Ձերդ Սրբության արնշաություն և հաջողություն մատթելու, աղոթելով միանգամայն, որ Բարձրյալն Աստված զԵպիսկոպոսապետ զպատվական Հայրապետդ շնորհեսցե մեզ «ընդ երկայն առօրս ուղիղ վարդապետութեամբ»:

Քրիստոսավանդ եղբայրական սիրով մնամք՝

**ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՂՍ. ՄՈՒԹԱՅՅԱՆ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԷ**

ՀԱՄԱՅՆ ԱՌԻՄԻԱՅԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳՐԵՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Ձերդ Սրբություն.

Սրբանց շնորհավորում եմ Ձեզ նշանակալից հորեյանի առթիվ. որն այժմ հանդիսավորապես նշում է ողջ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին:

Վկայակոչելով Պաղոս առաքյալի «Անդադար հիշելով ձեր հավատի գործը, սիրտ վաստակը և հույսի համբերությունը մեր Տեր Հիսուս Ջրիստոսի, Աստծու և մեր Հոր առաջ» (Ա Թ-ես. Ա 3) խոսքերը, մենք ուրախությամբ բերում ենք Ձեզ Մեր եղբայրական համայնքը, գոհություն հայտնելով Տիրոջը, որ մեզ պարգևել է մեր Եկեղեցիների միջև հաստատված բազմադարյան պարմական բարեկամությունը:

Թույլ տվեք, Ձերդ Սրբություն, նաև Ռուս Պրավոսլավ Եկեղեցու համար այս ուրախալի օրը Ձեզ մաղթել աստվածային առաք զթասություն և քաջատոգություն, հոգեկան ու մարմնավոր հավատքի ամրություն՝ հաջողությամբ հովվելու Ձեր աստվածապետը հոգը ի բարօրություն ողջ հայ ժողովրդի:

Ձերդ Սրբության համար աղոթքով և ի Տերն մեր Ջրիստոս եղբայրական սիրով՝

ԱԼԵՔՍԻ Բ

ՍՈՒՆԿԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՌԻՄԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Ձերդ Սրբություն.

Ընդունեցեք իմ ամենազերմ ու սրտագին շնորհավորանքները Ձեր ծննդյան օրվա առթիվ: Անկեղծորեն ցանկանում եմ Ձեզ քաջատոգություն, երկար տարիների կյանք և հաջողություններ:

Եղբայրական սիրով՝

ԻԼԻՍ Բ

ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԵՐԸ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ, Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻՆ

Վեհափառ Տեր.

Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ Ձեր ծննդյան 50-րդ փարեղարձի կապակցությամբ:

Մաղթում եմ Ձեզ բաջառողջություն և անսպառ եռանդ հովվապետական Ձեր վեհ առաքելության իրականացման ողջ ընթացքում: Մաղթում եմ բեղմնավոր գործունեություն, որն արժանի շարունակությունն է լինելու Հայոց մեծագույն Հայրապետների հայրենակներ ու սրբազան գործի:

Շնորհավորելով Ձեր հորեյանի առթիվ՝ թույլ տվե՛ք համոզմունք հայտնել, որ 1700-ամյա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Ձեր հովվապետությամբ նորոգ շնչով իրականացնելու է իր հոգևոր ծառայությունը հանուն հայրենի և աշխարհասփյուռ մեր ժողովրդի, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու և Հայաստանի բարգավաճման:

ՌՈՒԲԵՐՏ ՔՈԶԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ, Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻՆ

Վեհափառ Տեր.

Շնորհավորում եմ Ձեզ Ձեր ծննդյան 50-ամյակի առթիվ: Խորհրդանշական է, որ Ձեր հորեյանը համընկնում է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի հետ, փոխ, որը հավաստաբաշխ նշում են թե՛ Եկեղեցին, թե՛ պետությունը՝ իբրև հայ ժողովրդի գոյարևման, ազգային ինքնության պահպանման կարևորագույն երաշխիքներից մեկը: Հանրաքաղաք է այն մեծ դերակատարությունը, որ Դուք, Վեհափառ Տեր, ունեցել եք անկախ Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո Եկեղեցու և պետության փոխադարձությունների սերտացման, ժո-

դավրդին հուզող խնդիրների լուծման գործում: Համոզված եմ, որ Ձեր աստվածահաճո ղեկավարությամբ 1700-ամյա Հայ Առաքելական Եկեղեցին կշարունակի հաջողությամբ կենսագործել համագային նպատակների, քրիստոնեական հավատի, անկախ պետականության շարք ժողովրդին համախմբելու այն նվիրական գոյծը, որ դարեր առաջ սկզբնավորել են մեր ժողովրդի աշխարհիկ և հոգևոր մեծերը:

Ի սրբեցանում եմ Ձեզ քաջատոգչություն, անսպառ ուժ ու եռանդ՝ երկար փառքներ առաջնորդելու հավատարմացի հայ ժողովրդին՝ ի փառս Հայ Առաքելական Եկեղեցու, հեծազա բարգավաճման, Հայոց անկախ պետականության ամրապնդման և հայության հավերժական գոյության:

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ
Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԾՈՂԻԿՈՍԻՆ

Վեհափառ Տեր.

Ի խորոց սրբի ընդունեք Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի և անձամբ իմ ջերմագույն շնորհավորանքներն ու բարեմաղթանքները Ձեր եհնամյա հոբելյանի առիթով:

Ձեր անհոգնաբեկ գործունեությունը արդյունավորվում է ազգագույր և աստվածահաճո բազում ձեռքբերումներով, ակնհայտ են Ձեր ներդրումները Հայ Առաքելական Եկեղեցու վերագարթոնքում, վերանորոգության ու միաբանության մեջ ինչպես Հայրենիքում, այնպես էլ սփյուռքում:

Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելու 1700-ամյակի խորհրդով հոբելյանագարդ ու այդ սուրբ փառելիցի շնչով նորոգ այս օրերին ցանկանում ենք, որ Փրկչի օրհնությունը հովանի լինի մեր ժողովրդի զավակաց ի Հայաստան, ԿԱՐԳԱՅԻ և ի Սփյուռս, ու մեր հինավուրց Հայրենիքում վերակենդանի հզոր ու ինքնիշխան պետությունը:

Ան Աստված ապավինությամբ հավատում ենք, որ մեր ողջ ժողովրդի սերը և Ձեր ղեկավարությամբ հոգևոր դասի նվիրումը ծանոթալ Հայ Առաքելական ազգային Եկեղեցու, հայրենի մեր պետության գորակցությամբ, մեզ պիտի ապառնովն հաջողումը Ձեր ջանքերի՝ արժանի բարի համբավ բերելու Ձեր անվանը:

Բարձրալի հովանին ու օրհնությունն ենք հայցում Ձեզ պարգևելու քաջատոգչ արևշատություն, լիապարուն երջանկություն և անսպառ եռանդ:

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ



**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ
Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՍՆ**

Վեհափառ Հայրապետ.

Թույլ տվե՛ք ԼՂՀ իշխանությունների ու ժողովրդի անունից շնորհավորել Ձեր ծննդյան օրվա առթիվ:

Արցախյան գոյամարտի հերոսական տարիներին մենք մշտապես զգացել ենք Հայ Առաքելական Եկեղեցու սատարումը, որովհետև մեր պայքարը եղել է հանուն հայրենիքի ազատության, մեր ազգային ինքնության ու քրիստոնեական հավատի պահպանման:

Մենք լավ ենք հիշում Ձեր հովվապետական այցն Արցախ, Ձեր ոգեկոչ խոսքն ուղղված իր ավերված ոստանը վերականգնող, իր անկախ պետականությունը կերպրող ու գորացնող ժողովրդին:

Մենք երախտագիտությամբ ու խոնարհումով ենք ընկալում Ձեր բարձր վերաբերմունքն Արցախի հավատարմացի ժողովրդի նկատմամբ:

Վեհափառ Տեր.

Կրկին անգամ շնորհավորում ենք Ձեզ ծննդյան օրվա առթիվ, մաղթում քաջամտությու, արևշատությու, բեղուն և արգասավոր գործունեությու՝ ի շահ Հայոց աշխարհի, մեր ազգային նպատակների:

ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

ՕԼԵԳ ԵՍՍՅԱՆ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԵՐԸ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐԶ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ձերդ Սրբություն.

Ընդունեցեք Ձեր ծննդյան եիսնամյակի առթիվ իմ անկեղծ շնորհավորանքները:

Ռուսաստանում Ձեզ ճանաչում և գնահատում են որպես ռուս-հայկական քաղ-մադարյան բարեկամության ակտիվ ջարագովի, մի մարդու, որ մեծ նպաստ ունի Կովկասում խաղաղասիրական գործունեություն ծավալելու մեջ:

Այս տարի Հայաստանում նշվում է քրիստոնեության ընդունման նշանակալից 1700-ամյակը: Վստահ եմ, որ Ձեր հովվապետությամբ Հայ Առաքելական Եկեղեցին առաջիկայում էլ կնպաստի հայ ժողովրդի բարոյական իղեալների ու սլափմական հարուստ ավանդույթների հեղափոխ ամրապնդմանը:

Ձերդ Սրբություն, ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն, երջանկություն և քրիս-տոնեական անանց արժեքներին և ձեռքբերումներին ծառայելու գործում հեղափոխություններ:

ՎԱՐԴԻՄԻՐ ՊՈՒՏԻՆ

ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐԶ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ձերդ Սրբություն.

Ձեր ծննդյան եիսնամյակի առթիվ ընդունեցեք ամենաանկեղծ շնորհավորանք-ներս: Ռուսաստանում Ձեզ ճանաչում են իբրև ռուս-հայկական բազմադարյան բարեկամության ամրապնդման ջերմ կազմակերպի, իբրև բարձր հեղինակություն ունեցող հոգևոր գործչի, որը մեծ ավանդ ունի Անդրկովկասի խաղաղության ու բար-գավաճման գործում:

Ձերմոլեն եմ հիշում մեր հանդիպումները Էջմիածնում: Ինձ վրա անջնջելի տալա-վորություն են թողել Ձեզ հետ իմ զրույցները, այս տարի իր 1700-ամյակը տոնող Հայ Առաքելական Եկեղեցու գլխավոր Տաճար այցելությունը և հայ եկեղեցական զանգեքը:

Ցանկանում եմ Ձեզ, Ձերդ Սրբություն, առողջություն, երջանկություն և հեղափոխ իրագործումներ Ձեր բարձր ծառայության մեջ:

ԻԼՅԱ ԿԼԵՄԵՆՈՎ

ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱԳԵՏ

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐԺ-ԿԱԹՈՂԻԿՈՍՈՆ**

Ձերդ Սրբություն.

Սրտագինս շնորհավորում եմ Ձեր ծննդյան օրվա առթիվ, ցանկանում եմ առողջություն և երկար տարիների կյանք, Ձեզ և ձեր երկրին՝ խաղաղություն, բարեկեցություն և ծաղկում:

Դուք ողջ հայ ժողովրդի հոգևոր հայրն եք: Դժվար է գնահատել այն ավանդը, որ Դուք ներդրում եք վրաց և հայ ժողովուրդների միջև դարավոր խաղաղության ամրապնդման. ջերմ ու հոգևոր կապերի պահպանման գործում: Ամբողջ սրտով ցանկանում եմ Ձեզ, որ առաջիկայում էլ աստվածային սիրով հազեցած Ձեր խոսքը հաղորդեր Ձեր հոտին, հավատը, հույս ու սեր սերմանեք մարդկանց սրտերում:

**ԷԴՈՒՄԱՐԴ ՇԵՎԱՐԴՆԱՉԵ
ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ**

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐԺ-ԿԱԹՈՂԻԿՈՍՈՆ**

Թույլ տվեք սրտանց շնորհավորել Ձեր ծննդյան 50-ամյակը: Էս և իմ գործընկերները Ձեզ ճանաչում ենք որպես մի մարդու, որը հարգված և սիրված է ողջ հայ ժողովրդի կողմից, որի հետ Վրաստանի ժողովրդին միացնում է բազմադարյան անխախտ բարեկամությունը:

Թույլ տվեք, Ձերդ Սրբություն, մեկ անգամ ևս շնորհավորել Ձեզ և ամբողջ սրտով ցանկալ բաջառողջություն, երկար տարիների կյանք և Ձեր պատասխանատու գործունեության մեջ հաջողություններ՝ հանուն եղբայրական հայ ժողովրդի հոգևոր վերածնության:

**ԶՈՒՐԱՐ ԺՎԱՆԻԱ
ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՂԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ**



ՄԱՇՏՈՅԻ ՄԼՎԱԼ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՎԵՏԱՓԱՌ-ՎԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ ՀԻՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Միրելի Վեհափառ Տեր,

Մեսրոպ Մաշտոցի անվան Մալենադարանի գիտական խորհուրդը, բոլոր աշխատակիցները և անձամբ ես սրտանց շնորհավորում ենք Ձեզ՝ ծննդյան հիսունամյակի կապակցությամբ:

Ձեր կյանքի անցնող այս հիսուն տարիների կեսից ավելին սերտորեն կապված է եղել նաև Մաշտոցյան Մալենադարանի հետ, ուր Դուք նախ որպես Գևորգյան ճեմարանի սան եք այցելել և հաղորդվել մեր ազգային-հոգևոր բազմադարյան արժեքներին: Այնուհետև Ձեր հոգևոր սպասավորության ու եկեղեցական ձեռնադրության տարիճաններով վեր բարձրանալիս և հատկապես Արարապյան հայրապետական թեմի առաջնորդական փոխսնորդության շրջանում Ձեր այս կապվածությունն արդեն հայտնի է ինչպես մալենադարանական, այնպես էլ արքեպիսկոպոսական:

Հայոց Հայրապետական Աթոռի գահակալ ընտրվելուց հետո Ձեր այս վերաբերմունքն արդեն վերածվեց հայրապետական հոգածության:

Բրիտանական թանգարանի և միջազգային ու համաշխարհային ճանաչում ունեցող մյուս հաստատությունների նման Մալենադարանը ևս սրբոյն է իր «Բարեկամների միություն»-ը՝ ակնկալելով համայն հայության, ինչպես նաև արքեպիսկոպոսների այն անձանց ու կազմակերպությունների օժանդակությունը, ովքեր ցանկանում են իրենց նպաստը բերել հայկական ձեռագրերի ուսումնասիրությանը և անխաթար պահպանությանը:

Ուրախությամբ պետք է ասենք, որ «Մալենադարանի Բարեկամների Միություն» պարզավոր նախագահն եք Դուք, և լիաժողով ենք, որ Ձեր բոլորանվեր աջակցությունն եք բերելու և Ձեր բարձր հեղինակությամբ նպաստելու եք Մաշտոցյան Մալենադարանին ծառայող այս հիմնադրամի կայացմանը:

Մալենադարանը, որպես Ս. Էջմիածնի հոգեհարազատ գավակ, մեր բազմադարյան հոգևոր մշակույթի, ձեռագիր մատյանների պահպանության, ուսումնասիր-

ման և հրապարակման գործը ստանձնած համագգային կենտրոն, լիափութ է, որ Ձեր գաղափարության փարիներին ավելի կամրապնդվեն և կսերտանան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Մաշտոցյան Մատենադարանի գիտական, գործնական և հոգևոր կապերը, մի համագործակցություն, որի հիմքերը դրել են Ձեր անմիջական նախորդները Երջանկափառական Վազգեն Ա և Գարեգին Ա Կաթողիկոսները:

Ցանկանում ենք Ձեզ, Վեհափառ Տեր, քաջառողջություն, արևշափություն, ուժ ու կորով՝ մեր Սուրբ Եկեղեցուն և ժողովրդին ծառայելու վսեմ գործում:

Ս. Ս. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ ՀԻՍՈՒՆԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Հոբելյանազարդ այս տարվա օգոստոսի 21-ը մի նոր, առավել տոնական, համազգային շուքով նշվեց Մայր Աթոռում, քանզի Ամենայն Հայոց Հայրապետը բոլորեց իր հիսունեորդ տարեդարձը:

Վեհափառ Հայրապետը 50 տարեկան է:

Դեռ վաղ առավոտից արտասովոր եռուզեռ էր Մայր Աթոռում, աշխուժություն և ուրախություն էր տիրում ամեն տեղ, ամենքի դեմքին զգալի էր ցնծության մի փայլ, որը տարբեր էր դարձնում այդ օրը սովորական յուրաքանչյուր օրվանից. բոլորը անխտիր՝ հոգևորական թե հավատացյալ, փայլում էին ուրախության ու գոհունակության մի այլ զգացումով, որովհետև յուրաքանչյուրն առիթը պիտի ունենար անձնապես շնորհավորելու, իր սրտի զգացումները փոխանցելու Նորին Սրբությանը, ինչպես նաև ստանալու Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

Այս առիթով հանդիսությունը սկսվեց առավոտյան ժամը 10-ից, երբ Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ի երգեցողության հնչյունների ներքո մուտք գործեց Մայր Տաճար, ուր կատարվեց Հայրապետական մաղթանք: Մեկ անգամ ևս բոլոր ներկաները աղոթք բարձրացրին առ Աստված՝ «Աստվածակառույց և անհաղթելի Մեծ Աթոռի հաստատունության, անասամության», ինչպես նաև Նրա արժանավոր Գահակալի՝ «համերամ ժամանակօք ապահով անդորրութեան» համար: Հայրապետական մաղթանքի ավարտին վանքի երիցագույն միաբան Տ. Հուսիկ արքեպս. Սանթրույանն իր և բոլոր ներկաների անունից շնորհավորեց Վեհափառ Հայրապետին՝ բարձրորեն գնահատելով Վեհափառ Հայրապետի հոգևորական գործունեության շրջանը, և այն որակեց որպես եկեղեցաշինության ու հոգևոր վերարթնության ժամանակահատված մեր եկեղեցու և ողջ ժողովրդի համար:

Ամբողջ օրը մարդաշատ էր Մայր Աթոռը թե՛ հավատացյալներով և թե՛ պաշտոնական պատվիրակություններով: Յուրաքանչյուրի փափագն էր զոհն մի համեստ աջահամբույրով իրենց սերն ու նվիրումը հայտնել Վեհափառ Հայրապետին՝ մի նոր ուրախության առիթ տալով Նորին Սրբությանը: Հոսքը դեպի Վեհարան շարունակվում էր ողջ օրվա ընթացքում, և այնտեղից վերադարձող յուրաքանչյուրի դեմքին փայլող ժպիտից կարելի էր ենթադրել, որ անմիջաբար Վեհափառ Հայրապետի ընդունելությանն և խոսքին է արժանացել:

Հանդիսության պաշտոնական արարողությունը սկսվեց ժամը 17.00-ին, Վեհարանի հանդիսությունների դահլիճում: Հայաստանի Հանրապետության հիմնից և Տերունական աղոթքից հետո բացման խոսքով հանդես եկավ օրվա հանդիսավարը՝ Տ. Հովնան արքեպս. Տերտեռյանը.

«Վեհափառ Տեր.






ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ Ա. ԷԶՐԵԱՆԻ ՄԱՍԻՍՏՆԻՍ




1700-ԱՄՐԱՍՅԱԿԻ ՆԱԽԴԻՍՈՒԹԱԶՈՒՆՆԵՐԻ ԳԻՂԱՍԵՆՑԱԿԻ ՎԱՌԻՉ-ՔԱՐՏՈՒՂԱՐ
Տ. ՆՈՎԱՆԸՆ ԱՌԲԵՐԻՍԱԿՈՒՄ ՏԵՐՏԵՐՑՄԱՆԸ ՇՆՈՐՀԱԿՈՐԱԿԱՆ ՀԱՄԱՔ ԱՍԵՆԻՍ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԱՆՈՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԸ
ՇՆՈՐԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔ ԱՍԵԼԻՍ





Այս պահանջները, որոնք չեն համարվում իրականացված, չեն համարվում իրականացված

ՈՒԿՐԱՅԻՆ ՔՈՍՏՅԱԿ ՎԵՐՈՒՄԵՆԻՆԻՆԻՆԻ ԽՈՍՏՅԱՆԻՆԻՆԻ



Այս երեկոյն թուրքերն անկախ չեն պատկերում՝ տոնելու համար Ձեր ծննդյան 50-ամյակը և աղոթք բորժրացնելու առ Աստված գոհարանական մաղթանքով, քանզի Ձեր կյանքի տարիները Դուք ընծայաբերած եք Աստուծո՝ յոթ խորհուրդներով խմորված:

Հայոց Եկեղեցին, որուն առջև ծառայած՝ լուսի ճանապարհին եք որոնած ու այդ լուսին առաջնորդությամբ հասած եք Ս. Էջմիածին և նվիրական այս հողին վրա կանգնած՝ Ձերո՛ւ Սրբության Էության մեջ թրծած եք մոր պատգամ մեզի ու զայլք սերունդներուն:

Հավատքի անասան վեմ, առաքելահաստատ Հայոց Եկեղեցին հայ հոգու ծննդավայրն ու պատվարն է, փրկության տապանը, որ Ավետարանի լույսով ու հայրենի ավանդներով սնում, մորոգում ու զորացնում է ազգային մեր կյանքը, կերտում միության մեր տաճարը: Հավատք, որը դրսևորված է Ձեր հովվական կյանքով ու այսօր կշարունակեք դրսևորել մոր իրազործումներով, որպես Հայրապետ Հայոց՝ եղած է Ձեր հոգևոր կյանքին մղիչն ու շարժիչը:

«... չկա՝ մեզ մահ, քանի դեռ մեր գործերում ապրում է մեր հավատը, քանի դեռ հայոց պատմության ընթացքով հաղթականորեն անցնում է լուսեղեն թափորը Հայ Եկեղեցու՝ ճառագելով հավատք ու խմորելով հոգի, հավատարմորեն պահելով մեր ժողովրդի ընթացքը դեպի Աստված»:

Քրիստոնեությունը պատգամած եք որպես կյանքի ճանապարհ, որը ինչքան հստակ ու խորը կերպով հաղորդած եք. «Քրիստոսի խաղաղությունը, որը համակ սեր է, լույս և հավատք, անենք վեմ է մարդկային կյանքի կայուն և համապարփակ խաղաղության, այն վեմը, որի վրա «ողորմություն եւ ճշմարտություն պատահեցին, արդարություն եւ խաղաղություն համբուրեցին»:


Հայ ժողովուրդ, որուն ծառայելու պատիվը դարձուցած եք մաս հաղորդություն մորահաս մեր սերունդին, և այդ մույն կրակով լեցուցած հոգիները մանավանդ արտաշխարհ ապրող մեր ազգի զավակներուն, որով Հայոց Հայրապետի անձին մեջ կտեսնեն անձնավորումը Հայրենիքին ու Ս. Էջմիածնին, գերազույժ այն խորհուրդները, որոնք մեր կյանքի սրբություններն են:

«Մեր ժողովուրդը աղոթքով կարող է հրաշքներ գործել»:

«Հավատես եմ որպես Հայոց Հայրապետ: Հավատում եմ մեր ժողովրդի ստեղծարար ուժին, հանճարեղ մտքին ու կառուցող քաղուկին, հպարտ եմ նրա կենսահաստատ ոգով, զոհաբերելու, համբերելու, հաղթահարելու և հաղթելու կամքով, ինչ եմ մխիթարությամբ, քանզի մեղությունների և հոգսերի մեջ լցված ենք հույսով, և ամուր է զայլիքի հանդեպ մեր հավատը՝ խարսխված աստվածային սիրույն, որ «ոչ երբեք անկանի»:

Հոգևորականի կոչումը, որ ծնած է Ձեզ հետ, և որը մոր ծնունդներ կապրի այսօր մորահաս հոգևորականներու հոգիներուն մեջ, և որուն հրավերն ու կոչը կկարդաք անխտիր թուրքիս:

«... Հոգևորականացս առաքինությունը առավել դժվարին է ներկայիս նյութապաշտ և աշխարհայնացած կյանքի պայմաններում, քանզի կոչված ենք մեր անձը



օրինակ դարձրած՝ անձնականը սուգած անանձնական մեր ձգտումներում ու տեսիլքներում, Ավետարանի կենսապարզ խոսքին հավատարիմ պահել մեզ վստահված Քրիստոսի հոտը»:

Հայրենիք, որը լուկ սուրբ ու նվիրական հող ըլալեն անդին, դարձած է Ձեր կյանքի առաքելությունը, որում հավատացած եք Ձեր իսկ քառերովը հաստատված այս խորիմաստ բանաձևումին մեջ. «Աստվածապարզն է հայրենիքը, երկնաշնորհ»:

Կյանք, որում առջև խոնարհած եք որպես Աստուծո կողմն ընծայված մեծագույն պարգևը: Բավական է լսել Ձեր այն խոսքը, որում մեքեն կարձագանքե մոր մարտահրավեր մը. «Մահ իմացյալ մահ է» կարգախոսը պիտի փոխվի մեր ժաղովորդի համար, այսուհետև պիտի ասենք. «Կյանք իմացյալ անմահություն է»:

Առ Աստված առաջնորդվելով, այս յոթ խորհուրդներում մեջ հարաժամորեն մորակնունք դարձող Հայրապետին ծննդյան 50-ամյակը կտոնենք այսօր: Ուրախության մեջ է այսօր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո մեծ ընտանիքը, քանզի տեսիլքով կըմբռնենք, որ մոր արշալույս մըն է բացված մեր կյանքի առջև, որում խորհուրդը կխոսի ու կփայլի Ձերդ Վեհափառության անձին մեքեն: Ջերմ զգացումներով, բարի մաղթանքներով ուրախակից կդառնանք Ձեզի՝ Ձեր ծննդյան 50-ամյակի տոնական առթիվ, ու Ձեզի հետ միասին մենք ևս կնորոգվինք որպես հարազատ զավակները Հայաստանյայց Եկեղեցվո, որում հայրն եք Դուք և այսօրվան փոխանցողը Հուսավորչի կանթեղի լույսին:

Օրհնեցե՛ք մեզ, Վեհափառ Տեր»:

Սրբազան Հոր բացման խոսքից անմիջապես հետո «Նարեկ» երգչախումբը, ղեկավարությամբ Մկրտիչ Մկրտչյանի, կատարեց Կոմիտասի «Ընտրեալդ Աստուծոյ» երգը: Այնուհետև հանուն միաբանության շնորհավորական խոսք ասաց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, որին հաջորդեց երգչախմբի «Սուրբ ես, Տէր» երգի կատարումը:

Այա ՀՀ ճախագահի շնորհավորական գիրն (տե՛ս էջ 9) ընթերցեց ՀՀ ճախագահի աշխատակազմի ղեկավար Արտաշես Թումանյանը: Ռուսաստանի Դաշնության ճախագահի և Մոսկվայի ու Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Բ-ի շնորհավորական գրերը ընթերցեց ՀՀ-ում ՌԴ դեսպան Ամատուլի Դրյուկովը: Համայն Վրաց Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ի շնորհավորական ուղերձն ընթերցեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը: Շնորհավորական իր ուղերձն ընթերցեց ՀՀ վարչապետ տիար Անդրանիկ Մարգարյանը (շնորհակալական այս գրերը տե՛ս էջ 6-14): Այնուհետև ցերեկամերին իրենց կատարումներով մեծ հիացմունք պատճառեցին «Նոր անուններ» ծրագրի պատանի երաժիշտները՝ ղեկավարությամբ Սիլվա Մեքինյանի: Իրենց սրտի զգացումներն ու շնորհավորանքի խոսքերն ասացին Սահմանադրական Դատարանի ճախագահ տիար Գազիկ Հարությունյանը, 1700-ամյակի պետական հանձնաժողովի փոխնախագահ տիար Խոսրով Հարությունյանը, Ազգային Ակադեմիայի ճախագահ տիար Ֆադեյ Սարգսյանը, Մեսրոպ Մաշտոցի անվան Մանենդարանի տնօրեն ակադեմիկոս Սեն Արևշատյանը, Ռուսաստանի հայերի մի-


ությանց մախազա՞ն տիար Արա Աթրափամյամը, Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմական խորհրդի փոխատեմապետ տիար Գեորգի Տեր-Ղազարյանը: Ընթերցվեցին մահ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության մախազա՞ն տիար Արկադի Ղուկասյանի, ՀՀ Ազգային Ժողովի մախազա՞ն տիար Արմեն Սաչատրյանի, Ռուսաստանի Դաշնության Հարավային մարզերում մախազա՞նի մերկայացուցիչ տիար Կազանցևի, Սանկտ Պետերբուրգի մահամզապետ տիար Յակովլևի, ինչպես մահ թեմական առաջնորդների և դիվանագիտական մերկայացուցիչների շնորհավորական գրերը:

Հավարտ հանդիսության վեճափառ Հայրապետն իր շնորհակալության և օրհնության խոսքն ասաց Պետկաներին:

«Հարգելի մերկաներ. գիտեմ, ինչ է մշահակում այս շոգին մտնել այս հարկի տակ մեկուկես և ավելի ժամ: Ծանկանում եմ իմ շնորհակալությունը և իմ գնահատանքը հայտնել ամենքիդ, որ ընդառաջել եք հրավերին այս հորեղյանական հանդիսությունը կազմակերպող հանձնաժողովի և եկել Ձեր հարգանքը, ձեր սերը մատուցելու Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Հայրապետին: Ես ուզում եմ առանձնահատուկ կերպով իմ շնորհակալությունը հայտնել Հայաստանի Հանրապետության Նախագահին իր ջերմ բարեմաղթանքների համար, Ռուսաստանի Դաշնության Նախագահ տիար Վլադիմիր Պուտինին, Նորին Սրբություն Ալեքսի Բ-ին, Նորին Սրբություն Իլիա Բ Կաթողիկոսին՝ իրենց եղբայրական ազնիվ զգացումի և ջերմ բարեմաղթանքների համար: Իմ խորին երախտագիտությունը բոլոր մրանց, ովքեր այստեղ ելույթ ունեցան, Հանրապետության վարչապետին, Սահմանադրական դատարանի մախազահին, 1700-ամյակի պետական հանձնաժողովի փոխմախազահին, Ազգային Ակադեմիայի մախազահին, Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրենին, մեր հոգևոր հայրերին և եկեղեցական վարչությանց ատենապետներին և բոլոր մրանց, ովքեր հեռագրերով, հեռախոսազանգերով իրենց բարի ցանկությունները փոխանցեցին մեզ 50-ամյա հորեղյանի առթիվ: Իմ գնահատանքն ու շնորհակալությունը գեղարվեստական խմբերին, որոնք իրենց գեղեցիկ կատարումներով ուրախացրին մեզ և մի որոշ պահ մոռացության տվեցին այս դահլիճի շոգը: Իմ շնորհակալությունը հորեղյանական հանդիսությունը կազմակերպող հանձնաժողովին՝ Հովնան Սրբազանին, Արշակ Հայր Սուրբին և մնացյալ անդամներին: Հավանաբար մտածումը իրենց այն էր, որ այս հանդիսությունը շնորհավորանքների և բարեմաղթանքների փոխանցմամբ անդրադարձումի հրավիրեն Հայոց Հայրապետին Հայ Եկեղեցու առաքելությանը անհրաժեշտ աշխատանքների վերաբերյալ, որ այսօր ծառացել է Հայ Առաքելական Եկեղեցու առջև և պահանջում է իր անսխեղական լուծումը, որպեսզի Հայ Եկեղեցին հայ ժողովրդի կյանքում լիարժեքորեն կարողանա իրականացնել իր առաքելությունը, իր պատմական առաքելությունը, որին ահա կոչված է հազար յոթ հարյուր և ավելի տարիներ: Հիսնամյա հորեղյանի այս հանդիսության առիթով, բնականաբար, հոգուս առաջին զգացումը, երախտագիտությունն է: Երախտագիտություն երկմավոր իմ Հորը, որ կյանք է պարգևել ինձ և առաջնորդել հոգևոր ասպարեզ՝ ծառայելու իր հավատավոր, իր



1990-1991 թվականներին Երևանի մարզպետի պալատում
 Երևանի մարզպետի պալատում





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՐԻՍՏԻԱՆ ԵԿԵՔԵՐԵՆԻՍՏԱՆԻ
ԵՊԻՍԿՈՍՈՍՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ
ԿԱԶՄԱՆԻ ԿԵՆՏՐԱԼ ԿԱՐԴԻՆԱԼ
ԿԱՐԴԻՆԱԼ ԿԱՐԴԻՆԱԼ ԿԱՐԴԻՆԱԼ



1700-ՄԵՐՈՍԿԻ ՆԱՆԴԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՏԱԿԱՆ ՆԱԶԱՐԱԳՈՐԾԻ ՆԱԽԱԳԱՐ
ԽՈՄԵՐՈՎ ՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՄԵՆԸ ԵՆՈՒԱԿՈՒՐԱԿԱՆ ԽՈՄՔ ՍՈՍՆԻՍ

ՈՐԴԻԱԿԱՆ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԽՈՍՔԵՐ

ՊԵՏՐՈՍ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍ.**

**ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ
ՈՒՐՎԱԳԻԾ**
(Ծննդյան 50-ամյակի առթիվ)

1999 թ. հոկտեմբերի 27-ին, երկու հազարամյակների սափմանագծին, Կրդի ունեցան Հայոց Եկեղեցու նոր գահակալի ընտրությունները: Նույն օրը, ժամը 15.30-ին, Ազգային-եկեղեցական սրբագումար ժողովի 445 պարզամտվորներ, Մայր Տաճարի Իջման Սուրբ Մեղանի շուրջ համախմբված, Ամենակալ Աստծո և Սուրբ Ավետարանի առջև երդվեցին կաթողիկոսական թեկնածուներից Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրել արժանավորին: Քվեների հաշվումից հետո, ժամը 18.45-ին, բարձր ու հնչեղ դողանջեցին Մայրավանքի զանգերը՝ ի լուր ամենքի ավետելով Հայոց Ընդհանրական Մայր Աթոռի նոր գահակալի ընտրությունը: 48 փարեկան հասակում Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվեց Արարադյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ, Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը: Ուր օր անց, նոյեմբերի 4-ի հինգշաբթի օրը, «Սրբոց Հայրապետացն Մեղրոփանոսի, Աղեքսանդրոսի, Պօղոսի խոստովանողին եւ նօտարացն Մարկիանոսի եւ Մարտիրոսի» փոնի օրը, Կրդի ունեցան Գարեգին Բ Ամենայն Հայոց նորընտիր Կաթողիկոսի ձեռնադրման և օծման արարողությունները:

Լուսավորչի Աթոռի նոր գահակալը թեև իր երիտասարդ տարիքին, չափազանց հայտնի և հարգված անուն էր ոչ միայն Հայոց, այլև քույր եկեղեցիներում: Հարգանք և սեր, որ նա վաստակել էր իր հոգևոր-եկեղեցական գործունեության նախընթաց 30 տարիների ընթացքում:

Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդը (ավագանի անունով՝ Կրդիճ) ծնվել է 1951 թ. օգոստոսի 21-ին Էջմիածնի շրջանի Ոսկենապ գյուղում, հավատացյալ ծնողների բարեխաշտ ընտանիքում: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի միջնակարգ դպրոցում: Ուսումնառության ընթացքում ցուցաբերել է փայլուն առաջադիմություն՝ դեռևս ուսումնական տարիներից մեծ հեղափոխություն հանդես բերելով հոգևոր-կրոնական և Հայոց Եկեղեցու պատմությանը վերաբերող հարցերի նկատմամբ: Այդ սերն ու հետաքրքրություններն են, որ պատանի Կրդիճին տանում են դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան, ուր և ընդունվում է 1965-66 ուսումնական տարում: Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի

կրոնաշունչ մթնոլորտը, ուր անցան նրա ուսումնառության տարիները, եղավ պատրանու հոգու, մորի և սրբի խանձարուրդ: Այս ինչամանի ուսումնական հաստատության հովանու և Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի օրհնության ներքո նրա մեջ ամրապնդվում է ցանկությունը գինվորագրվելու Հայոց Եկեղեցու հոգևոր բանուկին, ծառայելու Հայոց Եկեղեցուն և հայ ժողովրդին:

Շնորհելով սաղմոսի «Հայր իմ եւ մայր իմ թողին զիս, եւ Տէր ընկալաւ զիս» նշանաբանին, Կորիճ Ներսիսյանը դիմում է ներկայացնում Վեհափառ Հայրապետին՝ սարկավագության աստիճան ստանալու համար: Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը, հարգելով միջնորդությունը Մայր Տաճարի լուսարարապետ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Արքեպիսկոպոսի և Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Շնորհք վարդապետ Գասապարյանի, արքունում է Կորիճ Ներսիսյանի և նրա չորս դասընկերների սարկավագական ձեռնադրությունը: Նրա կյանքի այդ կարևոր իրադարձությունը տեղի ունեցավ 1970 թ. դեկտեմբերի 25-ին, ուրբաթ՝ Ս. Ստեփանոս Նախասարկավագի տոնի օրը: Օրհնելով հոգևոր հունձի նոր ընտրյալներին՝ Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը, կարծես մարգարեանալով, իր խոսքում շեշտում է. «Հավաքացած եմ, որ հոգևոր այս հունձը նոր ուժ, նոր կորով է բերելու մեր դարավոր հաստատությանը և նրա միջոցով՝ նաև մեր Եկեղեցուն»: Կորիճ սարկավագը 1970-71թթ. ուսումնական տարեկներին ձեռնարանն ավարտում է գերազանց առաջադիմությամբ: Վազգեն Ա Վեհափառի բարեհաճ թույլտվությամբ նա նշանակվում է Ճեմարանի վերակացու, տեսչի օգնական, ինչպես նաև «Նոր Կրթական» առարկայի դասախոս, և սկսվում է ապագա Հայրապետի մանկավարժական-դասախոսական գործունեությունը:

1972 թ. հոկտեմբերին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվում է կուսակցոն քանանա և ընդունում Գարեգին անունը: Վազգեն Ա Վեհափառը, ով ուշի-ուշով հեղինակում էր նրիտասարդ հոգևորականի գործունեությանը և չափազանց դրական ու բարձր կարծիք ուներ նրա բարոյական արժանիքների ու մտավոր կարողությունների մասին, մրախոգ նորընծայի հետագա ուսումնառության խնդիրներով, 1972 թ. վերջերին Հայրապետական բարձր տնօրինությամբ ու օրհնությամբ Գարեգին արքեպիսկոպոսին ուղարկում է Ավստրիա՝ ուսումը կատարելագործելու Վիեննայի աստվածաբանական համալսարանում, ուր սովորում է երեք տարի՝ մինչև 1975 թ. վերջերը: Իր առաջադիմությամբ, կարգապահությամբ, ընդունակություններով Գարեգին արքեպիսկոպոսը գրավում է դասախոսների և ուսումնական ընկերների ուշադրությունը, շանում նրանց համակրանքն ու հարգանքը, հմտանում աստվածաբանության բնագավառում՝ լավագույնս տիրապետելով և գերմաներենին:

1975 թ. վերջերին Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ հոգևոր հովվի պաշտոնով Գարեգին արքեպիսկոպոսը տեղափոխվում է Արևմտյան Գերմանիա՝ միաժամանակ շարունակելով ուսումը Բոննի համալսարանի աստվածաբանության ֆակուլտետում:

Գերմանիայի հայոց հոգևոր հովվի իր պաշտոնավարության հինգ տարիներին ընթացքում Գարեգին արեղան առանձնակի ջանքեր է թափում այդ նոր ձևավորվող հայկական համայնքի հոգևոր կյանքը կազմակերպելու և նրան Ս. Էջմիածնի հետ կապելու գործում: Համայնքի ներքին կյանքի, հիմնահարցերի և մտահոգությունների վերաբերյալ նա մի քանի անգամ զեկույցներով հանդես է գալիս Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության ընդհանուր ժողովներում, Վեհափառի ուշադրությունը հրավիրում համայնքի հոգևորի ու խնդիրների վրա:

Գերմանիայում հնգամյա պաշտոնավարությունից հետո Վազգեն Ա Վեհափառի նոր կարգադրությամբ 1979 թ. Գարեգին արեղան վերադառնում է Մայր Աթոռ, ապա Հայրապետական տնօրինությամբ մեկում Զագրոսկ' Ռուս Ուղղափառ Եկեղեցու Հոգևոր Ավագնայի ասպիրանտուրայում սովորելու: Այն ավարտելուց հետո երիտասարդ և պատրաստված հոգեորականը Վեհափառ Հայրապետի կողմից արժանանում է նոր բարձր պատասխանատու պաշտոնի և 1980 թ. ծառայության կոչվում Արարապյան Հայրապետական թեմում՝ որպես առաջնորդական փոխանորդի օգնական: Այստեղ ևս Գարեգին արեղան, չնայած իր երիտասարդ տարիքին, դրսևորում է կազմակերպչական ու վարչական գալմանալի ունակություններ:

1982 թ. մայիսի 7-ին Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի հանդիսությունների սրահում Վազգեն Ա Վեհափառի նախագահությամբ հրավիրված քննիչ հանձնաժողովի առջև Գարեգին արեղա Ներսիսյանը պաշտպանում է վարդապետական թեզ՝ «Պոդոսագիպությունն այսօր» թեմայով: Քննիչ հանձնաժողովն աշխատանքը գնահատում է «գերազանց»: Վեհափառ Հայրապետը, ջերմորեն շնորհավորելով Գարեգին արեղային վարդապետական թեզի հաջող պաշտպանության համար, իր ուրախությունն է հայտնում, որ Մայր Աթոռի երիտասարդ միաբանները հանդես են գալիս նման գործերով և շարունակում Ս. Էջմիածնի գիտական և գրական-ստեղծագործական լավագույն ավանդույթները: Վեհափառ Հայրապետի օրհնությամբ նույն թվականի մայիսի 9-ին Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցում Տ. Արսեն եպս. Բերբերյանը Գարեգին արեղային շնորհում է մասնավոր վարդապետական իշխանության չորս աստիճանները:

1983 թ. մարտի 21-ին Վազգեն Ա Վեհափառը Հայրապետական կոնդակով Տ. Գարեգին վարդապետ Ներսիսյանին նշանակում է Արարապյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ: Արտահայտելով իր Հայրապետական գնահատանքը, օրհնությունն ու սերը՝ Վեհափառը կոնդակում շեշտում է հետևյալը. «Ի գնահատումն Ձեր ավելի բան երկու տարիների անձնվեր ծառայությանն նույն թեմում, վստահ լինելով, որ Ձեր նոր պաշտոնում պիտի շարունակեք Ձեր եկեղեցաշեն գործունեությունը, Ձեր անձր բնորոշող հոգևոր եռանդով և պատասխանատվության գիտակցությամբ»: Ապրիլի 1-ից Գարեգին վարդապետն անցնում է իր պարտականությունների կատարմանը և շար շուրջով աչքի ընկնում կազմակերպչական անուրանալի ընդունակություններով, հեղինակականությամբ, սրահանջկոտությամբ, սկզբունքայնությամբ ու կարգապահությամբ:

Նույն՝ 1983 թ. հոկտեմբերի 23-ին, կիրակի օրը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Սրբալույս Մյուռնի օծմամբ Գարեգին վարդապետ Ներսիսյանին շնորհում է եպիսկոպոսական իշխանության յոթ աստիճանները՝ համաձայն կարգաց և կանոնաց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու։ Շնորհավորելով նորապսակ Գարեգին Սրբազանին և նրա երկու կարգակիցներին, չկարողանալով գտնել հուզմունքն ու ուրախությունը, Վեհափառ Հայրապետը իր խոսքում խոստովանում է. որ այս եպիսկոպոսական ձեռնադրությունը «մեծագույն ընծան եղավ պարգևված ինձ, իմ կյանքի 75-ամյակի և իմ գանձակալության 28-րդ տարեդարձի առիթով»։

1990 թ. Գարեգին Սրբազանը նշանակվում է Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ։ 1992 թ. նոյեմբերին Գարեգին Սրբազանը Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից արժանանում է արքուշոպան պալովի։

Իբրև Արարադյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ, Գարեգին Սրբազանը հսկայական աշխատանք է ծավալում հոգևոր-եկեղեցական, մշակութային, բարեգործական ասպարեզներում։ Գործելով Խորհրդային Միության փլուզման և Հայոց անկախ պետականության վերականգնման շրջանաձայնին ու վճռորոշ ժամանակաշրջանում՝ Սրբազան Հոր նախաձեռնությամբ ձևակերպում և հոգևոր կյանքի վերարթնացման ուղղված անդրաճիկ ծրագրերը՝ կյանքի կոչվելով տարիների ջանադիր աշխատանքով։ Վերականգնվեցին, բարեկարգվեցին և կառուցվեցին նոր եկեղեցիներ, բարելավվեց հոգևոր սպասավորությունը, քայլեր կատարվեցին ծխական համայնքների վերակազմավորման ուղղությամբ։

Սրբազան Հոր անձնական հոգաժողությամբ առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում կազմակերպվեցին հոգևոր երգի ուսուցման առաջին դասերը, Առաջնորդարանում՝ քրիստոնեական առարկաներ դասավանդելու նպատակով ուսուցիչների պատրաստման դասընթացները, երիտասարդաց միությունը, բարեգործական գրասենյակը, քայլեր ձեռնարկվեցին մատաղ սերնդի հոգևոր կրթության գործը կազմակերպելու ուղղությամբ։ 1990 թ. բացվեցին Մևանի Հոգևոր Դպրանոցը, որը հետագայում անվանակոչվեց «Վազգենյան», և «Շողակաթ» հեռուստակենտրոնը։ Սկիզբ առան բարեգործական զանազան ծրագրեր, որոնց նպատակն էր՝ «Վերականգնել խզված կապը մեր նախնյաց հետ, եր պարտքերն էլ ժամանակի՝ աստվածամերժ ընթացքով զրոյված անիվը, արժուրել ինքներս մեզ, վերագրենք մեր իսկությունը և միայն այսպես ներկայանալ աշխարհին՝ որպես առաջին քրիստոնյա պետություն», ինչպես հարցազրույցներից մեկում շեշտում է Սրբազան Հայրը։

Հիշարարկության արժանի գործունեությամբ Արարադյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանն իր անձի շուրջն սրելոծեց մեծ հարգանք և իրավացիորեն վաստակեց սեր ու հեղինակություն։

Պատահական չէ, որ երջանկափառակ Հազգեն Ա Վեհափառ Հայրապետի մահից հետո, 1995 թ. կաթողիկոսական ընտրությունների ժամանակ, Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանն ամենահավանական թեկնածուներից մեկն էր, սակայն ընտրության երկրորդ փուլում նա իսկ չէր թեկնածությունը՝ հոգալու Գարեգին Բ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի (Գարեգին Ա Ամենայն հայոց Կաթողիկոս՝ 1995-1999 թթ.):

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն հայոց Կաթողիկոսն իր տեղական ծանր հիվանդության վերջին շրջանում, հայրապետական բարձր փնտրիքներով, 1998 թ. նոյեմբերի 30-ին Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանին նշանակում է Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ: Հայոց Եկեղեցու պատմության նոր շրջանում իր նախադեպը չունեցող այս նշանակումը, Գարեգին Ա Վեհափառի համոզմամբ, կատարվում էր «ի սեր Մայր Աթոռի պալատության»: Եվ իրոք, Գարեգին Սրբազանն իր նոր պաշտոնում (մինչև 1999 թ. հուլիսի 4-ը) ամենայն կարելին արեց Հայոց Եկեղեցու պալատացման ու գորացման, մեր ժողովրդի հավաքի ամրապնդման ուղղությամբ: Մասնավորապես մեծ ջանքեր ներդրվեցին ու ծավալուն աշխատանքներ կատարվեցին հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի հոբելյանական տոնակատարությունների ծրագրերի շրջանակներում, միջոցառումների կազմակերպման ուղղությամբ:

1999 թ. հոկտեմբերի 27-ին Ազգային-եկեղեցական սրբագումար ժողովում Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանն ընտրվում է Ծայրագույն Պատրիարք և Ամենայն հայոց Կաթողիկոս, ընտրություն, որը ցնծությամբ ու գոհունակությամբ է ընդունվում հավաքացյալ ու եկեղեցասեր հայ ժողովրդի կողմից, և սկսվում է Ծայրագույն Պատրիարք և Ամենայն հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի գահակալության շրջանը:

Վեհափառ հայրապետը նախևառաջ լուրջ ուշադրություն է դարձնում միաբանական կյանքի գորացմանը և առավել արդյունավետ կազմակերպմանը: 2001 թ. կեսերին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանների թիվը 111 էր, որոնցից 47-ը՝ արքեպիսկոպոս ու եպիսկոպոս, 67-ը՝ վարդապետ ու արեղա, իսկ Մայր Աթոռի վանաբնակ միաբանների ընդհանուր թիվը 51 էր, որոնցից 6-ը՝ արքեպիսկոպոս ու եպիսկոպոս, 22-ը՝ վարդապետ ու արեղա, 23-ը՝ սարկավազ:

Վեհափառ հայրապետի բարձր նախագահությամբ պարբերաբար երավիրվում են միաբանական ու եպիսկոպոսական հավաքներ, որոնց ընթացքում քննարկվում են զանազան հարցեր՝ առնչված վանական ներքին կյանքին ու միաբանների գործունեությանը, հոգևոր կյանքի աշխուժացմանը, մասնավորապես հայաստանի թեմերում ժողովրդի կյանքից ներս Եկեղեցու դերակատարության մեծացմանը, հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնախմբությունների կազմակերպմանը և այլն: Հայոց Եկեղեցու կյանքում նշանակալից իրադարձություն էր Վեհափառ հայրապետի նախաձեռնությամբ 2001 թ. փետրվարի 19-21-ը Մայր Աթոռում տեղի ունեցած միաբանական համագումարը, որին ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, հայաստանի և արտերկրի 51 կուսակրոն հոգևորականներ:

Հայտնի է, որ հայաստանի անկախության հռչակումից հետո հոգևոր կյանքը նոր զարթոնք ապրեց, ու եկեղեցաշինությունը աննախադեպ ծավալներ ընդունեց: Վեհափառ հայրապետն ամենագործուն մասնակցություն է ցուցաբերում այդ աշխա-

որոնց սոսկ թվարկումը զարմանք ու հիացմունք է պարճառում: Եվ եթե կարելի լիներ միայն մեկ բառով բնութագրել Գարեգին Բ Վեհափառ Հայրապետին, ապա, անշուշտ, պիտի նրան անվանեինք նախևառաջ ՇԻՆԱՐԱՐ:

Ամենայն հայոց Կաթողիկոսի գործունեության կարևորագույն կողմերից մեկը պաշտոնական ընդունելություններն ու հայրապետական այցելություններն են: Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի կաթողիկոսության ընթացքում, ընդունված ավանդույթով, Մայր Աթոռ են այցելել Հայաստանի Հանրապետության ղեկավարները, Հայաստանում հավաքարժապրված ղեկավարներն ու միջազգային տարբեր կազմակերպությունների, ինչպես նաև Հայաստանի գիտա-մշակութային ու հասարակական-քաղաքական կազմակերպությունների, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, օտարերկրյա պետությունների ղեկավարներ, պետական, հասարակական գործիչներ և այլն: Անշուշտ, կարևորագույն, բացառիկ իրադարձություն կլինի Հոռմի Հովհաննես-Պողոս Բ Սրբազան Քահանայապետի այցելությունը Ս. Էջմիածին (սեպտեմբերի երկրորդ կես, 2001 թ.)՝ մասնակցելու Հայաստանում քրիստոնեության պետականորեն ընդունման 1700-ամյակի պոնակատարությունների շրջագծում կատարվող միջոցառումներին:

Իր հերթին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն այցելություններ է կատարել Հայաստանի Հանրապետության պետական գործիչներին, եղել գիտա-մշակութային հաստատություններում, ներքին թեմերում: Վեհափառի միջեկեղեցական հանդիպումներից նշենք Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Բ-ի, Ռումինիայի Ուղղափառ Եկեղեցու պետ Թեոֆիլոս Պատրիարքի, Ղազի Ուղղափառ Եկեղեցու պետ Շենուդա Գ Պատրիարքի, Եթովպիայի Եկեղեցու պետ Աբունա Պաուլոս Պատրիարքի, Հոռմեական Կաթողիկ Եկեղեցու պետ Հովհաննես-Պողոս Բ Պապի, Ալեքսանդրիայի հույն Պատրիարք Պետրոս Է-ի, Վրաց Եկեղեցու Պատրիարք-Կաթողիկոս Իլիա Բ-ի հետ հանդիպումները: Վեհափառ Հայրապետը հանդիպել է նաև Կովկասի մուսուլմանների հոգևոր պետ Շեյխ ուլ-խալամ Ալլահ-շուքուր Փաշազադեի հետ: Կարևոր հնչելություն ունեն նրա բազմաթիվ հանդիպումները միջազգային պետական-քաղաքական այնպիսի գործիչների հետ, ինչպիսիք են Վլադիմիր Պուտինը, Ջորջ Բուշը և ուրիշներ:

Առանձնակի նշանակություն և իմաստ ունեն Ն. Ս. Օծության ուխտագնացությունները, որոնցից առանձնացնենք նրկուսը: Նախ՝ Երուսաղեմ՝ Սուրբ Երկրի Տերունական սրբավայրերը (14-25 հունվարի 2000 թ.), ապա՝ Դեր Ջոր (23-25 ապրիլի 2001 թ.): Իր այս ուխտագնացությամբ Վեհափառ Հայրապետը հավաստեց, որ մենք ցեղասպանության գոեների ժառանգներն ենք: Ներկաբար, մենք նաև տերն ենք մեր նախարակների Դատի և իրավունքների:

Անգնահատելի են Վեհափառ Հայրապետի քանգերը հոգևոր-կրթական հաստատությունների անխափան գործունեությունը կազմակերպելու և դրանց հետագա զարգացումն ապահովելու բնագավառներում: Կրթական գործը միշտ էլ եղել է Վեհափառի ուշադրության կենտրոնում, որը նա համարել է իր գործունեության առաջնահերթ խնդիրներից: Կաթողիկոս ընտրվելուց անմիջապես հետո Նորին Սրբությ-

յունը Գևորգյան Հոգևոր Ծննդարանի խնդիրներին և ուսումնական գործընթացին առավել մոտից ծանոթանալու համար անձնապես մասնակցում ու նախագահում է մանկավարժական ժողովներին: Վեհափառի անձնական ցուցումով է, որ վերականգնվեցին ավարտաճառերի պաշտպանությունը Ծննդարանի հարկից ներս և սարկավազության ձեռնադրության ընտրությունները: Վեհափառն ամեն ինչ անում է, որպեսզի Գևորգյան Հոգևոր Ծննդարանը դառնա գիրա-ուսումնական կարևոր կենտրոն, որպեսզի այն համալրվի ուսումնական անհրաժեշտ գրականությամբ, համակարգչային նոր սարքավորումներով, որոնք կնպաստեն սաների գիրելիքների հարստացմանը և մտաբերիչության ընդլայնմանը:

Բոլորին է հայտնի Վեհափառի հեղեղական, նպարակասլաց գործունեությունը Վազգենյան Հոգևոր Դպրանոցի կազմակերպման ուղղությամբ: Դեռևս 1990 թ. նրա նախաձեռնությամբ Մեանի թերակղզում հիմնադրված ուսումնական այդ հասարակությունն անցած տարիների ընթացքում դարձել է օրինակելի կրթական հիմնարկություն: Այն գիշերօթիկ, հնգամյա կրթական հասարակություն է, որի սաները ավարտելուց հետո ևս մեկ տարի ուսանելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ծննդարանում՝ անցնում են հոգևոր ծառայության: 2000 թ. դեկտեմբերի 5-ին հանդիսավորությամբ նշվեց դպրանոցի երեսնամյա կրթականը, որի ժամանակ ամփոփվեցին անցած տարիների արդյունքները:

Այժմ Վազգենյան Հոգևոր Դպրանոցում (տեսաչ՝ Հոգեշնորհ Տ. Բագրատ արքեպիսկոպոս) սովորում են 54 ուսանողներ: 1997 թ. դպրանոցը տվեց իր անդրանիկ շրջանավարտները: Համալրելով հոգևոր ամենապարբեր հասարակությունների սպասավորների և աշխատակիցների շարքերը՝ նրանք իրենց ստացած հարուստ գիրելիքներն ի սպաս են դնում ի պայծառություն մեր Եկեղեցու, նրա կառույցների հետագա զարգացմանն ու բարգավաճմանը: Անշուշտ, նրանք ամենուր և միշտ զգում են իրենց հոգևոր հոր՝ Հայոց Հայրապետի խիստ, սակայն և հոգածու ներկայությունը, և լցվում առավել պարասխանաբարությամբ: Բացառապես Վեհափառ Հայրապետի անձնական ջանքերի շնորհիվ է, որ ներկայումս Մեանի թերակղզում ընթանում են Ս. Հակոբ եկեղեցու, Մեանա վանական համալիրի և Հոգևոր Դպրանոցի նոր մասնաշենքերի շինարարական աշխատանքները, նորոգվում են Ս. Առաքելոց և Ս. Կարապետ եկեղեցիները: Վեհափառ Հայրապետը մեծ հոգացողություն է ցուցաբերում նաև Գյումրիի Ընծայարանի և Կալկաթայի Մարդասիրական Ծննդարանի նկատմամբ:

Հոգևոր-կրթական հասարակությունների հետ սերտ աղերս ունեն Հայորդյաց Տները: Հայտնի է, որ Հայորդյաց Տները հիմնադրվել են դեռևս 1993 թ.՝ Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի անձնական նախաձեռնությամբ և ջանքերով: Այդ թվականին Արարատյան Հայրապետական թեմի երկրամասնությամբ և Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության ֆինանսական աջակցությամբ Երևանի երեք նախկին պիոներպալատներ (Նոր Նորքի, Արաբկիրի, Մալաթիայի) վերակազմավորվեցին Հայորդյաց Տների: Զիչ ավելի վաղ (1992 թ.) Զանաքեռի Ս. Հակոբ եկեղեցուն կից ստեղծվել էր Մանրանկարչության կենտրոն: Դրանք 1997 թ. Երևանի Զաղաքապետարանի որոշմամբ անհատույց և անժամկետ հանձնվեցին Արա-

րադյան Հայրապետական թեմին: 1999 թ. դեկտեմբերի 1-ին Վեհափառ Հայրապետի փնտրիչությամբ Հայոց Տներն ու Մանրանկարչության կենտրոնն առանձնացվեցին Արարադյան Հայրապետական թեմից և դարձան Մայր Աթոռի ու ՀԲԸՄ ենթակառույց:

Հայոց Տներն ուսումնակրթական և մանկական ստեղծագործական հաստատություններ են, որտեղ երեխաներին տրվում է մասնագիտական կողմնորոշում, զարգացվում են նրանց ստեղծագործական ունակությունները, ճաշակը, հագորդվում հայեցի, քրիստոնեական դաստիարակություն: Հայոց Տները յուրաքանչյուր Տանը կից գործում է երիտասարդական միություն: Վեհափառ Հայրապետի ամենօրյա ուշադրության կենտրոնում են գտնվում նաև կիրակնօրյա դպրոցների՝ քարոզչության թեմական կենտրոնների գործունեությունը: Հարկանշական է, որ այսօր Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում գործում են ավելի քան 150 կիրակնօրյա դպրոցներ, որ հաճախում է շուրջ 5000 աշակերտ, որոնց դասավանդում են Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնի դասընթացները ավարտած 900 ուսուցիչներ:

Հոգևոր-եկեղեցական կյանքի բնագավառում Վեհափառ Հայրապետի ծավալած այս գործունեության մեջ չի կարելի չհիշատակել նրա անմիջական ջանքերով և օրհնությամբ լույս տեսնող պաշտոնաթերթերն ու ամսագրերը, որոնք կարևոր դեր են խաղում քրիստոնեական քարոզչության և դաստիարակության բնագավառներում, իրենց նպաստը բերում աստվածաբանության և մասնավորապես հայագիտության զարգացմանը: Վեհափառի օրոք շարունակվում են լույս տեսնել Ամենայն Հայոց Կաթողիկոսության Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Էջմիածին» պաշտոնական ամսագիրը (գլխավոր խմբագիր՝ Անդրանիկ Զեյթունյան), Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կրթական-մշակութային «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթը (գլխավոր խմբագիր՝ Աստղիկ Մրամբույյան): Առանձին թեմեր ևս սկսում են լույս տեսնել իրենց պաշտոնաթերթերը, որոնցից հիշատակենք Արարադյան Հայրապետական թեմի «Շողակն Արարադյան» երկշաբաթաթերթը, Շիրակի թեմի «Յոթվերջ» ամսաթերթը, Գեղարքունյաց թեմի «Խորան Լուսո» ամսաթերթը: 2001 թ. կեսերին լույս տեսավ Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի «Ս. Առաքելոց» տարեգրքի առաջին հատորը, որը կյանքի է կոչվել բացառապես Դպրանոցի սաների անդուլ ջանքերով:

Վեհափառն առանձնակի հոգատարությամբ է վերաբերվում Մայր Աթոռի «Շողակաթ» հեռուստատուղիային (փնտրեն՝ Մանյա Ղազարյան), որը կարևոր դեր է խաղում հոգևոր քարոզչության իրականացման և եկեղեցական կյանքի լուսաբանման գործում: Սպորտիայի աշխատանքներն ստավելագույնս արդյունավետ դարձնելու նպատակով Վեհափառ Հայրապետի ջանքերով այն վերազինվել և համալրվել է ժամանակակից սարքավորումներով:

Գարեգին Երկրորդ Վեհափառ Հայրապետի օրոք լայն ծավալ է ստանում նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարանի (փնտրեն՝ Դերենիկ Սիրեկանյան) հրատարակչական գործունեությունը: Այս շրջանում լույս են տեսել եկեղեցական տաղավար և նշանակալի տոներին ու խորհուրդներին նվիրված տրասնյակ անուն գործեր,

տալագրվել են «Շարակեղը», Ս. Մայիսյանի (այժմ՝ Տ. Ղևոնդ քահանա) «Ժամանակակից աղանդները Հայաստանում» մենագրության առաջին հատորը, Հ. Զյուսեյանի «Անտիա Սանահնեցի» (ուսումնասիրություն և թնագրեր) գիրքը, Ամենայն հայոց երջանկափառական Կաթողիկոս Գարեգին Ա-ի «Ջարդոնները», Պ. Խաչատրյանի «Գանձարան հայ երեք բանաստեղծության» հատրնսիրի ժողովածուն, Շ. Մկրտչյանի «Արցախի հուշարձանները» ուսումնասիրությունը, Շահն արքեպս. Աճեմյանի «Հավատ Խանգանակ» գիրքը և մի շարք այլ գործեր:

Նշանակալից երևույթ պետք է համարել Մաղաքիա արքեպս. Օրմանյանի «Ազգապատում» կոթողային մենագրության վերանայարարականությունը, որի Ա հատորն արդեն սեղանի վրա է: Այս օրերին լույս են տեսնում 1700-ամյակին նվիրված մի շարք գրքեր և ալբոմներ: Հրապարակական կարևոր ուղղություններից մեկը եղել է կիրակնօրյա և հանրակրթական դպրոցների համար կրոնի ուսուցման դասագրքերի հրապարակությունը: Տպագրվել են փաստ անուն դասագիրք և մեթոդական ձեռնարկ: Առանձին գրքուկներով լույս են տեսել նաև Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի՝ Ս. Մենդյանը և Ս. Հարությանը նվիրված քարտզները: Վեհափառ Հայրապետի գահակալության ընթացքում նրա օրենությամբ ու բարի կամեցողությամբ լույս են տեսել բազմաթիվ մենագրություններ: Վեհափառը միշտ էլ հոգապարտություն է ցուցաբերում երիտասարդ գիտնականների նկատմամբ, կանաչ ճանապարհ փայլի շնորհաշատ և փառանդավոր մասնագետներին:

Վեհափառ Հայրապետն ամենագործուն մասնակցություն է ցուցաբերում հանրապետության գիտամշակութային և հասարակական կյանքին: Նա Մայր Աթոռում պարբերաբար ընդունում է հանրապետության հասարակական կազմակերպությունների, սրբապատգանական միությունների, ակադեմիական ու բուհական համակարգերի և քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներին: Ինքը՝ Վեհափառը, գործուն կերպով մասնակցում է հանրապետության կյանքում նշանակալից մշակութային և գիտական միջոցառումներին, հանդիսություններին, երեկոներին, գիտաժողովներին: Վեհափառ Հայրապետը սիրով և պատասխանատվությամբ վերականգնեց Վազգեն Ա Կաթողիկոսի գահակալության շրջանում ձևավորված գեղեցիկ ավանդույթը՝ եիշարժան առիթներով մեծարման երեկոների և մշակութային-գիտական հանդիսությունների կազմակերպումը:

Անշուշտ, նշվածով չի սահմանափակվում Ամենայն հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի գործունեությունը: Այն բազմաբնույթ է ու բազմոլորտ, տակայն սահմանափակվենք ասվածով:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի հայրենաշեն ու եկեղեցական գործունեության համառոտ այս ակնարկն իսկ վկայում է, որ 50-ամյա Հայրապետը լի է եռանդով, հաստատվածությամբ ու վճռականությամբ՝ շարունակելու իր հոգևոր ծառայությունը՝ ի բարօրություն համայն հայ ժողովրդի, ի սպաս հայ Առաքելական Եկեղեցու և Հայաստանի բարգավաճման:

Ցանկանում ենք Ամենայն հայոց Վեհափառ Հայրապետին նորանոր հաջողություններ՝ Զրիստոսահասարար Ս. Էջմիածնին և հայ ժողովրդին ծառայության սրբազան առաքելության մեջ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Սուրբ Էջմիածնի Աթոռը Աստվածահիմն է, իսկ Հայրապետը՝ սուրբ և անքիծ: Իր գոյության, հիմնավորման, էությունական նկարագրի, բնավորության ձևի մեջ հայի որակը միշտ մնաց Էջմիածնի սրբության հետ միաշաղախված, ուժեղ և միաձույլ: Հայ մարդը իր մտածումները, զգացումներն ու ապրումները տեսավ ու վերլուծեց Հայոց Հայրապետի աճի միջոցով՝ խտացված ու ամբողջական կերպով: Այնտեղ գտավ իր մխիթարությունը, ազատության և արդարության իր ձգտումները մարմնավորեց նրա միջոցով և, վերջապես, Աստված խոսեց նրա բերանով՝ որպես ճանապարհ, ճշմարտություն և կյանք:

Հայության կյանքում չեղավ և չկա մի այնպիսի երևույթ կամ կառույց, որ այսօր ևս հարաձգական լիներ, դարերը ազդեցեր միմյանց ոչ միայն պատմական ժամանակների հաջորդականության օրենքով, այլև անցյալի, ներկայի և ապագայի կենդանի հաղորդությամբ: Ընկան թագավորությունները, ավերվեց Հայրենիքը, տարագրվեց ժողովուրդը: Միակը և անփոխարինելի մնաց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը իր Շնորհազարդ Հայրապետով: Բնութագրումը Վեհափառ Հայրապետին է. *«Էջ Միածինն ի Հօրէ: Միայն Միածնի էջքը չէր Հայոց հողի վրա: Ազաթանգեղոսը պատմիչ էր, կրոնական խոր ու անկեղծ ապրումով քրիստոնյա, սակայն մարգարե չէր: Եթե լիներ ու հայացքը սևեռեր հայ ժողովրդի քրիստոնեության ապագա դարերի պատմության շարժապատկերի վրա, ապա կոեսներ, որ Միածնի էջքի հետ հայոց ժողովուրդն էլ բարձրացավ առ Աստված»:*

Ազգիս Վեհափառ Հայրապետը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսը, դարձավ 50 տարեկան: Երիտասարդ, կորովի, համառ մի առաջնորդ, ով կարողացավ իրավամբ իր գործունեությանը որպես արգասիք նվաճել ազգի վստահությունը և Սուրբ Հոգու առաջնորդությամբ բարձրանալ Ամենայն Հայոց Հայրապետության զերագահ Աթոռին: Հազար անգամ իրավացի է հայոց շարականագիրը, որ Ս. Թադևոսի և Ս. Գրիգոր Լուսավորչի Գաբիմ կարող է բազմել և ծառայել միայն նա, ով *«յորովայնէ է ընտրեալ»:*

Յուրահատուկ ինքնախոստովանանքով Վեհափառ Հայրապետը մեզ պատմում է Տիրոջ ունահեռքերին հետևելու առաջին քայլերի, ունեցած տարակուսանքների և, ինչու չէ, նաև յուրաքանչյուր պատանու հատուկ ներքին խորհրդավոր վախի կամ ավելի ճիշտ՝ երկյուղի մասին: Վեհափառը այն ներկայացնում է այսպես. *«Հավատացյալ ընտանիքի զավակ եմ, և մանկությանս շրջանից ի վեր ծնողներիս դաստիարակությամբ Քրիստոսի սիրո հունդերը սերմանվել են մեր ընտանիքի բոլոր զավակների սրտերում: Մեկ անգամ երբ ծնողներիս հետ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին Պատարագի մասնակցելու էինք եկել, արարողության ավարտին, տունդարձի ճանապարհին, Մայր Աթոռի հոգևորականներից Վահան ծպս. Տերյանը, որ ճանա-*

չու՞մ էր հորս, մոտեցա՞վ և առաջարկեց ինձ բերել Մեմարան ուսանելու: Հայրս պատասխանեց սիրով և ինձ առաջնորդեց Մեմարան: Այնտեղ տեսուչը և վահան Սրբազանն իրենց փափագը հայտնեցին Սուրբ Էջմիածին իմ ընդունվելու համար: Սակայն դպրոցի աթենիսական ուսումը հոգևոր կյանքիս համընկալ սխալ պատկերացումներ էր ձևավորել իմ մեջ, և սուրակաւսում էի անվիշապես որոշում կայացնել, քանզի իմ մեջ այն համոզումն էր տիրապետում, որ եթե մեկ անգամ մույնիմի վաճառ մտնեի, այլևս հնարավորություն պիտի չունենայի հաղորդակցվելու տեսնելու, հարաբերվելու հարազատներին՝ եղբայրներինս, քույրերինս և ծնողներինս հետ...: Եվս հետաքրքիր մի պատմություն Հոգևոր Մեմարանից ունեցած իմ առաջին տպավորությունից. Մեմարանից դուրս գալու պահին տեսա, թե ներս ու դուրս անող տպավորությունից. Մեմարանից դուրս գալու պահին տեսա, թե ներս ու դուրս անող ուսանողներն իրենց իրենց խոսում էին: Փոքր ինչ զարմացա և վերապահ մտեցումս Մեմարանի հանդեպ է՛լ ավելի խորացավ: Սակայն երբ տուն վերադարձանք, անբացատրելի մի մղում ծնունդ առավ իմ մեջ դեպի այդ հոգևոր հաստատությունը: Ասեմ մահ, որ երեք օր անց հայրս և մայրս փոքրիկ վեճ ունեցան: Մայրս չէր ցանկանում, որ Հոգևոր Մեմարանում ուսանեի և հոգևորական դառնայի, իսկ հայրս հակառակն էր պնդում: Չմայած երկօրյա այդ վեճերի արդյունքում մայրս «հաղթանակեց», սակայն մերքին ձգողական մի ուժից դրդված՝ առաջնորդվեցի դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, դեպի Հոգևոր Մեմարան:

Այդ օրվանից ի վեր վեհափառ Հայրապետը հոգևորականի ամենակրտսեղ աստիճանից մինչև այսօր գործեց ինքամոռաց կերպով Սուրբ Էջմիածնի տեսիլքը սրտում, Աստուծո շունչը հոգում և ժողովրդի հոգևոր պայծառության վերելքը մտքում: Վեհափառը պատանեկան վիճակում զգացած ձգողականությունը՝ Աստուծո կանչը, դարձրեց իր գործունեության առանցքը, սակայն երբեք չսահմանափակվելով մարդկային ջանքերի ապավինմանը, մշտապես ապրեց Աստուծո կենդանի մերկայության մեջ, ըստ Պողոս առաքյալի մերանձնական ապրումի, որ «շատ աշխատեցի. քայց ոչ թե ես, այլ Աստծու շնորհը, որ ինձ հետ է» (Ա. Կորնթ. ԺԵ 10), խորությամբ ըմբռնելով, որ «մենք Աստծուն գործակից ենք. Աստծու այգին ենք, Աստծու կառույցն ենք» (Ա. Կորնթ. Գ 9): Աստծու այգու մշակությանը լծված Գարեգին Սրբազանը՝ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդը, սկզբունքային քանաձևելով պատկերագրեց հետևյալը. «Մենք հոգևորականներ ենք, քայց անհատներ ենք, ունենք մեր նկարագիրը, հոգին ու արժանապատվությունը: Ծառան ենք Աստծու, մեր ժողովրդի և մեր խղճի: Որևէ գաղափար ընդունելի է մեզ համար այս երեք նկիրական հասկացություններին մերդաշնակվելու պարագային»:

Հատկապես աստվածաբանության տարիների մշուշի փարատումից հետո, երբ այլևս Հայաստանի Հանրապետությունը կոչված էր ազատ ու անկախ գոյության, վեհափառ Հայրապետը հրատապ և անհետաձգելի համարեց մոր սերնդի՝ մոր մտածումներով, ըմբռնումներով և հավատքի կյանքով ապրող սերնդի պատրաս-

տության գործը, որովհետև կարգերը, օրենքները տնտեսական և հասարակական կացության չեն, որ ազատ հոգով քաղաքացիներ են ծնում, այլ այդպիսի քաղաքացիներն են ստեղծում մամավաճի ազատ Հայրենիք: Ստորուկը չի կարող զգալ ազատության իմաստը, այլ ազատությամբ և վեհությամբ ապրողն է արժեքներում Աստուծո տված ամենամեծ ընծան՝ ազատությունը, քանզի *«որտեղ ազատությունն է, այնտեղ է և Աստուծո Հոգին»*: Վեհափառ Հայրապետը ճիշտ ընկալեց պահը՝ գնահատելով այն հետևյալ մտածումով. *«Պատմության ընթացքն այնպես էր զարգացել, որ մեր ժողովուրդը հեռացել էր Հայ Եկեղեցուց, հայ հոգևոր արժեքներից, սակայն ամեն հայդորդի իր մտքում, հոգում ծրարել է հավատը, իր նախնիաց ստեղծագործ միտքը: Այս իսկ պատճառով ծանր պարտականության առջև է գտնվում այսօր հայ հոգևորականը: Նա պետք է մոր հնչելությամբ, մոր հավատքով ու մոր սիրով մառչելի դարձնի Քրիստոսի Ավետարանը, մրա վեհ, քարոյական առանցքների վրա խարսխի հայդորդու միտքն ու նկարագիրը»*:

Եվ խոսքը դարձավ գործ... կարճ ժամանակահատվածում այլևս խլլակ դարձած երբեմնի Պիոներ պալատները՝ Արաբկիր, Նորք և Մալաթիա թաղամասերում, ՀԱԸՄ-ի օժանդակությամբ և Գարեգին Սրբազանի ջանքերով վերածվեցին մոր և քարեշեն օջախների, որոնց մկրտվեցին «Հայորդյաց տներ» մոր անունով: Այսօր այս հաստատություններում իրենց վավերական քրիստոնեական և ճշմարիտ հայկական կրթություն են ստանում ավելի քան 3000 մանուկներ և պատանիներ՝ հմտանալով արվեստի և մշակույթի զանազան ոլորտներում: Թերևս մանկանց հոգևոր կրթության այսպիսի զարգացումն ու առաջագնացումը տեսնելն էր, որ մերշնչման մի պահի վեհափառ Հայրապետը մեր պատմության և գոյության կենսակերպին և ազգային տեսակին մղիչ ուժ եղած *«Մահ իմացեալ անմահութիւն է»* առաջնորդողը որակեց այլ իմաստով և հաղորդեց մի մոր խորհուրդ. *«Մահ իմացեալ անմահութիւն է» կարգախոսը պիտի փոխվի մեր ժողովրդի համար, այսուհետև պիտի ասենք. «Կեանք իմացեալ անմահութիւն է»*:

Այո՛, մենք այլևս պիտի ապրելով ապրենք, հաղթելով ապրենք: Հայրենասիրությունը բանաձևելու կարիք չունի, մրանով պիտի ապրես, ցործես, արարես :

Արարեց վեհափառ Հայրապետը... քառացիորեն մի քանի տարիների ընթացքում դրվեցին հիմքերը և կառուցվեցին մոր եկեղեցիներ, մորոզվեցին հենքեր, բացվեցին զանազան քարեսիրական հաստատություններ Արարատյան Հայրապետական թեմի ողջ տարածքում Երևանից մինչև Սևան ու Արարատ:

Վեհափառ Հայրապետը Սուրբ Էջմիածնի և, այդպիսով, Հայ Եկեղեցու պայծառությունը տեսավ մարդակերտման սրբազան ճանապարհի մեջ: Հոգևորականների մոր սերունդը Աստուծո խոսքի քարոզությամբ նախաձեռնադիր և Նրա ձայնին միշտ ականջալուր, հանձնառու, ուսյալ հոգևորականությունն է, որ պիտի կարողանա ունենալ 1700 տարվա պատմություն ունեցող Եկեղեցու՝ պատմության բերած բոլոր դժվարություններն անդրաճանաչելու ուժակաությունը: Եվ այն չուշացավ... Հա-

յատևանի Հանրապետության կյանքով անցնող ազատության շուգը ծնեց մաս վազգեմյան Դպրանոցը, որը թերևս մեր բոլոր ժամանակների հայրերի տեսիլքն էր, որ մարմին առավ Վեհափառ Հայրապետի տեսիլքի միջոցով և պատասխանն էր այն աղոթքների, որոնք ուղղված էին Սևմա ամապատի Հովանավոր Սրբուհի Աստվածածնին: «Երբ այցեցցի Մնամա կույի»,- ասումն է Վեհափառ Հայրապետը,- *կանգնած խրիմյան Հայրիկի ընծայարանի շենքի առջև, հայացքս հառած քարծուներում մեմավոր կանգնած՝ կարծեք թե որբացած հայոց եկեղեցիներին. համ-կարծ մտածում և ներշնչանք ունեցա, հոգևոր կրթական հաստատությանը օժտելու այդ մեծաստանը, այդ կղզին: Վերադարձա Մայր Աթոռ Ս. Էջմիածին և խնդրանքս ներկայացրեցի վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Վեհափառը մայեց դեմքիս, խորհրդավոր մի ժպիտ գծագրվեց Հայոց Հայրապետի դեմքին՝ Երազո՞ւմ ես: Պատասխանեցի՝ Վեհափա՛ռ, խնդրում եմ Ձեր օրհնությունը... Երազը դարձավ իրականություն ...»:*

Դպրանոցը կյանք հաղորդեց գրեթե ամշնչացած Սևմա վանքին: Ուսանողության թե՛ դժվարին, թե՛ առատ օրերին գրեթե ամեն ժամ և ամեն վայրկյան, տիվ թե գիշեր Վեհափառը արթուն դիտողի պես ներկա էր, հայրական խմամբով, սիրով և երբեմն էլ հանդիմանությամբ: Ամեն մոր ընդունվող և աճող ուսանողի հետ Նորին Սրբությունն ապրում էր իր անձնական փորձառության այն առաջին պահը, երբ Սուրբ Էջմիածնի Հոգևոր Մեմարանը մի անդամայի կանչով ձգել էր իրեն դեպի իր Սուրբ Գիրկը: Հավատաց այդ սրբասուն մայրական գրկից դուրս եկող զավակների ծառայության ոգուն, որը պտղավորվեց մի քանի շրջանավարտ սերունդներով:

1999 թվականի հոկտեմբերի 27-ին ազգը, գնահատելով Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի բազմարդյուն գործունեությունը, Սուրբ Հոգու առաջնորդությամբ նրան կոչեց ծառայության բաժնագրույն պաշտոնին՝ Ամենայն Հայոց Հայրապետի աստիճանին: Վեհափառը խոնարհությամբ ընդունեց ժողովրդի հրավերը՝ հստակ պատկերացնելով, որ այն մի խաչի ճամապարհ է, սակայն հաղթանակող խաչի ճամապարհ: Որպես հետևորդը Մեծ խաչյալի և կրողը մեծ խաչի՝ Վեհափառը Ամենայն Հայոց Կաթողիկոսության կոչվելու վայրկյանին իր հայացքը, մտածումները, ներանձնական ապրումները, գործելու ամերկբա կամքը բևեռեց Տիրոջ խաչին, որպես պարծանքի միակ և անփոխարինելի ճշմարտություն: «*Քո Եկեղեցուն և Քո ժողովրդին ծառայելու մորոց ուխտիս մեջ անդադրու ինձ, Տե՛ր, և ապավեն եղի՛ր, տուր շնորհը՝ քարձրացնելու ինձ վստահված խաչը, կրելու հանուն Քո խաչի բազմիցս խաչված, խաչով հաղթանակած հոտիդ առաջնորդության պատասխանատվությունը: Գիտեմ ծանրությունը Քո խաչի, գիտեմ և զորությունը նրա: Եվ «ինձ քալ լիցի պարծել, քայց միայն ի խաչն Տե՛առն մերոյ Յիսուսի Քրիստոսի»:*»:

S. ԲԱԳՐԱՏ ԱՐԴ. ԳԱԼՍՏԱՆՅԱՆ
ՏԵՍՈՒՉ ՄԵՎԵՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ-Ի ԷԿՈՒՄԵՆԻԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

«Ընդհանուր ի կարեւորս,
Ազատութիւն՝ յերկբայականս,
Սէր՝ յամենայնի»:

Ընդհանրական Եկեղեցու հայրերի հետևողությամբ Ընդհանրի Հայրապետի ընդհանրացնող այս ձևակերպումը, որն իր կարևորությամբ և քրիստոնեական ճշմարիտ ոգով կամխում է նույնիսկ արդի էկումենիկ երկխոսությունների ձեռքբերումները, դարեր շարունակ համդիսացել է Հայոց Եկեղեցին էկումենիկ հարցերում առաջնորդող մշամաքամը:

Այս գաղափարը, դարերով առաջնորդելով հայ եկեղեցականին, մղել է նրան համագործակցելու քույր Եկեղեցիների հետ թե՛ ազգային խնդիրները լուծելիս և թե՛ Եկեղեցու առաքելությունն իրագործելիս:

Նման լայնախոհ մտածողությունն էր, որ 19-րդ դարի հայ հոգևորականների համաստեղությամբ մղեց հաղորդակցվելու Արևմուտքի հոգևոր-աստվածաբանական մտքին և այն շաղախելու իրենց ավանդական հոգևոր արժեքներին ու վերակենդանացնելու դրանք նոր ոգով և մտածողությամբ:

Ամշուշտ, այս գաղափարն այսօր ևս առաջնորդող է Հայ Եկեղեցում: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու 132-րդ գաթական արդեն իսկ իր երկամյա գործունեության մեջ, ի թիվս այլ եկեղեցաշեն ու ազգօգուտ գործերի, առանձնակի կարևորություն է ընծայում էկումենիկ հարաբերություններին՝ հիմնված փոխադարձ հարգանքի և երկկողմանի համագործակցության սկզբունքների վրա, որոնք տեղի են ունենում փոխադարձ այցելությունների և կազմակերպված գիտաժողովների, ուսումնական-հրատարակչական, ինչպես նաև բարեգործական ծրագրերի իրականացման միջոցով:

Անդրադառնալով վեհափառ Հայրապետի անցյալ երկու տարիների միջեկեղեցական գործունեությանը՝ վստահորեն կարող ենք արձանագրել, որ այն խարսխված է Հայրապետական անդրամիկ կոնդակի հետևյալ տողերի վրա. «Գործում մասնակցութիւն ունենալ միջեկեղեցական կեանքում՝ հաւատարիմ համայն աշխարհում խաղաղութեան պահպանման, ժողովուրդների՝ եղբայրական սիրով համագործակցութեան մեր Եկեղեցու աւանդներին: Նոր ժամանակների տարաբնույթ մարտահրաւերների առջեւ քրիստոնեական քույր Եկեղեցիների հետ մեր ջանքերը միաւորած, հետեւողականօրէն իրականացնելու ենք հոգեւորի լոյսով մարդկութեան կեանքի իմաստաւորման սուրբ առաքելութիւնը՝ յանուն Քրիստոնէական սկզբունքների կենսագործմամբ բարու յաղթանակի եւ համընդհանուր երջանկութեան»¹:

¹ Հայրապետական անդրամիկ կոնդակ, «Էջմիածին», 2000 թ., № Բ, էջ 3:

Էկումենիկ շրջանակներում հրամայական դարձած «Միությունն բազմազանության մեջ» համադրույթն այսօր տեսանելի է այլ Եկեղեցիների հետ Հայ Եկեղեցու հարաբերություններում. որոնք, ամշուշտ, բխում են թե՛ մեր և թե՛ մյուս Եկեղեցիների շահերից:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, քացի իր անդամների հոգևոր պահանջները բավարարելուց, դարեր ի վեր պարտականություն է ունեցել պահպանելու նաև զաղթաշխարհի հայության ազգային-հոգևոր նկարագիրը: Այս պայմաններում առաջանում են մի շարք հարցեր՝ կապված հոգեորության, օտար երկրներում հայ համայնքների իրավունքների պահպանման, ինչպես նաև օտար հասարակություններում ինտեգրացման, միևնույն ժամանակ ազգային ինքնության պահպանման հետ:

Դիտարկելով վերջին երկու տարիների ընթացքում զարգացող գործընթացները՝ կարող ենք եզրակացնել, որ Վեհափառ Հայրապետն իր Էկումենիկ գործունեության մեջ առաջնորդվում է այս զաղափարներով:

Էկումենիկ հարցերում Վեհափառ Հայրապետի նախաձեռնողի վերաբերմունքի արտահայտությունն է Մայր Աթոռում Միջեկեղեցական Հարաբերությունների Գրասենյակը կյանքի կոչելը՝ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանի պատասխանատվությամբ:

Խոսելով Վեհափառ Հայրապետի Էկումենիկ գործունեության մասին՝ չենք կարող անտեսել նրա նախաձեռնողությունը՝ կապված Հայ Եկեղեցու մասնակցությանը Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին:

ԵՀԽ-ի հետ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին արձանագրել է փոխշահավետ համագործակցության երկար տարիների փորձառություն, որը նպաստում է թե՛ Եկեղեցիների միջև աստվածաբանական երկխոսությունների հաստատմանն ու փոխադարձ վստահության մթնոլորտի ստեղծմանը և թե՛ քարեգործական մի շարք ծրագրերի իրականացմանը: Անդրադառնալով ԵՀԽ-ի հովանավորությամբ կատարվող միջոցառումներին՝ անվերապահորեն պետք է նշել, որ Հայ Եկեղեցին գործունե կերպով մասնակցում է ԵՀԽ-ի ծիրից ներս տեղի ունեցող բոլոր աստվածաբանական երկխոսություններին, որոնց ընթացքում շոշափելի արդյունքներ են արձանագրվել Ուղղափառ Եկեղեցիների հետ բանակցությունների ընթացքում:

ԵՀԽ-ի հետ համագործակցության մեր փուլ է սկսվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ԵՀԽ Կրթ. Սեղանի Հայաստանյան գրասենյակի գործունեությամբ, որն էլ՝ ավելի է ծավալվում Գարեգին Բ Հայրապետի քաջալերանքով:

Այս և նախորդ ծրագրերն ավելի ամրապնդելու և զարգացնելու նպատակով անցած երկու տարիների ընթացքում տեղի ունեցան երկկողմանի այցելություններ ԵՀԽ գլխավոր քարտուղար Կոնրադ Ռայզերի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի միջև՝ համապատասխանաբար 2000 թվականի սեպտեմբեր և 2001 թվականի փետրվար ամիսներին: Անդրադառնալով ԵՀԽ-ին Հայ Առաքելական Եկեղեցու մասնակցությանը, Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս առանձնակիորեն է արժևորում Էկումենիկ շարժումը, որին միտված է Մայր

Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական Հարաբերությունների Գրասենյակի գործունեությունը, և հավաստեց Հայոց Եկեղեցու պատրաստակամությունը ԵՀԽ-ի հետ հարաբերությունների զարգացման գործում:

Վեհափառ Հայրապետն ամձամբ կարևորում է ԵՀԽ-ի Կլոր Սեղանի և ECLOF գրասենյակները՝ հայ ժողովրդին բերող նպաստի համար:

Այսօր, որպես այս համագործակցության արդյունք, վերոնշյալ երկու բարեգործական կազմակերպություններն իրականացրել են մի շարք ծրագրեր, որոնք միտված են Հայաստանի ընկերային տնտեսական վիճակի բարելավմանը և զարգացմանը:

Հայ ժողովուրդը կարևորում է նաև այն հանգամանքը, որ Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը դասվում է այն կազմակերպությունների շարքը, որոնք դատապարտում են 1915 թվականի Հայոց Մեծ եղեռնը:

Արժանափիշատակ է 2001 թվականին Ծաղկաձորում տեղի ունեցած Եվրոպական Եկեղեցիների Խորհրդի «Եկեղեցիները երկխոսության մեջ» կոմիտեի և Արեվմիդայան ու Արևելյան վանականների հանդիպման կազմակերպումը: Ամենայն Հայոց Գարեգին Բ Հայրապետի զահակալության ընթացքում աշխուժացել են հատկապես Ուղղափառ քույր Եկեղեցիների հետ միջեկեղեցական հարաբերությունները, որոնք իրականացվում են Հայրապետական այցելությունների և համատեղ հայտարարությունների ընդունմամբ, ինչպես նաև աստվածաբանական գիտաժողովների կազմակերպմամբ: Թե՛ Հայրապետական այցելությունների և թե՛ Վեհափառ Հայրապետի օրհնությամբ իրականացված բոլոր միջոցառումների ընթացքում հրամայական են կապերի ամրապնդումը և զարգացումը: Այս հարցում անհրաժեշտ է անդրադառնալ, որ Էկումենիկ շրջանակներում Ուղղափառ ընտանիքը ներկայացնող բոլոր Եկեղեցիները, այդ թվում՝ Հայ Եկեղեցին, կարևորում են միջեկեղեցական շրջանակներում քաղաքական, տնտեսական, աստվածաբանական և բարոյական խնդիրներում համատեղ Ուղղափառ դիրքորոշման հստակեցումն ու արտահայտումը, որը նպաստելու է ոչ միայն Ուղղափառ քրիստոնեությանը, այլև համընդհանուր քրիստոնյա աշխարհին: Ուստի մեր Եկեղեցու համար կարևոր են 1965 թվականին Ադիս Աբեբայում տեղի ունեցած հինգ Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների միջև բանակցությունները և համատեղ աստվածաբանական հռչակագրի ընդունումը, ինչպես նաև Ուղղափառ Եկեղեցու ոչ-քաղկեդոնական և քաղկեդոնական ընտանիքների միջև բանակցությունները և դրանց ընթացքում աստվածաբանական և ընկերային-քաղաքական կյանքին առնչվող հարցերի շուրջ ձեռք բերված որոշումներն ու համաձայնագրերը²:

Վեհափառ Հայրապետն արդեն իսկ իր երկամյա գործունեության ընթացքում քավականին լուրջ ներդրում ունի իր երջանկափիշատակ մախորդների սկսած միությանը և համագործակցությանը տանող քայլերում: Այն ընթացքում առանձնա-

² Christine Chaillot and Alexander Belopolsky, *Towards Unity The Theological Dialogue between the Orthodox Church and Oriental Orthodox Churches*, Geneva, 1998.

րապնդումը հասարակական կյանքում՝ կապված քաղաքական, տնտեսական, երիտասարդությանը և այլ խնդիրներին առնչվող հարցերում:

Ամշուշտ, այս ամենն իրենց շարունակությունն են գտնելու և կյանքի են կոչվելու ապագայում, որոնք գալու են նպաստելու երկու Եկեղեցիների միջև կապերի զորացմանը:

Ջուզաֆեռաբար Հայ Եկեղեցին շարունակում է բարեկամական հարաբերությունների մեջ մնալ Ղպտի և Եթովպական Եկեղեցիների հետ: Սա կրկին անգամ ամրապնդվում է Վեհափառ Հայրապետի 2000 թվականի հոկտեմբերի 12-ից 21-ը Եգիպտոս և Եթովպիա կատարած այնելությունների ընթացքում, ուր նա հանդիպումներ ունեցավ համապատասխանաբար Ղպտի Ուղղափառ Եկեղեցու պետ Օննուդա Գ-ի, Եթովպիայի Թեաֆեդո Ուղղափառ Եկեղեցու պետ Աբունա Պաուլոսի և Ալեքսանդրիայի հույն Պատրիարք Պետրոս Է-ի հետ:

Արդյունավետ հանդիպումների և գրույցների ընթացքում Հայրապետերը բազմիցս շեշտել են միմյանց միջև գոյություն ունեցող ավանդական բարեկամական հարաբերությունները, որոնք նպաստում են ընդհանուր քրիստոնեական շրջանակներում Ուղղափառ Եկեղեցու վկայության ուժեղացմանը և էկումենիկ շրջանակներում Ուղղափառ Եկեղեցիների մասնակցության ընդլայնմանը: Բոլոր Եկեղեցիների միջև բարեկամական կապերի ամրապնդման հարցում հատկապես արժանափիշատակ է նորին Սրբություն Օննուդա Պապի և Վեհափառ Հայրապետի ստորագրած համատեղ հայտարարությունը, որում հավաստվում է իրենց պատրաստականությունը համագործակցելու ի շահ քույր Եկեղեցիների հոգևոր զարթոնքի և գորացման:

Վեհափառ Հայրապետի երկամյա հոգևոր գործունեության ընթացքում գործուն կերպով զարգանում են հարաբերությունները նաև Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու հետ:

2000 թվականի նոյեմբերին հանդիսավոր արարողությամբ Հռոմի Ս. Պետրոս տաճարում Վեհափառ Հայրապետին հանձնվեցին Ս. Գրիգոր Լուսավորչի մատուցները: Ամշուշտ, այս պատմական իրադարձությունը մեկ քայլով ևս երկու Եկեղեցիներին մոտեցնում է միմյանց և ամրագրում արդեն իսկ եղբայնափիշատակ վազգեն Ա և Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետերի օրոք սկսված համագործակցության գործընթացը:

Բողոքական և բարեկարգյալ Եկեղեցիներից բավականին սերտ են հարաբերությունները Անգլիկան և Դանիայի Լութերական Եկեղեցիների հետ, որոնց ներկայացուցիչները Հայաստանում ուղղակիորեն համագործակցում են Ամենայն Հայոց Կաթոլիկոսության հետ:

ՎԱՐԴԳԵՍ ՍՐԿԱՎԱԳ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՂՍ. ԷԶՄԻԱՇՆԻ

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԲՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Վեհապառ Տեր.

Շնորհավորումով Ամենայն Հայոց Կաթողիկոսիդ ծննդյան 50-ամյակը՝ անսովոր մի զգացում եմ ապրում, որն ինչ-որ տեղ անըմբռնելի է, ոչ երկրային: Թերևս սա եզակի դեպք է, որ ընձեռված է շնորհավորելու համազգային խոշոր գործչիդ ծննդյան հոբելյանը: Միաժամանակ պահն արժևորվում է նրանով, որ այդ հոգևոր առաջնորդը, գործիչը, անձը մեր դասընկերն ու համագյուղացին է:

1999 թվականի հոկտեմբերի պատմական օրը, երբ Մայր եկեղեցու զանգերի դղանջների ներքո ի լուր Հայոց աշխարհի ավերվեց, որ Դուք ընտրված եք Ամենայն Հայոց Կաթողիկոս, մեզանից յուրաքանչյուրը, հպարտության վեհ զգացում ապրելով՝ ակամա հիշեց այն օրերն ու տարիները, երբ ապրում էինք մանկության և պապանեկության ուրախ և անհոգ օրերը:

Արդ, հին և անմոռաց հիշողությունները վկայում են, որ կամքի ու աշխատասիրության այն շնորհները, որ ունեիք, անպայման տալու էին իրենց արդյունքները: Ճիշտ է, որ մենք չէինք կարող պարկեռացնել, որ մեր կողքի նստարանին մեծանում է Հայոց ապագա Հայրապետը և Հայոց Եկեղեցու հոգևոր առաջին սպասավորը, սակայն հեղադարձ հայացք զգելով մեր անցած ուղուն՝ այսօր հասկանում ենք և հստակորեն գիտակցում, որ աստվածային փնտրիչությամբ ամեն ինչ իր տրամաբանական շարունակությունն է ունեցել:

Այսօր երանությամբ են հիշվում այն օրերը, երբ Ձեր փունը դասամիջոցներին դառնում էր մեր ընդմիջման վայրը՝ լինելով անմիջապես դպրոցի կողքին: Երազի նման անցած օրերը, երբ մանկական խանդավառությամբ լսալսում էինք Սարգսի տարիի պարտադրած չամիչներին ու Գրիգոր քեռու դեղձերը համարեսելուն:

Նաև երջանկությամբ հիշվում են այն օրերը, երբ Ձեր՝ Եվրոպայում ուսանելու տարիներին Հայաստան վերադառնալիս այցելում էիք հայրենի գյուղ, գրուցում մեր ժողովուրդի և Եկեղեցու արժեքներից, դրանք ամրագրելու և զարգացնելու հեռանկարներից: Երբ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս 2001 թ. Ամանորին այցելեցիք Ոսկեհատի միջնակարգ դպրոց, համագյուղացիները և աշակերտությունը խանդավառությամբ էին լցվել՝ լսելով Ձեր զախության մասին: Անշուշտ, այդ երջանիկ օրը դեռ երկար կմնա աշակերտության հուշերում, որ նաև դրական ազդեցություն է ունեցել դպրոցի կրթական և բարոյական կյանքում:

Այսօր, երբ աշակերտները հաճախ հարցնում են Ձեր մասին, իրապես հեղադարձ հայացքով են միայն արժևորվում այն քայլերը, որ կատարեցիք Դուք դպրոցական տարիներին՝ հոգևոր կրթության անցնելով: Համայնական փիրապետության տարիներին կամքի դրսևորման ու նպատակաուղղվածության մեծ ուժ էր պահանջվում, որպեսզի շրջանցվեին ընդունված կանոններն ու կանխապաշարում-

ները, մանավանդ հոգևոր արժեքներին փարվելն ու հոգևոր կրթության մեկնելը: Անշուշտ, դա դժվարընկալելի էր նաև մեզ համար: Բայց շուտով՝ հոգևոր ճեմարանում Ձեր ուսումնաստության ատաջին փարիներին իսկ մենք հասկացանք, որ մեր ընկերն ընտրել է իր ուղին: Այնհայտ էր, որ Դուք ոչ միայն ուսանում էիք, այլև ապրում հոգևոր կյանքով՝ վկայելով այն նաև մեզ՝ Ձեր դպրոցի և մանկության ընկերներին:

Այսօր, երբ թղթին են հանձնում այս մտքերը, հպարտության, ուրախության զգացումները նաև շաղախված են այն հստակ գիտակցությամբ, որ Ձերոք Սրբության ուսերին է ծանրացած Եկեղեցուն և ազգին ծառայելու դժվարին, բայց քաղցր բեռը:

Վեհափառ Տեր. կրկին շնորհավորելով Ձեր եխնամյակը՝ ցանկանում ենք Ձերոք Սրբությանը քաջատոգթություն և երկար փարիների անխաթար գործունեություն:

Դուք ընտրվել եք Ամենայն Հայոց Կաթողիկոս ազգի համար շրջադարձային մի շրջանում, երբ ընկերային և քաղաքական բարեփոխությունների բովում ժողովուրդը ցանկացած գործչից մեծ ակնկալիքներ ունի, հատկապես հոգևոր գործչից և հոգևորական դասից: Ճանաչելով Ձեզ՝ վստահ ենք, որ Ս. Էջմիածինը Աստծո փնտրիչությամբ և Ձեր ատաջնորդությամբ Հայոց աշխարհի վերափոխման ու վերագարթոնքի կենտրոնն է լինելու:

Ձեր վարած հոգևոր գործունեությունը եկեղեցական փարքեր աստիճաններում վկայում է այն մասին, որ ոչ մի փարակույս չկա, որ Ձեր հայրապետության փարիներին Հայ Եկեղեցին և հայ ժողովուրդը եասնելու են որակական նվաճումների, և մեր բազմաչարչար ժողովրդի ազգային և պետական խնդիրները Մայր Եկեղեցու եովանավորությունն են կրելու: Մեր հայացքը միշտ ուղղված է Լուսավորչի Աթոռին՝ հպարտության, վեհության և գորավիզ լինելու զգացումներով:

Հանուն Ոսկեհալի միջնակարգ դպրոցի, դասընկերների և համազրուղացիների՝

որդիական խոնարհությամբ մալրչիմ ի համբույր

Ձերոք Սրբության Օծյալ Ս. Աջույն՝

ՄԱՆՎԵԼ ՄԱՆՈՒԿՅԱՆ

«ԶԻ ԸՍՏ ԸՆՏՐՈՒԹԵԱՆՆ ՅԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆՆ ԸՍՏՈՒԾՈՅ ՀԱՍՏԱՏԵՍՑԻ»

Երբ մարդ-անհատը բոլորում է այսրաշխարհային կյանքի քառասուն տարիները, անցնող այդ չորս տասնամյակները երևի թե անցնում են տարբերայնորեն, որովհետև տվյալ անհատի կյանքն այդ ընթացքում անառարկելիորեն ուղղորդվում է իր ծնողների ուղղակի և անմիջական հսկողությամբ ու նրանց՝ կյանքի կուտակած տարիների փորձառության հոգեգրով թելադրանքով: Օրինապահ և բարեպաշտ ընտանիքներում միմիայն այդպես է ձևավորվում ու այնուհետև լիարժեքորեն կյանքի հունի մեջ մտնում մարդ-անհատը:

Դուք, իհարկե, Վեհափառ Տեր, վաղ հասակից կյանքի այդ ուսումնառությունը ձեռք եք բերել ոչ թե Ձեր ընտանեկան անմիջական հարկի տակ, այլ ամալել մի կյանքի դպրոցում, հոգևոր դպրոցում, Մայր Աթոռի արժանավոր միաբանության և Ձերդ Սրբության անմիջական նախորդներից մեկի՝ եղջանկաեղիշատակ և լուսանոգի Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրական անձնական հսկողության և հոգատարության ներքո:

Դուք կարծեք գրկված եք եղել երիտասարդական անմոռաց վայելքների ըմբռնումից այդ տարիների ընթացքում, որովհետև Ձերդ Սրբությունն արդեն վաղ հասակից ինքնակամ ընծայվել է ազգին, Հայրենիքին և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն բոլորանվեր ծառայելու նվիրական գործին:

Հավերժական ընթացք Ձեր անսխալական ընդդրյալ ճանապարհին...

Ձերդ Սրբություն, Դուք ոչ միայն բոլորել եք այսրաշխարհային կյանքի այս չորս տասնամյակները, որ մարդկային կյանքի մի թվաքալ ակնթարթն է միայն, այլև թևակոխել և իր լրումին եք հասցրել նաև հինգերորդը, որի յուրաքանչյուր տարին Ձերդ Սրբությանը շնորհել է խոհականության և իմաստության որոշակի մի կուտակում:

Լուսավորչի գահին արժանիորեն բազմելու Ձեր գահակալությունը ցավալիորեն համընկավ ժողովրդացունց մի իրողության: Տեղեկանալով այդ մասին, Դուք միայն մի քանի ակնթարթ կորցրեցիք Ձեր հավասարակշիռ ու լրջախոհ կեցվածքը: Այնուհետև աստիճանաբար փրկապետեցիք Ձեզ, կարճ ժամանակում ի մի բերեցիք Ձեր մարքերը և ապա շարունակեցիք Ձեր ասելիքն ու գործերը: Անժխտելի է, որ Ձեր փոթորկուն մարքերի այդ ակնթարթային թռթափումը և ակնթարթային հավասարակշիռ վիճակին վերադառնալը զայիս է Ձեր իսկ անձի՝ ծննդավայրին բնորոշ խառնվածքից, դիմադրել և հաղթահարել բոլոր այն խութերն ու խոչընդոտները, որոնք հառնել և հավանաբար հառնելու են դեռևս Ձերդ Սրբության առջև հետագա Ձեր ազգանվեր ու եկեղեցանվեր ծառայության և գործունեության ընթացքում:

Մեր ժողովուրդը դեռևս հուսառատ տպասելիքներ ունի Ձերդ Վեհափառության կենսախիռն ու ավտոնով լեցուն անձից: Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռին բազմելու առաջին իսկ օրից Դուք անմնացորդ լծվեցիք և նվիրվեցիք մեր ժողովրդին և

Եկեղեցուն ծառայելու ամենամկրակյան գործին: Մեկը մյուսի երևից մեր հավա-
րավոր ժողովրդի առջև իրենց դոմները բացեցին վերականգնված և վերակենդանա-
ցած, նաև նորակառույց եկեղեցիները, որոնք այնքա՛ն աներաժեշտ էին փասնամ-
յակներ շարունակ թո՛նի կերպով անասրվածության գաղափարախառության մեջ դե-
գերող ու փառապաղ մեր ժողովրդի համար: Հայաստանի անկախացումից հետո մեր
ժողովուրդը երևի թե վերջնականապես և հավանաբար ընդմիշտ վերագրավ իրեն,
դնայի վեր կարկառեց իր ձեռքերը և վստաձորեն, անթաքույց հայացքով փառաբա-
նեց Երկնավոր Տիրոջը, որովհետև փասնամյակներ շարունակ նա գրկված էր եղել
հոգեթով այդ առաքելությունից, թեև այդ ընթացքում մեր ժողովրդի մեծամասնությու-
նը չէ՛ր մերժել իր բարեպաշտ հավատը և թաքուն կամ անթաքույց շարունակում
էր խոնարհվել ու պաշտել իր հավատը՝ փառաբանելով Երկնավոր Տիրոջը և կամ
գթասրություն և մեղքերի թողություն հայցելով Ամենակարողից:

Ոչ միայն Ձեր՝ Լուսավորչի գահին բազմելուց հետո, այլև դրանից էլ շատ առաջ,
դեռևս Արարադյան Հայրապետական թեմի գործունեությունն անաչառորեն, խզի՛
մբողջ և անմնացորդ նվիրումով վարելու ընթացքում բացվեցին հոգեկերպ լուսավո-
րության օջախներ, Հայրորդաց տներ և այլ մանկապարտանեկան գեղազիլ տալան ու
մարմնակրթական հաստատություններ, որտեղ դաստիարակվում և ձևավորվում են
հազարավոր բարեպաշտ պարանիներ ն երիտասարդներ՝ հեղափոխում, անշուշտ,
իրենց գործունեությամբ պիտանի լինելու ակնկալիքով իրենց ժողովրդին, Հայրենի-
քին ու Սուրբ Եկեղեցուն:

Թեև մաղթանքի խոսքը միշտ և հանապազ Վեհափառ Տիրոջն է վերապահված,
բայց այս պարագայում մենք՝ սովորական մահկանացուներս, աղերսագին հայցում
ենք Ամենագթառար և Ամենագոր Տիրոջից, որ Նա շնորհի Ձերդ Սրբությանը ան-
կողորմ կամք և անբեկանելի կորով՝ շարունակելու և իր լրումին հասցնելու ժո-
ղովրդանվեր և եկեղեցանապատ Ձեր թլուր ծրագրերի ու նախատեսումների իրակա-
նացումը:

«Փառք ի բարձունս Աստուծոյ, ևս յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»
(Դուկ. Բ 14):

ՎՈՂՈՂՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

«ԷԶՄԻԱՄԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ՓՈԽՆԱԲԱԳԻՐ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄՏԱԾՈՒՄՆԵՐԻՑ*

Հայր զհորեր պատմության դասից, որ կարելի է ապրել մեռնելով, բայց ոչ մահանալ, րիզախոց վերքից արյան փոխարեն կյանքի սեր հոդդել, արևաքամ մարմնում կրել հոգի վեհ և անխոցելի, որ ապրի հավերժ ոգին հայ կյանքի: Ով ականջ ունի, բլթակ հավաքող հայոց պատմության, նա կհաստատի միջով անվարան, որ Եկեղեցին է նշել հայկազյան ազգի անմեռ այդ ոգին: Եվ ո՛վ կտրանա, որ նշել է նա ծնող մի բարի, սրբություն սրբոց ամեն մի հայի, անառիկ ամբոց: Այո, նա նշել է և հավերժ կմնա զգաստությանց մայր, որ զարդարում է իր զավակների կյանքի ուղին անմահության անանց փառքով:

(«Էջմիածին», 1985, ԺԱ-ԺԲ, էջ 56)



1915 թվական... Երկրորդությունը պատմության բնմ ելան սոված զայլերի իրենց ունակով: Հոշոքովն ժողովուրդը հայոց: Մեկուկես միլիոն ձայների հառաչ մնաց օդում կախ, որ պիտի հնչեր, ուժգին թափով վրեժի կոչեր, Մարդարապատում հրաշագործներ, հայ զինվորների շուրթերին անմեռ դառնար վասն ազատության և արդարության քայլերդ հաղթական: Եվ ո՛վ է լսել երբևէ, որ խավարող կովի լույսի դեմ և հաղթի նրան, որքան էլ լույսն այդ լինի թույլ, նվաղ:

(«Էջմիածին», 1985, ԺԱ-ԺԲ, էջ 57)

* Ներկայացվող հարվածները ցաղված են Վեհափառ Հայրապետի տառերի տարիների ցարգանքից, հարցազրույցներից և հոդվածներից, որոնք տպագրվել են «Էջմիածին» ամսագրում և Միլիոնի ու Հայաստանի մամուլում:



Երկարամիջ դարերի կուսական երկունքով ծնեց ժողովուրդը հայոց հրաշք մի մանուկ՝ երկիր Նայաստան, որի սրեղծագործ մեկ օրը համարժեք պիտի դառնար նրա ապրած մեկ տարվան, նվաճումների տարին՝ ողջ դարի:

(«Էջմիածին», 1985, ԺԱ-ԺԲ, էջ 57)



Քրիստոսի խաղաղությունը, որը համակ սեր է, հույս և հավատք, աներեր վեմն է մարդկային կյանքի կայուն և համապարփակ խաղաղության, այն վեմը, որի վրա «Ողորմություն եւ ճշմարտություն պապահեցին, արդարություն եւ խաղաղություն համբուրեսցին» (Մաղմ. 2Դ 11):

(«Էջմիածին», 1986, ԺԱ-ԺԲ, էջ 46)



Քրիստոնեության երկհազարամյա պատմության ընթացքին հաղաղության Սերմնացանի բարի հունդերը միշտ չէ, որ ընկել են մարդկային հոգու և մարմնի պարարտ ակուններում, այլ ավելի հաճախ ավերարանական սերմնացանի առակի նման՝ չոր, փայտակոտ ու որոմնակալած անդաստաններում: Իսկ ավերարանական ճշմարտությունն այս է՝ «Ձի ոչ եթէ ի փշոց քաղեն թուզ եւ ոչ ի մորենույ կթեն խաղող» (Դով. Զ 44): Արդարեւ, թշնամներից սիրո և արդարության պրուդենտ չես կարող քաղել և ոչ էլ պատերազմի, խափարի ու արյան մեջ առաջընթաց և զարգացում արձանագրել:

(«Էջմիածին», 1986, ԺԱ-ԺԲ, էջ 46)



Հաղաքակրթության զարգացման մեր դարի տիեզերական չափանիշները հասարակական-տնտեսական կյանքում և բնության մեջ երբեմն թողնում են այնպիսի ցավալի հետքեր, որոնք ոչ միայն խոչընդոտում և կասեցնում են կենաց ծաղի դարար, կենսունակ ուրերի բնական աճը, այլև երբեմն արյունծորան դարձնում հասարակություն միջուկը:

(«Էջմիածին», 1986, ԺԱ-ԺԲ, էջ 46)



Դատական իշխանությունը հաստատական կյանքի փրփուկով զայլվեցրակն է՝ կոչված կենսաբար արյուն և ավիշ մղելու հատկապես այնպեղ, ուր վնասված, խեղաթյուրված կամ ուրնահարված են ճշմարտությունը, արդարությունը և իրավունքը, այնպեղ, ուր վրանգված է մարդը՝ իր քարոյակաւնով ու կենսական շահերով: Արդարեւ, դատավորը արդարության սուարյալն է, սպասավորն ու իշխանավորը, և հարկ է, որ օրենսգիր լինի, քայց ոչ միայն, քանզի օրենքը քարին հաստարելու համար է: Ուր Բարին է, այնպեղ Աստված է՝ Եր օրհնությամբ, շնորհների ու պարգևների ստարամնոն քաշխումով:

(Դատավորների երդման արարողության խոսքից,

«Էջմիածին», 1999, Ա, էջ 36)



Դժվար է ճանաչում ձեռք բերելը, առավել դժվար՝ գնահատված ու սիրված լինելը: Տամբնդհանուր ճանաչումն ու սերը անխուսափելիորեն գայիս են, երբ ձեռաց գործերում, հոգու և մարքի արարումներում կիզակիրվում են հայրենի երկրի և ժողովրդի ձեռքբերումներն ու կորուստները, սլացքներն ու սպասումները, քացահայրվում է մարդն իր ներաշխարհով:

(«Էջմիածին», 1999, Դ, էջ 32)



«Ելն ի Վիրապէն» տունը հաղթանակի տուն է, մեր ժողովրդի համար այս օրը հավարքի, հաղթանակի օր է, և հաղթանակի խորհուրդը խրացրել է այս նշանի՝ Լուսավորչի Ս. Աջի մեք, որը դարեր շարունակ առաջնորդել է մեր ժողովրդին, միշտ ամուր պահելով նրա հավարքը՝ զամված այս Աջին, և պարահական չէ, որ մեր հայրերից Դավրիժեցին արձանագրել է թն յուրաքանչյուր հայի հոգին կապված է Լուսավորչի Աջին:

(«Էջմիածին», 1999, Ե-Զ, էջ 46)



Ջրհարոնեությունը մեր ժողովրդի համար արտաքին զգեստավորում չէ, այլ մաշկի գույն, նկարագիր, էություն, որ ծաղկող գրչով դրոշմվել է մագաղաթին և մարյաններ շնչավորել, աներկբա հավարով հայրենյաց մեր

սուրբ հողին մարմնավորվել որպես խաչքար, վանք ու եկեղեցի: Մարմնա-
ծաշնչյան է հայաստանը, հայ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու գոյութ-
յամբ, մեր ժողովրդի անցյալ ու ներկա հիշատակներով, ավելի ևս՝ նորօրյա
մեր հավատի վերագարթներով, որպես Երաշխիք աստվածաշնչյան մեր
հարստության:

(«Էջմիածին», 1999, Ե-Ձ, էջ 47-48)



Սարդարապատի նվիրագործված խորհուրդը մեր նախահաղթ թանկա-
զին ավանդն է մեզ, որ հազարապարկվում է մեր հոգու գուլար՝ մերմունքնե-
րով ու սնուկյան գրով՝ հայոց ժողովրդի իղձերի ու տեսիլքների ավազանից
ծնունդ առած չինացող պարզամով. «Սերունդներ, դուք ձեզ ճանաչեք Սար-
դարապատից»: Ճանաչենք Սարդարապատի ոգին՝ ապրենք ոգին, որ
հաղթական է նախ և առաջ մեր Մարծուն և ապա ինքներս մեզ ապավինելու
քաջությամբ ու վստահությամբ, որպես արքայազնություն այն ճշմար-
տության, որ ամեն ժողովուրդ ինքն է իր կորուստների ու անկումների պա-
րասխանատուն, ինչպես և նվաճումների ու հաղթանակների կերտողը:

(Սարդարապատի 80-ամյակի հանդիսության խոսքից)



«Ո՛ր է մահ, յաղթություն քո. ո՛ր է, դժոխք, խայթոց քո» (Ա Կորնթ. ԺԵ
55): Հարության հաղթական խորհրդին առհավելս վստահած մեր ժողո-
վուրդը այս հարցադրումով դարեր ի վեր մահեր է ոտնակոխել՝ հավա-
րարիմ մնալով հավատքով ամուր իր հույսին և սիրով լուսառար իր լա-
վարանությունը:

(Երկրաշարժի փաստամյա փարեկիցի խոսքից)



Շուրջ 2000 տարիներ առաջ, այսպիսի մի գիշեր, Արևելքի երկիներդ ողորդ-
ված էր խորհրդավոր լույսով՝ Լուսաստղի շողաբաժակ ու պայծառ շիթերով,
որոնց հեղ Վերածարդ հրեշտակները սաղմոսեղծում էին Մարմնածորդու՝
Մանուկ Դսուսի ծնունդը, անընդմեջ կրկնելով՝ «Փառք Աստծուն քար-
ծունքներում, և երկրի վրա խաղաղություն, և հաճություն մարդկանց մեջ»:
Սքանչելի գիշերվա վեհագույն խորհուրդը տեսանելի եղավ խորագեղ մո-
գերին: Նոռու-հեռուններից երանք ճանապարհվել էին Լուսաստղի առաջ-
նորդությամբ՝ երկրպագելու, իմաստուն նվերներ մատուցելու և նորածին

մանկանը՝ ճանաչելով Նրան արքա երկնային և երկրային թագավորությունների, որպես Աստծո Որդի և Աստված:

Գերեվարված, անևշան մի երկրի փոքրիկ թաղաքում, ամենահամեստ հարկի տակ ծնունդ էր առել արքա, որ չունեի հարստություն, ծառաներ, զորքեր ու զենք, սակայն հաղթեց աշխարհին: Հաղթեց Իր Սիրով: Սիրով մուտք գործեց խրճիթներ, նվաճեց անհասանելի թվացող տալարներ, հզոր թագավորություններ՝ անենուր հաստատելով առ Աստված Հավատքի վստահություն, Հույսի լավատեսություն, Սիրո ջերմություն, Սիրով՝ Հաշտություն:

(Ա. Շենդյան քարոզիչ, 1993)



20-րդ դարի պարտության մեջ երկրորդ անգամ Հայոց երկնակամարում վարդազունող լույսի առավուրները շողարձակում են եռագույնի վեհ ծածանումով: Երկրորդ անգամ հայ ժողովուրդը վերագրել է ազգային իր անկախ պետականությունը՝ կարևոր պայման ու հենարան, ներշնչման աղբյուր և համազգային նպատակների ու ծրագրերի շուրջ մեր ազգային համախմբման համար հրավերը չպահանջող բացառիկ առիթ: Սիրով միաբանված միայն ի գորտու ենք տեր կանգնել այդ առիթին և հաստատել ազատ ու անկախ, հզոր ու բարգավաճ Հայրենիք կերտելու մեր պարտքի գիտակցությունը, պատրաստակամ կամքն ու աներեր վստահությունը:

(Հայաստանի անկախության տարեդարձին ասված խոսքից)



Մենք հոգևորականներ ենք, բայց անհատներ ենք, ունենք մեր նկարագիրը, հոգին ու արժանապատվությունը: Ծառուն ենք Աստծու, մեր ժողովրդի և մեր խղճի:

Որևէ գաղափար ընդունելի է մեզ համար այս երեք նվիրական հասկացություններին ներդաշնակվելու պարագային:

(Նոգևորականաց հավաքին ասված խոսքից, 1994)



Ջրհարունեական վարդապետության վեմը սերն է և նրա բարոյակաւության հիմնադրույթներում «իրավունք» և «պարտականություն» հասկացությունները անքակտելիորեն շաղկապված են:

(Ջարոզից, 1994)



Պատմության ընթացքն այնպես էր զարգացել, որ մեր ժողովուրդը հենացել էր Նայ Եկեղեցուց, հայ հոգևոր արժեքներից, սակայն ամեն հայրողի իր մտքում, հոգում ծրարել է հավատը, իր նախնիաց սրբազանությունը միտքը:

Այս իսկ պարճատու ծանր պարտականության առջև է գրկվում այսօր հայ հոգևորականը: Նա պետք է նոր հեջեղությամբ, նոր հավատքով ու նոր սիրով մարչելի դարձնի Զրիստոսի Ավետարանը. նրա վեհ, բարոյական առանցքների վրա խառնի հայրողու միտքն ու նկարագիրը:

(Զարոգից, 1994)



«Ես հաղթեցի աշխարհին»:

Աշխարհի ո՛չ մի տիրակալ, ո՛չ մի բռնակալ ու թագավոր, ո՛չ մի հեղափոխական երբևէ այսպես չի բարբառել: Բայց գալիս է Զրիստոս՝ սովորական մի հյուսնի որդի, և վստահորեն ասում «Ես հաղթեցի աշխարհին»:

(Ս. Նարոյան քարոզից, 1994)



Մենք պետք է գիտակցենք, որ նրանց (աղանդների - խմբ.) նկրտումները ազգադավ են, որ նրանք մեզ որպես «ընծա» ընկնվածության ու թուլության բարդույթ են բերում, որից ձերբազատվելը հնար առնալի դժվար է լինելու:



Սուրբ Էջմիածինը հայության սիրտն է: Էջմիածինը Ամերիկա հասած ծվարած հայի՝ հոգու մեջ է, Բեյրութում ու Նախալում փրկված, աշխարհի տարբեր ծագերում դեզերող հայի կարոտներում:

(Էջմիածնի տոնին ասված քարոզից, 1992)



Նայ ժողովրդի արյան ու հիշողության ծալքերում միշտ էլ եղել է հաղթելու, ապրելու մեծագույն ձգտումը. և մերը ոչ միայն մարտիրոսության պատ-

մության է: Մեզանից յուրաքանչյուրն ունի իր Ավարայրը, որտեղ մաքա-
րում է տոգորում՝ հաղթելու վճռականությամբ: Եվ այդ ոչ միայն մարմնա-
վոր գոյության, այլև նախ և առաջ վասն հոգևորի կոիվ է:



Նայ Եկեղեցին ազգային, ապակուսակցական հասարակություն է և նա բո-
լոր հայերին իր զավակներն է նկատում՝ չտարբերակելով նրանց գաղա-
փարախոսական, քաղաքական համոզումները, քայքայ և միաժամանակ ուշ-
խառնանք տանելով, որպեսզի կուսակցական շահերը գերակա չդառնան
ազգային մտածողության հանդեպ:



Նավարդ, հույսը, սերը երբեք ամբողջովին չեն բացարձակ ու չեն բա-
ցարձի Աստծուն, քայք մարդուն մարդ կպահեն, առավել ևս, երբ սկզբ հա-
վարդ հայի՝ հավատն է, երբ հույսը մաքուր լույս է և այս մութությունի մեջ
կախված վաղվա հոյսն է:



Խոնարհվում եմ մեր ժողովրդի հավատավոր հոգու և հանդուրժողակա-
նության առջև: Այնքան ներողամիտ և լայնասիրտ է, որ նույնիսկ թվում է, թե
անտարբեր է առ Եկեղեցին իր նախանձախնդրության մեջ:



«Մահ իմացեալ անմահութիւն է» կարգախոսը պիտի փոխվի մեր ժո-
ղովրդի համար, այսուհետև պիտի ասենք. «Կյանք իմացալ անմահություն
է»:

Այո՛, մենք այլևս պիտի ապրելով ապրենք, հաղթելով ապրենք:

Հայրենասիրությունը բանաձևելու կարիք չունի. նրանով պիտի ապրեն,
գործեն, ապրեն:



Եկեղեցին մեր ժողովրդի հոգու ծննդավայրն է, ժողովրդի ոգեղեն առ-
ժեքների գանձարանը: Եկեղեցին եղել ու պետք է մեկ ժողովրդի պատմուք-
յան ու մշակույթի կրողը, կերտողը, ազգային հայրենասիրական ավանդ-

ներև ու ավանդությունները շարունակողը:

Չէ՞ որ մեր եկեղեցիների գմբեթները նաև դեպի երկինք ներված մեր գոյարևման բոունցքներն են:



Քրիստոնեական դաստիարակությունը սիրո, հավատի բարի գործերի, ազնիվ նկարագրի, գեղեցիկի, արդարի ու ճշմարիտի գնահատման ուսմունք է, և դա ամենեին չի նշանակում մոլեռությունից սերմանել:



Տայ Առաքելական Եկեղեցին պայքար չի մղում որևէ կրոնական կազմակերպության դեմ: Մեր Եկեղեցին ունի մեկ նշանաբան՝ իրականացնել իր առաքելությունը ժողովրդի կյանքում: Հաջողությամբ և արդյունավետորեն իրականացնելու դեպքում կրոնական այլաժին հոսանքների տարածումը կանխարգելելու խնդիր չի կարող լինել:



Եկեղեցու այժմյան առաջնահերթ խնդիրը հոգևոր զգացումը վայելելու կերպով հայ ընդանիքից ներս տարածելն է, Եկեղեցական տոնացույցը ժողովրդյան կյանքի հետ համախառնելը, որպեսզի Եկեղեցու օրհնությունն ամեն պահի իր զավակաց հետ լինի:



Քրիստոսով խնամարարված* կենաց ճանապարհը 2000 տարի անցնել ենք՝ հաղթահարելով բազում փորձություն ու դժվարություն «Հաաար քո կեցուցե՛ գեղ»։ Մեներեք վստահությամբ ստանձնել ենք ամենայն զրկանքների վասն հավատի, վասն հայրենյաց։ Այսօր վերահասարարված Հայոց նոր անկախությունը, Արցախի ազատության անօտարելի իրավունքը ձևոր

* Սկսած այսօրեղից, բերում ենք հաղվածներ Նորին Սրբության Կաթողիկոսական ընտրությունից հետո խոսված Հայրապետական քարոզներից և Կոնդակներից:

ենք բերել ապահով, հրջանիկ գալիքի ամենակարևոր գրավակառններից մեկը: Մի քանիսը գորացնելու, մեր կյանքը բարձր դարձնելու սրբազան պատասխանատվության համեմատությունը մղում է մեզ սիրով փաբանության, խաղաղ, սրելողծագործ կյանքի, որպեսզի 3-րդ հազարամյակ մուրց գործենք վաստակյալ իրավունքով մեր տեղը հաստատված ժողովուրդների մեծ ընտանիքում:

20-րդ դարը մարդկային պատմության մեջ նշանավորվեց գիտական աննախընթաց նվաճումներով: Մարդը նյութական աշխարհի ճանաչողության մեջ հաճախ մոռացավ Աստուծո գոյությունը, անտեսեց, որ անհրաժեշտ է հավասարազոր և առավել ևս գորացնել հոգևոր աշխարհը իր կյանքի: Երբ դարը կարող է հոգևորով իմաստավորման, քրիստոնեական բարոյականի վերաբերման, որպեսզի գիտության նվաճումները ծառայեն միայն բարիքի սրելողծմանը, մարդկային հրջանկությանը: Քաղաքակրթությունը փակուղի է մղում, երբ չենք տեսնում, որ առաջագործ է տիեզերքը, ուր ամենայնը շաղկապված է ներդաշնակորեն, ուր ամենայնը բարիք է ծնում, երբ մենք Աստուծոց մեզ շնորհված կամքի ազատությանը ընդունում ենք բարին, առաքինին, արդարև ու ճշմարիտը՝ Աստուծո կամքը:

(1999 թ. դեկտեմբերի 31-ին հեռարձակված քարեմուրի պարզամիջ. «Էջմիածին», 2000 թ., Ա, էջ 4-5)



Պատմության մեջ ակնթաղ է կարճատև այն ժամանակահատվածը, որ Մարդացյալ Աստված Վրդու Քրիստոս, գործեց մարդկանց մեջ: Այդ ակնթաղը փոխեց ժամանակի ընթացքը՝ ամենուր հաստատելով առ Աստված Վավարքի վատահություն, Վոյսի լավատեսություն, Միտ ջերմություն, Միտով՝ հաշտություն միմյանց և Աստուծո հետ: Եվ արդ, տիեզերքի, բաց է ճանապարհը դեպի Աստված, և մեզ է թողնված ընտրությունը:

Վերտին կանգնած ենք Աստվածահայտության հրաշքի առջև և երկու հազարերորդ անգամ ունկնդիր ենք «զի ծնա՛ս ձեզ այսօր Փրկի՛ք» երկնաառ մեծ ավերիսին: Մարդկային հոգիներում երկուհազարերորդ անգամ այս ավերիսը նորոգում է վեհախորհուրդ գիշերվա հիասքանչ պահը Բեթեհեմի: Երկուհազարերորդ անգամ մեր հոգու աչքով հեղնում ենք նրկներում պայծառ շողացող աստղի ընթացքին և լույսի արձակ շիթերի մեջ վերտվարող հրեշտակների հետ սաղմոսերգում «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ համութիւն» (Ղուկ. Բ 14): Երկուհազարերորդ անգամ Մանուկ Վրդուսի սնարի առջև Արեւելքի խորագետ մոզերի հետ «խոնարհեալ երկխդիս» երկրպագում, օրհնում և փառաբանում ենք

Մարդացյալ Աստուծոն՝ ընկրանեք սրտի, որ խոնարհ մատրին փոխադրեն, են փառաշուք փառարներ, փոռակառ հրապարակներ ու սքահներ, մոգերին և հովիվներին՝ քրիստոնյա պեպություններ ու ժողովուրդներ՝ առաքնորդ Հովվապետներով, բազմահազար հեղեղեղականներով, քրիստոնյա նախագահներով ու վարչապետներով: Փա՛նք Զրիստոսի ամենագործ Մենեղյան, որ լուսապսակ զարդարում է ամեն փարեմուք:

«Զրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»:

Զրիստոս ծնվեց, սակայն ոչ այլուր, եթե ոչ՝ մարդկանց՝ մեր հոգիներում՝ Իր Ավետարանի կենարար խոսքով ազնվացնելու մարդկանց մտածումները, ուղղելու նրանց ձեռաց գործերը, ճշմարտության և բարու արժեքներով իմաստավորելու մարդկային կյանքը:

(Մենեղյան պարզամից. «Էջմիածին», 2000 թ., Ա, էջ 10-11)



Երկու հազարամյակ բազում ժողովուրդների համար Լուսո խորան է երբեմնի անշուք ու համեստ մատրը Բեթղեհեմի, որ Լախախնամության սահմանումով մարմնավորվեց Սերն Աստվածային, ծնունդ առավ որպես խնամքի կարող մանուկ և Աստվածածնի գթութ ձեռքերով խանձարուրվելով՝ դրվեց մատրում: Մանուկ Հիսուսի «լեղի բնակութեան» խորհրդաշար այս կամարներից ներս բոցաշունչ մարգարեի սրբախոս ձայնն է դողանքում առնիշտ՝ ժամանակի հեռուներից մեզ ալվելով: «Մեզ համար մանուկ ծնվեց» և «Լա պիտի ընտրի բարին»: Աստվածային Իր Սիրով Տերն այցի եկավ մեզ՝ ընդմիջար բացելու մեր առջև փրկության ուղին, որպես Լուս աշխարհ եկավ՝ լուսավորելու ճանապարհը դեպի Բարին: Աստվածահայրությանը ժամանակի նոր պիտույրը՝ հեղափոխեց աշխարհը: Խոնարհ մատրից ճառագած Լուսը թափանցեց չորս ծագերը՝ մոլորակի՝ սփռելով սեր, խաղաղություն, եղբայրասիրություն ու համերաշխություն: Որքա՛ն մխիթարակառ է հավատալ, որ Աստված մեզ հեր է, իմանալ, որ բաց է ճանապարհը դեպի Տերը, հուսալ, որ մարդկային մեր կյանքով գործակիցներն ենք մեր Տիրոջ՝ Հիսուս Զրիստոսի փրկարար առաքելության:

Աստվածահայրության փենզերական խորհուրդը Փրկի Սուրբ Մենեղյան 2000-րդ տարեդարձին համախմբեց քրիստոնյա երկրների հոգևոր ու աշխարհիկ պետերին Բեթղեհեմի Սուրբ Այրի մեջ, խոնարհվելու խաղաղության Իշխանի, Սիրո Ավետարների սնարին և Տիրառաքօրհնությունն սրանալու՝ իրենց ժողովուրդն ու պեպությունը առաջնորդելու դեպի բարի առաքելություն:

Ազգ շնորհընկալ ենք, Տեր:



Արարարի մարտի հայեացքի դիմաց Եռագոյնի վեհապետի նոր ծածանումով Հայոց Ոստանում վերստին պարմական յուսատար օրեր է ապրում Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Մայր Աթոռը՝ 1700-ամեայ յիշողութեամբ, աշխարհասփիտ մեր ժողովրդին ի հոգևորս միատրելու նուիրական առաքելութեամբ:

Աշխարհասփիտ մեր ժողովրդի համար ցեղասպանութեամբ սկսում դարձնում է արցախեան ազատամարտի յաղթական շնչով, հայրենի հողի փոքրիկ մի հատումում Աստուծոյ շնորհով ու ողորմութեամբ, մեր արի կամքով հաստատում է նոր անկախութեամբ: Տասնամեայ մաքառումների, զոհողութիւնների ու թանկ կորուստների գնով իրականացել է դարաւոր մեր իղձը: Արդ, ինչպէ՞ս կարող ենք նահանջել ժամանակաւոր դժուարութիւնների առջև, ինքնակամ արունել ահագնացող մահաբեր արտագաղթին: Ինչպէ՞ս կարող ենք հեռանալ ազատութեան յոյսով արժնորոշում, անկախութեամբ զօրութիւն առնող եւ կենսւք պարզելող Նոր-Հայրենիքից, երբ դարերի մէջ բազմիցս հիմնիվել վերաշինել ենք մեր տունը, որպէս փիւնիկ յառնել մոխիրներից: Արիանաւք յոյսով ու հաստատով, զօրեպնդուներ վրձնականութեամբ՝ մեր պարմութեան բեկումնային շրջադարձը ապրելու: Զինուներ լաւարեւութեամբ, որ ի լրումն ժամանակաց, ի լրումն դարի՝ Աւարարանի յոյսով սիրոյ, խաղաղութեան, արդարութեան ու հաշտութեան նոր առաւօր է բացուելու աշխարհի վրայ, մեր Հայրենիքում:

Հայ Եկեղեցին դարեր ի վեր եղել է անկախութեան սրբազան գաղափարի կրողը եւ արծարծողը հայ հոգիներում, սրբօրէն պահպանողը հայ ինքնութեան, մշակութային գանձարանը հայոց: Առաքելաշաւիղ իր ընթացքով, մեր սուրբ հայրերի աստուածասէր ու հայրենապաշտ ոգով Հայ Եկեղեցին պիտի շարունակի հայապահպան իր առաքելութիւնը Հայրենիքում եւ Միփոքի հայոց կեանքում: Նոգելոր կեանքը հայ գաղթօջախների վերաշինութեան ու վերածննդի հենքը դարձնելով, մեր Եկեղեցին՝ որպէս պարմականօրէն ձեւաորոշում համազգային կառոյց, ամրապնդելու է աշխարհի բոլոր ծագերում սփռում հայութեան՝ միմեանց ու Մայր Հայրենիքի հետ բազմակողմանի կապը՝ կենսունակ անցեալի մեր սուրբ յիշատակներով, անկախացեալ Մայր Հայրենիքի գոյութեան հաւարտութեամբ, մեր յիւնկութեան անվարան կամքով ու համազգային մեր իղձերով:

(Հայրապետական Անդրանիկ Կոնդակից, 5 փետրվարի 2000 թ.,

«Էջմիածին», Բ, էջ 5-7)



Երանելի է դարձող. Զորավար, երախտագետ մեր ժողովրդի սիրտ խրնկարկումով, հաղթանակած հայ զինվորների թևերի վրա Սուրբ Էրմիածնի Մայր Տաճարից Հայոց Հանրապետության ղեկավարության ուղեկցությամբ՝ Գլխավորությամբ Հանրապետության նախագահի, Հայրապետիս և զինվորականությանը հանձնարում, հպարտ Եռագույնի ենթյալ նախապարհվում էս ղեկի բարձունքը անմահների, ուր հայրենաբաղձ, փենչավառ հոգուդ հրճվանքով ընդառաջ են գալիս լույս հոգիները բյուր զավակներիդ, որ նոր նահապետներն են վասն Հայրենյաց, վասն հավաքի՝ մարտի ելած նաև քո անվամբ, հարազրի առջև քո թանկ պարկերը՝ կրծքիդ շողացող Սուրբ Լուսավորչի շքանշանով:

«Գործս կիսատ մնաց» խոսքդ նոր արժևորմամբ ու հնդդությամբ վերստին արձագանքում է հայ հոգիներում: Գործիդ շարունակման վկան է այսօրը, որով, խոսքիդ համաձայն, «հավաքով մխրճվում ենք ղեկի ապագան»: Այսօր Զորավարիդ անյունը չէ միայն, որ ամփոփում ենք հայրենի հողում, այլև կոթող ենք կանգնեցնում անթաղ ու անշիրիմ հայրենյաց պաշտպան բազում հայորդյաց՝ մեր երկրի սրբում ու մեր հոգիներում անթեղելով մեր սերը առ Հայրենին, ազատասրենչ ոգին ու հավաքը հայոց գալիքի հանդեպ: Հաղթապատկ սուրդ, սիրելի Զորավար, որ բազմիցս շողացել է ազատության ու արդարության հույսի ցուբերով, խաղաղ ու շինարար կյանքի երազի փայլով, քո ամուր ձեռքում դարձել է հրավեր ու կոչ հայոց միության, արարումի իր այս խորհրդով հայոց արևին է պարզվել այսօր երազ քո Հայրենիքում, Սուրբ Էրմիածնում, ուր 80 տարիներ առաջ պարկան դրեցիր ու այն հանձնեցիր լուսահոգի Գևորգ Ե Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Թող շեղբը սրիդ խաղաղության անամպ կապույտը անդրադարձնի Մայր Հողին առմիշտ և հերկի հայոց հոգին սրելիծագործ ու հողը պտղաբեր՝ հայորդյաց մտաց ու ձեռքի արգասիքների արևագույնը բազմապատկելով հայրենի երկնքում: Թող լեռնակալ մեր Հայրենիքի բարձր երկնքից Հոյսի, Հավաքի, Սիրտ լույսերի արտացոլանքով կոչնականչ սուրդ միավորի հայ հոգիները ի սփյուռս աշխարհի:

(Մայր Տաճարում Զորավար Անդրանիկի համար հոգեհագստյան կարգի ժամանակ ասված խոսքից, 20 փետրվարի 2000 թ., «Էրմիածին», Բ, էջ 11)



Ազատության, արդարության քրիստոնեական ըմբռնումից, քրիստոնեական բարոյականի կենդանաբար ակունքներից բխեցին համակեցության արդի քաղաքակրթության սկզբունքները՝ փարբեր փնտրությունների մեջ, պարունական անցողաբաններում երկու հազարամյակ հղկվելով որպես

մարդու և ժողովուրդների իրավունքների ճախանկներ: Զրիստոնեական վանքն արժեքներով ծնունդ առան մարդկային մարմնի, հոգու ու բազկի բյուր արարումներ՝ կենսավորելով ամենահաղթ սիրտ Ավետարանական անանց ճշմարտությունը որպես պայման ու երաշխիք խաղաղության և հաշտության, կյանքի անդնդմեջ զարգացման ու առաքնության:

Արդարև, որքան միախառնական է «ճանաչել զՆա և զգոյություն Յարութեան Նորա», որ հաղթահարելով ժամանակ ու տարածություն, աստվածային Իր սիրով փշտում է մեղքի կարծրությունը մարդկային հոգիներում և պարզելում է շնորհը՝ ճշմարտությունը ճանաչելու, և ազատությունը՝ ընկրելու: Բարին ու դեպի Աստված տանող կենդանարար ուղին:

Փառք Զրիստոսի ամենազոր Հարության:

Նոր դարաշրջան է բացվում աշխարհի վրա՝ հասարակական կյանքի նորացող ընթացքով, ժողովուրդների ու պետությունների հարաբերությունների նոր պահանքներով: Ազգային գործող պետականությանը միայն կարող ենք լիարժեք մասնակցություն ունենալ ժողովուրդների բազմակողմ ու հարաճուն համագործակցությանը: Ուրեմն, ո՛վ, եթե ոչ՝ մենք, հոգևորական ու աշխարհական բոլոր դասերով, նրբ, եթե ոչ՝ այսօր կոչված ենք զորացնելու ազատ ու անկախ մեր Հայրենիքը, միաբանվելու նրա շուրջ և համագոյակն միությանը կերպելու հայ կյանքը աշխարհասփյուռ:

Արդարև, ամենքս պարտք ունենք մեր պատմության ու մեր գալիքի առջև, ինքներս մեր՝ մեր ասլամ ղոփարին, բայց հույսով ու հավատով լի տարիների առջև, այս հողը մեզ համար շահած ու պահած մեր սուրբ նահապետների ու նախնյաց առջև, այս հողը մեզ շնորհած Բարձրյալ Աստծո առջև: Թերահավատությունը, սիրելիներ, մենք վաղուց մերժել ենք մեզանից: Արդ, չորժենք սրբազան մեր ոխալը Արարարի ու Սուրբ Էջմիածնի հետ: Զարակոտով ու պարտապարհամ ապանձնենք մեր պատասխանատվությունը և ծառայության մեր բաժինը՝ հավատարիմ մեր Փրկչին, որ հոծաբական երկնից երկիր խոնարհվեց ոչ «ծառայություն ընդունելու, այլ ծառայելու և իր անձը տալու որպես փրկություն աշխարհի» (Մատթ. Ի 28): Մեծահարաջ այս տոնին առաքյալների օրինակով, որ Հարությանը գուրեպնդված՝ հին հանդերձի պես թոթափեցին հուսահատությունը և դարձան անվհատ ու անվեհեր քարոզիչներ, նորոգենք հավատը մեր հոգիներում՝ իբրև Աստծո հավատարիմ «նոր ժողովուրդ», որպեսզի սուրբ սրտով և անկեղծավոր հավատով տոնախմբենք 1700-ամյա փառաշուք տարեդարձը առաքելահաստատ ու առաքելագործ Հայ Եկեղեցու:



Ամենայն հայոց հայրապետիս մատթանքն է, որ դիպի Եղեռնի հուշարձանները առաջնորդող մեր ուղին վասն հայրենյաց, վասն հավատի ուիտի նորոգման ճանապարհի լինի մշտապես, զորացնելով մեզ միաբանելու ազգային մեր կյանքը, խաղաղ երկնքի ներքո շեն ու բարձր դարձնելու անկախ մեր հայրենիքը, ուր խորացրել ենք պատկերը «կորուսյալ» մեր երկրի՝ Նոր Արարիկիով, Նոր Խաղբերդով, Նոր Զեյթունով, Նոր Կիլիկիայով, Նոր Մարաթիայով: Արդ, մենք, որ զորու եղանք վերքն ու ցավը արարող ուժի վերափոխել, գործենք ու կերպենք հայրենասիրածության հայրենաշեն ոգով, որպեսզի երբեք չխոնարհվեն սրբության փառարկները մեր հողում, որպեսզի երբեք և ոչինչ այլևս չդարձնի մեզ սքստրական ու զաղթական, և խաղաղասեր ու սրնդծագործ ժողովուրդը մեր մշտապես չսրին բարիով հաղթողի վստահությամբ, հավատով ու հույսով նայի գալիքին:

(Ծիծեռնակաբերդում ասված խոսքից, 24 ապրիլի 2000 թ.,

«Էջմիածին», Դ, էջ 12)



Արդարև, սիրելիներ, Խրիմյան հայրիկը մեր ժողովրդի այն զավակներից էր, որը որքան հեռանում է մեզանից, այնքան ավելի է ընկալելի դառնում մեզ համար նրա մեծությունը՝ անձի և գործի: Մեծ հայրենասեր, նվիրյալ հայրենյաց, մեծագույն ուսուցիչ, դաստիարակ: Խրիմյան հայրիկի հոգին այսօր, կարծում եմ, պետք է որ խոսի յուրաքանչյուր հայորդու, որովհետև այն զգացումները, այն մտածումները, այն ոգին, որ տրոփում էր Խրիմյան հայրիկի կրծքի ներքո, համահունչ է մեր այս ժամանակներում ապրելու, հարաբերելու, հայրենիքը շենացնելու, հայրենիքը զորացնելու պահանջներին, որ անհրաժեշտ է ներդրվի յուրաքանչյուր հայորդու կողմից հայրենական կյանքից ներս:

(Խրիմյան հայրիկի շիրմի առջև ասված խոսքից, 4 ապրիլի 2000 թ.,

«Էջմիածին», Դ, էջ 14)



Մենք նկել ենք հարգանքի խոնարհումը բերելու մեր ժողովրդի արժանավոր զավակաց: Նրանց ոգին կրթել է սերունդներ, նրանց ոգին ուղեկից է հղել մեր զավակաց, մեր կյանքի դժվարին ու ծանր օրերին մեզ գտնււնդել, մեզ արիացրել է: Մեր մատթանքն է, որ արժանավոր մեր զավակների շիրմները շարունակեն խանդավառել մեզ, շարունակեն ոգի դառնալ մեզ համար, որպեսզի կարողանանք ապրել այն նրազների համաձայն,

այն իղձերի համաձայն, որ ունեցել են այսրեղ իրենց հանգիստը գրած մեր ժողովրդի զավակուհի, և կարողանաք այդ նրազները կյանքի կոչել, իրականություն դարձնել: Այսօր Հայաստանի անկախության ձեռքբերումով մենք մասամբ իրականություն ենք դարձրել նրանց նրազները, սակայն հայրենի անկախ պետականությունը պետք է ամրացնենք մեր աշխատանքով, մեր քրտինքով, նաև սփյուռքի գորեղ կյանքով: Իմ՝ Հայրապետիս խնդրանքն է ձեզ. միշտ այցելեք մեր մեծերի շիրիմներին, աղոթք բարձրացրեք նրանց հոգիների համար, խոնարհվեք նրանց եղբայրակի ստոյն և ունկնդիր եղեք նրանց պատգամներին ու խորհուրդներին, որ մեր հավերժության խորհուրդն է պարունակում:

(Ռեփլիսիի խոցիվանքի Հայոց Պաթեոնում ասված խոսքից,

11 մայիսի 2000 թ., «Էջմիածին», Ե, էջ 13)



Մարդկային կյանքի առաքին կարողությունից է դպրոցի հանդեպ կարողությունը, թանկ մանկության ու պարանեկության հուշերով, ընտանիքի, հարազատ քակի ու ծննդավայրի ջերմության հետ անբաժան մասն է դառնում առ հայրենին մեր ունեցած մեծ սիրտ: Աստվածաբան է Հայրենիքը, երկնաշնորհ: Երջանիկ եք դուք, սիրելի շրջանավարտներ, որ հասակ եք առել անկախ Հայաստանում, սնուցվել ազատության շնչով, հավատի և հայրենաց ավանդների վերաբերմամբ: Պարմությունից ձեզ հայրենի է, թե որքան կարևորել են մեր նախնիք մեր երկրի ազատությունն ու անկախությունը, որքան արյուն հեղել, ջանք թափել՝ կորցնելուց հետո այն վերագրելու համար: Այո, հոգսաշատ են այսօր մեր Հայրենիքն ու ժողովուրդը, սակայն ազատությունն է այն արժեքը, որ պայման է դառնում արարումների, բարգավաճման ու բարօրության: Կեղծիքից, ստրկամարտությունից, անգիտությունից ազատ ձեր հոգու սրացրեքով է կերտվելու նվիրական մեր Հայրենիքի այսօրն ու գալիքը: Դուք թանկարժեք, ոսկեղեն հունձքն եք մեր, որ խրատացած ազատության մեր արեգակի հորդավատ լույսը, հայության նվիրական իղձերի կենսավորումով պողպատե կոնստրուկցիոն եք ազգային մեր կյանքը: Վարսահ քայլեք ձեր ճանապարհով, կրեք ձեր կարևորության գիտակցությունը, շիրտակ, աներկբա ու անվախ սրանձնեք ձեր բաժին պարասխառնաբարությունը: Ձեր ցանաղիր, անխոնք, սրեղծարար աշխատանքով, ձեր հոգու ջերմությամբ ու ձեռաց գործերով իմաստավորեք ու զեղեցկացրեք ձեր ու ձեր հարազատների, մեր ժողովրդի կյանքը, մեր մայր հողն ու երկիրը: Հավատարմությամբ ծառայեք մեր հայրենի Աստծուն, գորացեք հավատքով, հինավուրց մեր պարմությամբ ու մշակույթով, աղոթախոս անցեք կյանքի ձեր ուղին:

(Երջանավարտներին ուղղված խոսքից, 26 մայիսի 2000 թ.,

«Էջմիածին», Ե, էջ 41)



Իր կյանքի 67 տարիներից 50-ը հոգեկույս Հայրապետին ապրեց իրոն ապաստվոր Աստծո, Հայ Առաքելական մեր Մուրթ Եկեղեցու, Հայրենիքի ու մեր ժողովրդի՝ սարկավագությունից մինչև Ամենայն Հայոց Կաթողիկոս իր ճանապարհը անցնելով անդու ու անխոնջ ջանադրությամբ, հավատքով, սիրով ու նվիրումով: Հոգևորականի առաքելությունը, որպես անմնացորդ նվիրումի ծառայություն, իր կյանքի իմաստն էր ու երջանկությունը: Այդ առաքելության մեջ նա եղավ մեծ, շնորհալի ու անձանձիր ուսուցիչ, որ լավատաքելության մեջ նա եղավ մեծ, շնորհալի ու անձանձիր ուսուցիչ, որ լավագույնս գիտեր ճանաչողություն ու գիտելիք փոխանցել, բայց առավել նա՝ ոգի ներարկել, քրիստոնեական ճշմարտության լույսով ու հայրենկյաց սիրո հրայրքով հայ հոգիներ կերտել ու բյուրեղացնել: Եւ գրեի մշակ, լայնախոհ մտավորական էր, հասու ազգային ու համաշխարհային մարքի նվաճումներին, կարող ինքնօրինակ աշխարհընկալումով ու մտածողությամբ սրնդ-ծագործելու, խորենազիական ճակատհարմարով դարերի խորհուրդը բացելու, նարեկյան խոհով Աստծո հետ խոսելու, մարդկանց հոգիներին զրուցակից լինելու: Հարազատ ու հավատարիմ հոգևորականն ու զավակը հայ ժողովրդի իր արմատներում, իր արյան մեջ կրում էր հայրենի հողի կարոտը, պաշտամունքը հայրենի տան, որ իր բնորոշմամբ՝ սկիզբ առնելով Արարապի փեշերից, վերադառնում է դեպի Արարապի փեշերը՝ բոլորակի ու լայնածիր ներառնելով ազնվատունի իր ժողովրդի անցյալն ու ներկան, ձեռաց, հոգու ու մարքի արարումները:

(Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի վախճանման տարեկիցի առիթով
աաված խոսքից, 25 հունիսի 2000 թ., «Էջմիածին», Զ, էջ 4)



Լուսավորիչը երեք լուսո խորաններ բարձրացրեց մեր ժողովրդի կյանքից ներս: Առաջին լուսո խորանը հայոց պետականության հաստատումն էր, երբ հիվանդությունից բժշկեց Տրդատ Գ արքային: Երկրորդ խորանը կանգնեցվեց մեր հայրենիքի մեջ: Դա Մուրթ Սեդանն է Հայոց Եկեղեցու, որ մշտապես քրիստոնեական Ավետարանի լույսն է ճառագում մեր ժողովրդի զավակաց հոգիներից ներս: Երրորդ լուսո խորանը հայ դպրոցի լույսի խորանն էր: Հայ ժողովրդողը Լուսավորիչ Հայրապետի այս պարզամեղ նվիրականորեն ծրարեց իր հոգու մեջ իր պարմության ողջ ընթացքին: Դաժան ու դժվարին պարմություն ենց ապրել, հաճախ կորցրել ենք մեր պետականությունը, բունի վարպելն մեր հայրենական երկրից, բայց ուր էլ ուր կայք ենք հաստատել, հավատարիմ Լուսավորիչ մեր Հոր պարզամիտ, առաքնալին խնդիր ենք նկատել մեզ համար կառուցել լուսո խորանը մեր Մուրթ

Եկեղեցու, և նրա կողքին հայոց դպրության, հայոց դպրոցի լուստ խորանը, որպեսզի քրիստոնեական Ավետարանի լույս պարզամենների հենր նաև հայոց բանն ու բառը, հայոց գիրը լուսավորի միտքն ու հոգին մեր ժողովրդի զավակաց: Իսկ եթե չենք ունեցել երրորդ՝ պետականության խորանը մեր կյանքում, ապա տեսիլքն ու երազը միշտ վառ ենք պահել մեր հոգիներից ներս: Մենք գոհություն և փառք ենք առ Աստված բարձրացնում, սիրելի բարեպետը հայրողիք, որ մեր կյանքի նոր շրջանում առկա են այսօր լուստ այդ երեք խորաններն էլ: Այսօր, 80 տարիների աստվածամերժության շրջանից հենք, վերստին հայոց դպրոցում կամար է կապել քրիստոնեության քարոզչության ու դաստիարակության լուստ խորանը, և հայու զավակը վերստին ունկնդիր է Բրիստոսի Աստվածային պատվիրաններին ու պատգամներին և մեր սրբազան հայրերի հավատք վարդապետությանը:

(Կահիրեի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում խոսված քարոզից,
14 հոկտեմբերի 2000 թ., «Էքսմաժիե», Ժ. Լք 12-13)



Նայաստանի նոր անկախության հենք ծնունդ առաւ Վազգէնեան դպրանոցը, մեր ժողովրդի համար դժուարին, բայց յոյսով ու լաւատեսութեամբ, ազգային մեր իղձերի իրականացման խանդավառութեամբ լնցուն օրերին, երբ շրջափակման օղակը իր բոլոր ծակն հեղեղանքներով անկի ու անկի սեղմում էր Նայաստանի շուրջ, սակայն չէր կարող ու չկարողացաւ խեղդել հայրենի մեր եզերքներում թեւածող ազատութեան բաղձանքը, լոնցնել արդարութեան ձայնը և մեր նախնեաց կանչը: Արդարեւ, «սերմանի տկարութեամբ և յսոնէ զօրութեամբ»: Այսօր հասակ է առել դպրանոցը, առնականացել ու հաստատուել իր սուրբ կոչման մէջ՝ Աւետարանի կենաց խօսքով ու հայրենեաց սրբազան ժառանգութեամբ կրթելու, ազատութեան շնչով հասունացնելու և Նայ Եկեղեցու անդամատանում անսակարկ ծառայութեան առաքնորդելու հոգեւորականաց հասարակոր ու նուիրեալ, գիտակ ու կարող սերունդներ:

(Սեանի Վազգենյան Դպրանոցի տասնամյակի առթիւ տրված Կոնդակից,
5 դեկտեմբերի 2000 թ., «Էքսմաժիե», ԺԲ, Էք 7)



Շաղախենք մեր կյանքը սիրով: Սերը իշխանավորի՝ բարիք ու շինություն է երկրին, սերը եկեղեցականի՝ հավատ, ապրելու բերկրանք ու արարելու կամք է ժողովրդին, համընդհանուր սերը՝ համազգային առաջընթացի

որպես Աստվածի ուրախագիտական երկնահայեաց քարեղեն դրոշմ, որ 17 դար սերնդէ-սերունդ պատկերագրում է հայորդեաց հոգիներում:

Արդարեւ, մենք մեծաթիւ ժողովուրդ չենք ևւ երբեք չենք եղել: Բայց մեր հաւատքը՝ գործերի փոխում, դարձրել է մեզ մեծագործ ժողովուրդ: Հաւատքի գործերով մենք մարմնաւորել ու հաստատել ենք մեր սերն առ Աստուած: Հաւատով մենք մէկ ենք որպէս Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, որ հաւատքի կենդանի գործերով «դէպի երկինք բարձրացող գաղթի ճամբայ մը ունի»: Հայ Եկեղեցին հայ ժողովուրդն է՝ քրիստոնէական սուրբ հաւատով միասնական, ինքն իրեն Հայ Եկեղեցիով ճանաչող ու արտայայտող: Նայելք հայ կեանքի անդամատաներին: Զրիստոնէական համամարդկային արժեքներով, ազատութեան, արդարութեան, խաղաղութեան ձգտումներով է հանդերձաւորուած հայ ինքնութիւնը, որով, հակառակ մահաշունչ փորձութիւնների, դարերի մէջ արարել է միշտ, ի զօրո՛ւ գրկունել հաղորդ լինելու ևւ ներդրում քննելու մարդկային քաղաքակրթութեան առաջընթացին: Հայոց Սուրբ Եկեղեցուց աղբիւրացող հաւատով կեանք առած աշխարհասփիտ հայ հոգիները հաւատով դարեր են կամքքել՝ հաստատուն ու կենսունակ պահելով մարդկային այն առանձնայարտի ընդհանրութիւնը, որ «ազգ» ևւ «ազգային» ենք կոչում: Հաւատն է ոգեշնչել ու թել տունել մեր բոլոր յաղթանակներին: Հարանց մեր հաւատով զինաւառ՝ մեր ժողովրդի զաւակունք չեն երկնչել մահից՝ յանուն հայրենեաց պայքարում մահկանացու իրենց կեանքը բազմիցս զարդարելով անմահ փառաց պսակով: Հաւատով մերժել ենք սուրն ու երեսպաշտութիւնը, վատութիւնն ու վախկոտութիւնը, հաւատով սիրել ու նուիրունել մեր ընտանիքին, Հայրենիքին, Եկեղեցուն, հաւատով ապրել Աստծոյ հետ ու արժանացել ամենաաւար օրհնութեանը Նրա: Այո՛, սիրելիներ, չկա՛ մեզ մահ, քսնի դեռ մեր գործերում ապրում է մեր հաւատը, քսնի դեռ հայոց պատմութեան ընթացքով յաղթականօրէն անցնում է յունդէն թափօրը Հայ Եկեղեցու՝ ճառագելով հաւատը ու խնդրելով հոգի, հաւատարմօրէն պահելով մեր ժողովրդի ընթացքը դէպի Աստուած:

(1700-ամյակի առթիւ վրոված կոնդակից, 6 հունվարի 2001 թ.,

«Էջմիածին», Ա, էջ 7-8)



301 թուականին չվարանեցինք քրիստոսահաւած հեթանոս աշխարհում պէտականօրէն պարզել Զրիստոսի ազատութեան խաչանիշ դրօշը, որ երբեք չի խոնարհունել մեր հոգիներում, երբ անգամ կոռցրել ենք ազգային մեր պէտականութիւնը: Խաչանիշ այդ դրօշով ընդամէնը մէկ ու կէս դարում կերտեցինք հայոց ինքնանճանաչման, ինքնարտայայտման ու ինքնահաւատարման Աստուածօգնաց դպրոցը, ուր ուսուցանում է Յարուցեալ Երկնա-

յին Վարդապետը: Խաչակիչ այդ դրոշով ապրեցինք՝ ժառանգականության կենդանի կապով հաղորդի ու հաւատարիմ Լուսաւորցի, Ներսէս Մեծի և Սահակ Մաշտոցի՝ հայ հոգու, սրտի ու մտքի լուսաւորութեան, Զաքէ Վարդապետը՝ հայ ոգու յաղթութեան անմահ դպրոցին:

Հայոց Դարձի 1700-ամեակի տօնակատարութեան նշանակալի այս տարում, սիրելի հայրողիներ, ուխտեմք մեր հոգիներում արթուն պահել յաղթական այդ դպրոցի զօրաւոր ոգին, ապրենք Յարուցեալ Փրկչի ներկայութիւնն այնպէս, ինչպէս Յարութեան հաւարին վստահած մեր նախնիք, որպէսզի մեր խօսքը չիւնջի դատարկ ու անկրեղի, և մեր գործը չիւնջի արժեզուրկ ու աննպաստ: Այս ծառայի հայրենական մեր կեանքի շինութեանը, քաղ անխաղճի անկախ մեր Հայրենիքի հզօրութեան կառոյցին, շաղախ՝ հայոց միաբանութեանը, լոյս՝ պայծառութեանը Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

(Հարության պարզամիջ, 15 ապրիլի 2001 թ..

«Էջմիածին», Դ, էջ 5)



Անապատի տոթակեզ քամին ավազով ծածկեց անթաղ մնացած ձեր անյունները: Բայց մի՞թե Բարձրյայի աջից կարելի է թաքցնել մարդկային չարիքը, մարդկային ամոթը: Մի՞թե ոճրապարտ մտքով ու ձեռքով գործվածը, որ սրտընց ու բնավեր արեց սրեղծարար հնագույն մի ժողովրդի, կարող է մոռացության շղարշով պարվել ու քնքվել սերունդների հիշողությունից:

Սուրբ Էջմիածնի 1700-ամյա Միածնաւէ Լուսն հոգրանի օրհնությունն ենք բերել նահապականերիդ նշխարներին, Սուրբ Լուսաւորցի Կանթեղի լոյսը մշտադոփ: Եկել ենք ուխտի, սրբազան երդման: Եկել ենք ձեր՝ Զրիստոսի խաչակիցներիդ հազարաւոր անհայտ անունների հիշատակով մեր ուխտը առ Աստված հաստատելու, համազգային մեր միասնականությունը նորոգելու և մեր հավատը գորացնելու արդարության հաղթանակի հանդեպ: Եկել ենք ասելու ձեզ, որ ամեն ապրիլի 24-ի, նաև այսօր, հայ ընտանիքներում զավակներ են ծնվում՝ հայրողիներ ու հայուհիներ, որ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու ավազանում մկրտվում են ձեր անուններով:

(Դեր Զորում ասված Հայրապետական խոսքից,

24 ապրիլի 2001 թ., «Էջմիածին», Դ, էջ 10-11)



Մեր ժողովուրդը հաղթահարել է երկրաշարժի, շրջափակման, Արցախյան ազատամարտի ամենամեծ դժվարությունները: Հաղթահարել է միասնաբար, հայրենաբնակ և սփյուռքի իր զավակների միացյալ ջանքերով: Վերըստին ազատ ու անկախ է հայաստանի հանրապետությունը, ազատագրված է Արցախը: Մայր հայրենիքն ու Եկեղեցին վերազարթոնքի օրեր են ապրում: Փառք մեր հայրերի Աստծուն, որ կրկին իջավ և ամեն օր ավելի ու ավելի է մտրեմում աթեիզմի հարվածներից վիրավոր մեր ժողովրդի սրբուրին, մեր մանուկների անմեղ հոգիներին և Սուրբ Հոգու յոթնաբայա շնորհներով լցնում մեր հայրենիքը: Նոր օր է բացվում հայոց կյանքում, Մայր հայաստանում: Վճռորոշ այս շրջանում հայրենիքը կրկին կարող է իր զավակների գորակցությամբ: հայրենիքը կանչում է մեզ: Տարակույսների, անվստահության, տրտման ու սպասումի ժամանակը չէ. զինվե՛ք հայրենյաց սիրով, լցվե՛ք լավատեսությամբ՝ հավատալով գործերով կառուցելու հայոց կյանքն իմացյալ, որ չկանգնե՛ք երբեք մահն իմացյալն ընտրելու անհրաժեշտության առջև: Արդ, համախմբվե՛ք և համախմբե՛ք մեր ուժերը՝ ամրապնդելու համար թանկ գնով ձեռք բերված նվաճումները և վերակառուցելու հայրական մեր տունն ընդհանուր: Դժվարություններ ապրող մեր օրյա հայրենիքը վաղը՝ բարօր, բարգավաճ ու հզոր, պիտի միավորի իր որդիոց և ոգեշնչի ու փայլ հաղորդի հայ կյանքին աշխարհասփյուռ: Ապավինե՛ք մեր միասնության արարող գործությանը և հավատով նայե՛ք հայոց պայծառ գալիքին:

Աղոթախոս անցնենք կյանքի մեր ուղին, մեր հոգիներում վառ պահենք Լուսավորչի Կանթեղի լույսը, որ նոր ներշնչանքով ու սիրով դարձնի մեր հայացքը դեպի երկիրն Արարարի, դեպի Սուրբ Էջմիածին: Ուր էլ ապրենք, մենք բոլորս զավակներն ենք նույն ժողովրդի, հայ Առաքելական մեկ Եկեղեցու: Ուր էլ լինենք, պահենք մեր հավատարմությունը հայրենյաց սրբություններին, որով պայմանավորվում է մեր արժեքը որպես մարդ և որպես հայ: Աղոթենք, որ 2001 թվականին սկսված 1700-ամյակը ազգային-քրիստոնեական մեր կյանքում լինի սկիզբ, որ չունի վախճան: Աղոթախոս անցնենք կյանքի մեր ուղին, մեր հոգիներում վառ պահենք Լուսավորչի Կանթեղի լույսը, որ նոր ներշնչանքով ու սիրով դարձնի մեր հայացքը դեպի երկիրն Արարարի, դեպի Սուրբ Էջմիածին: Ուր էլ ապրենք, մենք բոլորս զավակներն ենք նույն ժողովրդի, հայ Առաքելական մեկ Եկեղեցու: Ուր էլ լինենք, պահենք մեր հավատարմությունը հայրենյաց սրբություններին, որով պայմանավորվում է մեր արժեքը որպես մարդ և որպես հայ: Աղոթենք, որ 2001

թվականին սկսված 1700-ամյակը սոցալիս-քրիստոնեական մեր կյանքում
փնիս սկիզբ, որ չունի վախճան:

(Նյու Յորքի «Սենթրլ Փարկում» մատուցված բացօթյա Հայրապետական Պարարապի
ժամանակ ասված խոսքից,

27 մայիսի 2001 թ., «Էջմիածին», Ե, էջ 31-32)



Մայր Հայրենիքն ու Սուրբ Էջմիածինն այսօր Հայոց համազգային մկրտությունն ու Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի սրանցիկ խորհրդով իրենց սիրառար գիրկն են բացել մեր առջև և համախմբել ձեզ նախնայաց սուրբ հողում՝ Հայաստանի մարզերից ու սշխարհի տարբեր երկրներից: Դուք բոլորդ հարազատ որդիքն եք իհնավորաց մեր ժողովրդի, որի հիշողությունը մարդկային քաղաքակրթության վաղնջական ժամանակները անընդմեջ արարումով կամրջում է 21-րդ դարի նոր այգաբացին: Փոքրաթիվ ժողովրդի մեծ ժառանգության տերերն եք դուք, սիրելիներ: Մեր հողը մշակվել ու մարդուն աշխույժ է տվել դեռևս քարե գործիքներով և առաջին մեծադե գործիքներով, ոռոգվել է պարմությանը հայտնի հնագույն ջրանցքներով: Ուր որ նայեք, հիշատակներ են հին ու նոր ժամանակներին ծանոթ անուններ՝ ավանդություններ ու հուշարձաններ: Դուք ժառանգել եք հարուստ լեզու, մարդկային հոգիներն ու տիեզերքի խորքերը բնեղ բազմազան մշակույթ: Այդ ժառանգության մեջ ամենամեծ զանձը, սիրելիներ, որ սրբորեն պահվել ու այսօր փոխանցվում ու վարակվում է ձեզ, քրիստոնեական մեր հավատն է՝ մեծագույն շնորհը Աստծո, որ իմաստ է տվել մեր ժողովրդի կյանքին, նկարագրի՝ հայ էությանը, ու դարձել մեր գոյության խորհուրդը:

Ուխտավորի հուսառար հոգով մեր քայլերը ուղղեք դեպի մեր սրբատեղիները, հպվեք մեր նախնայաց աղոթքի ջերմությունը պահած քարերին հինավորաց նկեղեցիների, վանքերի ու խաչքարերի, զգացեք մեր արմատները կենսունակ և փառաբանեք Աստծուն նույն սիրով ու հավատարմությամբ, ինչպես դարեր շարունակ մեր հայրերը, պապերն ու նախապապերը: Ծառն արմատով է ամուր և շինությունը՝ իր հիմքով, իսկ մարդու արժեքը՝ առ Աստված իր հավատով: Հորացեք հավատով, և թող ամենայն մեր գործերը հավատով լինեն ու ծառայեն Բարուն, հույսի ու սիրտ արգասավորմանը աշխարհում, մեր անկախ ու ազատ Հայրենիքում, աշխարհապիտո մեր ժողովրդի կյանքում:

(Երիտասարդական ուխտագնացության առիթով ասված խոսքից,

15 հուլիսի 2001 թ., «Էջմիածին», Զ-Է, էջ 10-11)

ՆՈՐԸՆԾԱՆԵՐԻ ԸՆԾԱՆ

Վեհափառ Հայրապետի ծննդյան հիսունամյակին է նվիրված Մայր Աթոռում հրապարակված «Յոթ խորհուրդ... յոթ ճանապարհ առ Աստված (Հիսուն մարտումներ Գարեգին Բ Վեհափառից)» գրքույկը: Նրանում Նորին Սրբության մրաժույթներից և խոսքերից ընտրված հարվածները բերվում են ոչ թե ըստ գրության ժամանակագրական ընթացքի, այլ խմբավորված են յոթ՝ Հայոց Եկեղեցին, Հավար, Քրիստոնեություն, Հայ ժողովուրդ, Հոգևորականի կոչում, Հայրենիք և Այսօր խորագրերի ներքո, որոնց յոթը լինելը պայմանավորված է ոչ միայն քրիստոնեական խորհրդաբանությունում յոթի պարունակած իմաստներով, այլև վերջինիս հետ կապված հետևյալ գեղեցիկ համընկնամբ:

Ս. Էջմիածնում վերջերս ձևանադրված յոթ քանանները՝ Գարեգին աբղ. Հառությունյան, Մամբրե աբղ. Տաշչյան, Գեղարդ աբղ. Վահունի, Ռուբեն քեն. Գասպարյան, հոստով քեն. Ստեփանյան, Վահրամ քեն. Մելիքյան և Պարույր քեն. Ավետիսյան, քառասունորյա իրենց առանձնացումի շրջանում որոշել էին Վեհափառի ծննդյան հիսունամյակի առիթով Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հիսուն մրաժույթների մի փունջ կազմել վերը բերված խմբավորմամբ: Ինչպես գրքույկի առաջաբանում գրում է 1700-ամյակի հանդիսությունների գրասենյակի գործադիր վարիչ-քարտուղար Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը, «Այս համեստ գրքույկը թող դրսևորումն ըլլայ եօթը նորընծայ քանաններու սիրոյն ու նուիրումին Աստուծոյ հանդէպ, այնուհետեւ Հայաստանեայց Առաքելական մեր Մայր Սուրբ Եկեղեցւոյ եւ երախտիքի արտայայտութիւնը ազգիս Վեհափառ Հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին»:

Մաղթենք, որ Հայոց Եկեղեցու ապաստավորների և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի զինվորյալ միաբանության շարքերը համալրող մեր հոգևորականներն իրենց մուտքը եկեղեցական ասպարեզ նշանավորեն Հայոց Եկեղեցուն և Հայոց Հայրապետական Աթոռին նվիրված նման գեղեցիկ և ինքնօրինակ ձեռնարկումներով: Ինչպես Հովնան Սրբազանն է գրում, «Ընթերցողին ներկայացուած սոյն գրքույկը կարճ ամփոփումն է Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նշանաւոր գաղափարների եւ յաւերժ յիշարակելի խօսքերու: Նորընծայ եօթ հոգևորականներու կողմէ խմբագրուած այս ինքնաբոլիս ընծայումը, ընդունեցէ որպէս իրենց սրտի առաջին բաբախումը հոգեւոր ծառայութեան դաշտէն ներս»:

ՅՈԹ ԽՈՐՀՈՒՐԴ...
ՅՈԹ ԾԱՆԱԿԱՐԿ
ԱՌ. ԱՍՏՎԱԾ

Հիսուն մարտումներ
Գարեգին Բ Վեհափառից



ԱՅՍ. ԵՂԵՂԵՍՅԱՆ

Վ. ԴԵՎՐԻԿՅԱՆ



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԽԱԺԱԿ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՄԱՍՅԱՆԻՆ՝ ԾՆՆԴՅԱՆ 50
ԵՎ ՔԱՂԱՆԱՅԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ 30-ԱՄՅԱԿՆԵՐԻ
ԱՌԹԻՎ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՄԻՐԵՑԵԱՎ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱՎ ՍՊԱՍԱՌՈՐՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ,
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԽԱԺԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՄԱՍԵԱՆ,
ՈՐ Ի ՆԻՒ ԵՕՐՔ, ԱՄՆ**

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Լուսոյ Խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերկրանօք սրբի Հայրապետական Մեր օրհնութիւնն ու սրտաբոխ շնորհաւորանքներն ենք բերում Ձեզ՝ ծննդեան 50 եւ քահանայագործութեան 30-ամեայ զոյգ տարեդարձերի առիթով:

Միջին Սրբազան. առ Աստուած սիրով եւ Մայր Եկեղեցուն ու ժողովրդին ծառայելու նուիրումով էք Դուք ընկրել Տիրոջ Սուրբ Մեղանին սպասաւորելու ճանապարհը: Անաւասիկ, երեք տասնամեակ, «իբրեւ զբարոյզ զինուորն «Ջրիսպոսի», հաւաքոյ Ձեր բարի մարտն էք մղում՝ ամենուր եւ յամենայնի հաւաքարիմ առ Աստուած Ձեր ուխտին եւ լուսոյ Խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Այսօր, քահանայական Ձեր ձեռնադրութիւնից երեսուն տարիներ անց, ուրախ ենք անդրադառնալու, որ Տիրոջ փոքր հօտին՝ հաւաքարտը հայ ժողովրդին ու առաքելաւաստաբար մեր Եկեղեցուն բռնաբանուէր ու նախանձախնդիր ծառայելու Աստուածաշնորհ Ձեր առաքելութիւնը պսակել էք ազգօգուտ եւ եկեղեցաշէն մնայուն յաջողութիւններով՝ վաստակելով հա-

յորդեանց անկեղծ սերն ու գնահատանքը եւ արժանի դաժնալով Արքութեան բարձր պալտին:

Սիրելի Սրբազան, բազմիցս լինելով Տիրախնամ Ձեր թեմում, բերկրանքով ակա-
նաբեսս ենք եղել առաջնորդական պատասխանաբառի առաքելութեան մէջ արձանա-
գրած Ձեր ձեռքբերումներին, ազգային, կրթական եւ բարեսիրական իրագործումնե-
րին, որ միախառնութիւն պարգեւելով բազմաթիւ հայորդիներին, նրանց հոգիներին եւ
բախտագիտական աղօթք են բարձրացնում առ Աստուած Ձեզ համար:

Գոհութիւն ենք մատուցում Բարձրեալին, որ յորելեանական այս տարում հնարա-
ւորութիւն ունեցանք Տովուապետական անդրանիկ այցելութիւն կատարել ԱՄՆ հա-
յոց արեւելեան թեմ եւ մէկ անգամ հուսնադրեամբ լցուելու, որ թեմի ազգային-եկե-
ղեցական կեանքը շարունակում է լեցուն լինել աշխտյժով ու ազգաշէն գործերով՝ ի
պանծացումն 1700-ամեակի մեծ յորելեանի եւ ի պայծառութիւն Առաքելական մեր
Սուրբ Եկեղեցու: Լիայոյս ենք, որ շնորհիւ Ձեր ջանքերի, օրաուր պիտի գորանան
թեմի հայորդեաց հաւաքն առ Աստուած եւ սէրը առ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը,
Հայոց Եկեղեցին ու Հայրենիքը մեր:

Ձեր յորելեանների բերկրաշաղա առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք
Ձեզ Մեր սէրը, գնահատանքն ու օրհնութիւնը՝ ի խորոց սրբի աղօթքով Բարձրեալի
գօրակցութիւնը հայցելով Ձեր յետագայ գործունեութեանը:

Թող Տէրը գօրացնի Ձեզ հոգեւոր կոչման մէջ եւ պարգեւի քաջատողջ երկար
կեանք՝ նրջանկութեամբ ու գործոց յաջողութիւններով լեցուն՝ ի պայծառութիւն ԱՄՆ
հայոց արեւելեան թեմի եւ Առաքելաճապարար մեր Սուրբ Եկեղեցու:

*«Շնորհք Տեսնն մերոյ Յիսուսի Բրիսարոսի եղիցին շնդ ձեզ եւ շնդ ամե-
նահանդ, ամէն»:*

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՎԱՅՈՅ

Տուա Գիրս Օրհնութեան ի 10-ն Օգոստոսի
յամի Տեսնն 2001 եւ ի թուին Հայոց ՌՆԾ
ի Մայրաձանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 183

ՎԵՆԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Լույս Խորանից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ուսումնական հաստատությունների սիրասուն տարեկին՝ աշակերտներին ու ուսանողներին, կրթության շնորհակալ գործի բոլոր պարասավորներին և շնորհավորում նոր ուսումնական տարվա առիթով:

Վերստին հուսատար բացվում են կրթօջախների դռները՝ դեպի գիտության ու ճանաչողության հրաշալի աշխարհ առաջնորդելու իրենց սաներին, հաղորդ դարձնելու դարերի խորքից մեր ժողովրդի ավանդած հայրուստ մշակույթին, որ ծնունդ է հավատի անսպառ լույսի, իմացության սիրո և կրթության արժևորման:

Միևնի սաներ ուսումնական նոր տարեշրջանի սկսին Հայոց Մեծ Դարձի 1700-ամյակի և Հայաստանի նոր Անկախության 10-ամյակի հոգևոր-խորհուրդների ներքո Հայրական Մեր պարգամն ու հորդորն է Չեզ, որ գործակներ ձեր ուխտը առ Աստված, հավատարմությունը առ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին ու սրբազան Հայրենիքը մեր և ուսման մեջ ձեռքբերումներով պարտապարզ ծառայելու կյանքի վերաշինության լայն ճանապարհին կանգնած մեր ժողովրդին: Մենք հավատում ենք, որ դուք ուսումնառության ձեր ընթացքը անցնելու եք խանդավառությամբ, քաջասեր ու նախանձախնդիր:

Մեր աղոթքն է, որ Բարին Աստված շնորհագարդի մեր բոլոր զավակներին և բարի արդյունքներով օրհնի ուսման ու կրթության գործին նվիրված ուսուցիչների ու բոլոր պարասխանատուների քանքերը, նվիրումն ու սերը:

«Շնորհք, սէր և խաղաղություն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեւեման ամէն»:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,

31 օգոստոսի 2001 թ.

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի օգոստոս ամսին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց հայրապետի Կոնդակով «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրվել է .

Մարգրիտ Սիրունյանը (Կանադա):

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց հայրապետի հրամանով Ավագ քահանայության պապվի է արժանացել.

Տ. Գեղարդ քին, Կարապետյանը (Կանադա):

Ղևոնդ պատմիչը, «գարդարէր զեկեղեցիս Աստուծոյ վարդապետական արուեստից եւ պաշտօնէից խմբաւորութեամբ, պատուէր եւ երեւելի սպասուք յիրոց զանձուց»⁵: Աշոտ Բագրատունիին կառուցեց Դարույնքի Ամենափրկիչ եկեղեցին (մոտ 686 թ.)՝ այնտեղ գետեղելով Քրիստոսի կենդանագրչայ պատկերը, որը Բյուզանդիայից Հայաստան էր բերել Աշոտի որդի Սմբատը⁶: Ստեփանոս Տարոնեցու վկայությամբ, 680-ական թվականներին «էր խոտվութիւն մեծ յաշխարհիս Հայոց. զի յարեւելից հարաւոյ տաճիկ գօր եկեալ՝ գերեցին գաւառս...», ինչին զոհ գնաց նաև Աշոտ Բագրատունին⁷: 689 թ. Հուստինիանոս կայսրը ստվար զորքով ներխուժեց Հայաստան և իր մոտ հրավիրեց հայ մախարարներին ու Սահակ Կաթողիկոսին, եպիսկոպոսներին, որոնց մի մասին (այդ թվում՝ կաթողիկոսին և հինգ եպիսկոպոսներին) կայսրը «արգելեալ առ ինքն»։ Նա Հայոց իշխան ճշմանկեց Ներսէս Կամսարականին՝ Օիրակի տիրոջը⁸:

VIII դ. սկզբի հայ-քաղվեդոնական հեղինակի հաղորդման համաձայն, Հուստինիանոս կայսրը 689 թ. Սահակ Կաթողիկոսին և նրան ուղեկցող եպիսկոպոսներին հրավիրել է Կոստանդնուպոլիս և ընդունել տվել երկաքնակության դավանանք։ Վերադառնալով հայրենիք, նրանք նգովել են երկաքնակությունը⁹: Սակայն, ինչպես հավաստում է Ասողիկը, Հայոց Կաթողիկոսը, եպիսկոպոսները, մախարարները կայսեր մոտ են գնացել հարկադրաբար և այն պահին, երբ նա մեծաստվար զորքով խուժել էր Հայաստան։ Անհավաստի է ամշուշտ այն տեղեկությունը, որի համաձայն, իբր, Հուստինիանոս Բ-ն նույն ժամանակ գումարել է ժողով՝ Սահակ Կաթողիկոսի մասնակցությամբ¹⁰: Հայոց կանոնագրքում ժողովի վայր համարվում է Կարինը, որտեղ, իբր թե, հավաքվում են «բազում եպիսկոպոսք յամենայն քաղաքաց հանդերձ Կաթողիկոսաւն Հայոց Սահակաւ»¹¹: Նշված ժողովի գումարման վերաբերյալ այս տեղեկությունները, սակայն, վավերական չեն¹²: Սահակ Ջորափորեցուն Կոստանդնուպոլիս հրավիրելը նպատակ էր հետապնդում ձեռք բերել հայրուզանդական եկեղեցական միություն՝ «ի շահ կայսրության միասնության»¹³: Անվավեր մի գովածքում նշված է, որ կայսրության մայրաքաղաքում Սահակ Կաթողիկոսն, իբրև թե, մեղադրել է հայերին՝ ծայրահեղ միաբնակներին հարելու համար:

⁵ Պատմութիւն Ղևոնդայ Մեծի վարդապետի հայոց, Ա. Պետերբուրգ, 1887, Ե., էջ 16:

⁶ Հաւաքում Պատմութեամբ վարդապետ վարդապետի, Վեմետիկ, 1862, ԼԷ, էջ 71:

⁷ Ստեփանոսի Տարոնեցույ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ա. Պետերբուրգ, 1885, II, Բ, էջ 100:

⁸ Նույն տեղում, էջ 100-101:

⁹ G. Garitte, La Narratio de rebus Armeniis (Corpus Scriptorum Christianorum, vol. 132. t. 4, p. 47).

¹⁰ Յե՛ս Գր. Տառնացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 244:

¹¹ Կանոնագիրք Հայոց, Ռո. Բ. Ալեք. Վ. Հակոբյանի, Երևան, 1971, էջ 244:

¹² Այս մասին տե՛ս նույն տեղում, առաջաբան, էջ XCVIII և հտ. :

¹³ Մ. Վան Էսքրուկ, Բյուզանդիայի հայկական քաղաքականությունը սկսած Հուստինիանոս Բ-ից մինչև Լևոն Գ. «Էջմիածին», 1997, Զ-Է, էջ 76:

Սահակի շուրթերին եմ դրվում «մոլորաշավիդ», «հերետիկոս» ազգակիցների դավանական մեղանշումների համար դատափետող խոսքեր: Նույն գրության մեջ ասվում է, որ իբր Սահակ Կաթողիկոսն ու իրեն ընկերակցող եպիսկոպոսներն ընդունել են քաղկեդոնական դավանությունը, սակայն Հայաստան վերադառնալով տեղի են տվել իրենց ազգակիցների սպառնալիքների առջև, դատապարտել են քաղկեդոնականությունը¹⁴: Այս գրվածքը ստեղծվել է հետագայում, ամենայն հավանականությամբ քաղկեդոնական միջավայրում XII դ., երբ արծարծվում էր հայ և քուրդադական եկեղեցիների միավորման խնդիրը¹⁵:

Սահակ Ձորափորեցու օրոք Հայ եկեղեցին շարունակեց դավանական ինքնորոշման ուղեգիծը և կույ չգնաց Բյուզանդիայի կայսերականացված եկեղեցու նկրտումներին: 698 թ. Տիբերիոս Գ կայսրը զորք ուղարկեց Հայաստան, բայց հայերը հակահարված տվեցին նրան և ստիպեցին նահանջել¹⁶: Ինչպես տեսնում ենք, ստեղծված պայմաններում բացառվում էր հայ-քուրդադական եկեղեցիների միության և Սահակ Կաթողիկոսի կողմից դրան սատարելու հավանականությունը: Պահպանվել է նեստորական երկաթեականության դեմ ուղղված Սահակ Ձորափորեցու ծավալում գրությունը, որտեղ հեղինակը շեշտում է Քրիստոսի մարմնի անչարչարելի և անմահ լինելու, նրա մեկ բնություն ունենալու հանգամանքը: Հեղինակը նշում է, որ առանցք են եղել տիեզերածողության ընդունած հավատքին հավատարիմ է մնում «Առաքելական եկեղեցի Աստուծոյ, որ է ի մէջ Հայաստանեացս եւ յամենայն աշխարհի»¹⁷: Ի հեճուկս նեստորի և Հոռոմի Լևոն Զ Պապի, Սահակ Կաթողիկոսը գտնում է, որ կույսից ծնվել է ճշմարիտ Աստված և ոչ թե «մարդ ապականելի»¹⁸, և որ «մի բնութիւն է մարմնոյն եւ Բանին աստուածային, եւ մի կամք մորա միաւորութեամբ»¹⁹, որ «անապական եւ անմահական էր մարմինն Քրիստոսի անդրստին իսկ յարգանդէ կուսին եւ մինչեւ ցիւաչն եւ մինչեւ ցլափտեան միաւրինակ»²⁰: Սրանից հետևում է, որ ճիշտ չէ Հովհան Օձնեցուն վերագրված «Սակս ժողովոց, որ եղեն ի Հայք» գրության այն տեղեկությունը, որ, իբր, սկսած 630 թվականից (եզր Կաթողիկոսից) մինչև 717 թ. (Հովհան Օձնեցին) գահակալած Հայոց Կաթողիկոսները, այդ թվում նաև Սահակ Ձորափորեցին, «հնազանդեալք խոստովանութեանն Բաղկեդոնի անիծելոյ եւ ոչ ընկալան գտարք ժողովմ Դուիմի...»²¹:

¹⁴ *Migne, Patrologiae, graecae*, t. 132, Paris, 1864, p. 1155-1218, 1254.

¹⁵ Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա, էջ 770, Ա. Բողոյան, Հայ- քուրդադական եկեղեցական քառակցությունների վավերագրերը, Երևան, 1995, էջ 162 և հտ.:

¹⁶ Դևոմոյ, Զ, էջ 19:

¹⁷ Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 417:

¹⁸ Նույն տեղում, էջ 424:

¹⁹ Նույն տեղում, էջ 436, 442, 449:

²⁰ Նույն տեղում, էջ 451, 469, 473:

²¹ Նույն տեղում, էջ 222: Այս տեղեկությունը, առանց հիմնավոր ապացույցների, վավերական է

Սահակ Զորափորեցու գահակալության ժամանակ, 698 թ., Արդ ալ-Մալիք խալիֆան զորք ուղարկեց Հայաստան²², որը 700 թ. վերջնականապես ընկավ արաբների գերիշխանության տակ: Արհավրալից օրեր ապրեցին նաև Հայ Եկեղեցին ու նրա սպասավորները: Խալիֆայի զորականները Հայ Եկեղեցու ունեցվածքը կողոպտելու միտլուքով տարված՝ դիմեցին ամուր վայրագությունների: Տեղեկանալով Բագավանի Ս. Հովհաննես Եկեղեցում պահվող «երևելի ու պատվական» սպասքների մասին, խալիֆայի զորապետն իր զինվորներին ուղարկեց վանք, իբրև թե այնտեղ գիշերելու համար, ինչը Եկեղեցու իրավունքների կոպիտ ոտնահարում էր: Այդքանով չբավարարվելով՝ նրա զինվորները խեղդամահ արեցին իրենց ստրուկներից մեկին և, մեղքը գցելով վանքի միաբանների վրա, բողոքեցին զորապետին, որը կարգադրեց պատժել վանականներին «ես զինչս եկեղեցույն վտարել յաւարի»: Այնուհետև դժնաբարո զորականները «ածեալ զամենեսեան արտաքս եւ բանտեմ տոռամքը կապանաց՝ մախ ծայրակոտոր առնէին զոսոց եւ զծնոս, եւ ապա զփայտէ կապեալ բառնային զկենդանութիւն մոցա»²³, վկայում է Ղևոնդ պատմիչը:

Արաբ զորայինների խժոժությունների զոհ դարձավ նաև Հայոց հայրապետամիստ Դվինը, կաթողիկոսարանը, ինչը լցրեց հայերի համբերության բաժակը, և նրանք եղերական այդ դեպքերի ազդեցության տակ արդար զայրույթով հարձակվեցին Դվինում տեղակայված արաբական կայագրորի վրա և բյուզանդացիների զորակցությամբ ջախջախեցին նրան: Սակայն նրանք ևս ի վերջո զոհ գնացին դարանակալ ոճրին: Աղվանք կատարած արշավանքից վերադարձած Մուհամմադ իբն Մրվանը հարձակվեց Դվինի վրա՝ սրի քաշելով նրա բնակչությանը, նաև բյուզանդացի զորականների²⁴: Այնուհետև նա «բազում աւարաւ» վերադարձավ Դամասկոս՝ հեռը տանելով կապանքների մեջ դրված Սահակ Կաթողիկոսին և Հայոց իշխան Սմբատ Բագրատունու²⁵: Մուհամմադ իբն Մրվանը ավարի մատնեց նաև Սևանի վանքը: Հովհաննես Դրասխանակերտցին հավաստում է, որ նրա հաջորդը «զամենայն Եկեղեցիս Քրիստոսի ի բոլոր զարդոց կապուտ կողոպուտ թողոյր»²⁶: Ավելին. նա նպատակադրվել էր նաև «բառնալ զազատախոմբ տոհմն յաշխարհէս Հայոց հանդերձ մոցին հեծելովք»²⁷:

համարում Վ. Հաջուհի (Տե՛ս նրա «Կարեւոր խնդիրներ Հայ Եկեղեցու պատմութեմն», Վեմսիկ, 1927, էջ 461-462): Սահակ Գ-ին քաղկեդոնադավան է համարում նաև Ս. Կոզյանը առանց լուրջ կովածների (Տե՛ս նրա «Հայոց եկեղեցին միջև Փլորեմոյան ժողովը», Բեյրութ, 1961, էջ 254-256):

²² Ղևոնդ, Զ, էջ 19:

²³ Նույն տեղում, է էջ 19-21:

²⁴ Մովսես Կաղանկատվացի, էջ 317-318, Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 93-94:

²⁵ Ղևոնդ, է էջ 22, Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 93-94:

²⁶ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 94:

²⁷ Ղևոնդ, Ը, էջ 23:

Ղևոնդ պատմիչը հոգու ամհուն մորմոռքով պատմում է խալիֆայի զորականների խուժողով արարքներից հետո Հայ եկեղեցու վիճակի մասին: «Ո՛վ ոչ առանց արտասուաց բերիցե զամհմարին աղետսն, որ ժամանեաց մոցա,- գրում է նա,- զի սուրբ եկեղեցին խրթնացեալ ի բարեզարդութենէ բեմին եւ լոնալ ծայն աստուածային փառատրութեանն. ընդ միմ լոնալ հոգեւոր եւ քանատր պատարագացն կարգք. զոր սուրբն մատուցանէին սրտի մտօջ միայնոյ մաքրագումին: Օհջեալ եւ պայծառութիւն լապտերացն, որովք զգիշերն որպէս զսիւ լուսատր առնէին: Դադարեալ եւ քուրումն անուշահոտ խնկոցն եւ մաղթանք քահանայից, որովք զփառատրութիւն ժողովորդացն նոսրէին Արարչին եւ զհաշտութիւն ի մարդասիրէն Աստուծոյ հայցէին: Եւ միանգամայն ասել՝ ամենայն բարեվայելչութիւն խորացին Տեառն դատարկացեալ»²⁸:

Խալիֆայի զորականների խուժողով արարքները վերստին ոտքի հանեցին հայերին: Հատկապես մեծ զայրույթ առաջացրեց Սահակ Կաթողիկոսի և Հայոց իշխանի գերեվարումը: Հայ ազատամիցն և հոգևոր դասը դա դիտեցին որպես Հայաստանը գլխատելու չարագուշակ նշան: Այսպիսի մտայնության հետևանքների վրա հայ նախարարները դիմեցին վճռական քայլերի երկրի ոտմահարված իրավունքները պահպանելու նպատակադրումով: 702 թ. մրանք ապստամբեցին և սպանեցին արաբ ոստիկանին, որի դեմ, համաձայն IX դ. արաբ պատմագիր Աբու Մուհամմադ ալ-Քուֆիի չափազանցված տվյալների, հայերը հանեցին 100 հազարանոց զորք և «կոտորեցին բոլոր մահմեդականներին, խելով նրանց ողջ ունեցվածքը: Այս մասին տեղեկանալով՝ Մուհամմադ իբն Մրվանը 40 հազարանոց զորքով ելավ հայերի դեմ և պարտության մատնեց նրանց ու բյուզանդացիներին»²⁹: Հայերի ապստամբության մասին հիշում են նաև ուրիշ մատենագիրներ. բայց ոչ այդպիսի չափազանցված գույներով: Քուֆին հավանաբար մկառի ումի 703 թ. հայերի ապստամբությունը³⁰: Հայտնի է, որ արաբները կոտորում էին ապստամբած ժողովուրդների պատանդներին: Հայերի ապստամբության պատճառով կարող էին վտանգվել Սահակ Կաթողիկոսի և Սմբատ Բագրատունու կյանքերը, ուստի պետք է կարծել, որ վերջիններս ապստամբության ժամանակ արդեն Հայաստանում էին:

703 թ. հայերի ապստամբությունը հետևանք էր խալիֆայությունում քրիստոնյաների դեմ ուժեղացող հալածանքների³¹: Ապստամբ հայ նախարարները կամենում էին հետանալ «առ թագաւորն յունաց», - գրում է Ղևոնդը: Հավանաբար, Սահակ Կաթողիկոսը կողմ չէր Հայաստանից նրանց հեռանալուն, ուստի նախարարները չփորձեցին ձեռք բերել նրա համաձայնությունն ու մաղթանքը և մեկնեցին վասպուրա-

²⁸ Նույն տեղում, է, էջ 22:

²⁹ Абу Мухаммад ал-Куфти. Книга завоеваний, Баку, 1981, с. 13.

³⁰ Հմմտ. Ա. Ցեր-Ղևոնդյան. Հայաստանը VI-VIII դարերում, Երևան, 1996, էջ 123:

³¹ Այդ հալածանքների մասին հիշում է նաև արաբ պատմագիր Ալ-Իսկիմը (տե՛ս Православный Палеостолник Савромк, XVII /2/, С. Петербург, 1897, стр. 549.

կանգի Առեստ ավանդի մոտակայքում բնակվող միայնակյացի մոտ, որին Ղևոնդը բնութագրում է իբրև «այդ սուրբ, ընտրեալ եւ լի հոգեւոր իմաստութեամբ»: Միայնակյացը զգուշացրեց հմարավոր որոգայթներին և օրհնալից խոսքերով ճանապարհեց նրանց³²:

Հայերի ապստամբության պատճառով խալիֆան պատժարշավ ձեռնարկեց Հայաստանի դեմ: Այն կամխելու մտադրությամբ հայ մախարարները Սահակ Զորափորեցուն ուղարկեցին արաբ զորապետի մոտ՝ խառան քաղաք, հաշտության եզրերի հասնելու հույսով: Հովհաննես Դրասխանակերտցին գրում է, որ Սահակն այդ ժամանակ դեռևս Դամասկոսում էր և հենց այնտեղից էլ մեկնեց արաբ զորապետի մոտ³³: Սակայն այն փաստը, որ մախարարներն են նրան ուղարկել խառան, վկայում է, որ Կաթողիկոսը Հայաստանից է մեկնել արաբ զորագլխի մոտ: Ժամանակամերձ Ղևոնդ պատմագիրը գրում է, որ «իբրև լուսն մախարարը Հայոց աշխարհիս գհեճն, որ գայր զօրացեալ ի վերայ՝ հանդերձեցին Կաթողիկոսն Հայոց զՍահակ եւ զոմանս յեպիսկոպոսաց աշխարհիս ընդ մեա՝ երթալ ընդդէմ զօրուն Իսմայելի եւ խօսիլ ընդ զօրավարին մորա քանիւք խաղաղութեան եւ մուսճել զինքեանս ընդ լծով ծառայութեան մոցա»³⁴: Հետևաբար, Սահակ Կաթողիկոսը և եպիսկոպոսները ոչ թե Դամասկոսից, այլ Դվինից են մեկնել արաբ զորապետի մոտ՝ խառան: Ղևոնդի վկայությունից երևում է, որ թե՛ Սահակ Կաթողիկոսը, և թե՛ մախարարները կողմնորոշվել են դեպի արաբները՝ ելնելով ստեղծված իրավիճակից: Հայաստանը նվաճված էր արաբների կողմից, ուստի նրանք այլընտրանք չունեին:

Երբ Սահակն «յուղարկեցաւ յաշխարհէս», վկայում է Ղևոնդը, և հազիվ էր հասել խառան քաղաք, հիվանդացալ և վախճանվեց: Մահվանից առաջ մա գրեց արաբ զորապետին ուղղված մամակ, որտեղ մեջ, որ ինքն ուղարկվել է իր ազգի կողմից, որ «միաբանեալ մախարարք եւ ուսմիկը Հայոց խնդրէմ... զի արասցես խաղաղութիւն ընդ ժողովրդեան իմում, եւ ծառայեսցեն քեզ հարկատրութեամբ. արգելցես զսուր քոյ յարեմէ եւ զձեռն քո յաւարառութեմէ. եւ հնազանդեսցեն քեզ յամենայն սրտէ իւրեանց: Բայց վասն հաւատոյս մեր՝ զի իշխանութիւն լիցի մեզ պահել, յոր հաւատացաք եւ խոստովանեցաք. եւ ոչ ի ձերոց այտի մի խոշտանգեսցէ զմեզ դառնալ ի հաւատոց մերոց»³⁵: Մի Հայսմավուրքում մշվում է, որ Սահակ Զորափորեցին արաբ զորապետին հաղորդում է ոչ միայն խալիֆայությանը հայերի հնազանդության ցանկության մասին, այլև առաջ է քաշում Հայաստանի վրա կատարվելիք հարձակումների դեպքում արաբների կողմից հայերին զորակցելու անհրաժեշտությունը³⁶, ինչը փաստորեն հայ-արաբական մոր պայմանագիր կնքելու առա-

³² Ղևոնդ, Ը, էջ 23-24:

³³ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 95-96: Նույն կարծիքիմ է Մ. Օրմանյանը «Ազգապատում», Ա, էջ 784:

³⁴ Ղևոնդ, Թ, էջ 28:

³⁵ Նույն տեղում, Թ, էջ 29, տե՛ս նաև Վարդան, ԼԷ, էջ 71:

³⁶ Տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց սիրոց Յակոբեանց», կազմեց Ն. Պողարեան, Բ. Ա. Երուսաղեմ,

ջարկ էր: Կաթողիկոսը, ինչպես վկայված է Ղևոնդի մոտ, դնում էր ման Հայոց քրիստոնեական հավատի անձեռնմխելիության խնդիրը, ինչը Հայաստանի ներքին ինքնավարությունը պահպանելու կայուն գրավականն էր:

Երբ արաբ զորապետը ժամանեց Նսառան, նրան համձնեցին Հայոց Կաթողիկոսի մամակը, որն ընթերցելուց (հավանաբար գրված էր արաբերեն) հետո նա «նստումս ողջոյն», զովեց նրա իմաստությունը, «զի ըստ օրինի քաջ հովուին ի վերայ քուին հօտիդ հոգացեալ՝ փութացար գալ ընդ առաջ խրոխտացեալ սրոյ իմոյ»³⁷: Զորապետը խոստացավ ոչ միայն կասեցնել դեպի Հայաստան ձեռնարկվող արշավանքը, այլև կատարել Կաթողիկոսի մամակում նշված բոլոր խնդրանքները³⁸: Կաթողիկոսի դին պատահելուց հետո նրան ուղեկցող եպիսկոպոսներն արաբ զորապետից վերցնելով «բան երդման ի ձեռն գրոյ», վերադարձան հայրենիք: Հայ մախարարները հավանություն տվեցին, հոգևոր այրերի ձեռք բերած երդմնագրին և «ծառայեցին յայնմհետև իսմայելացուցն ծառայութիւն»³⁹: իսկ խալիֆայության գորապետը երեք տարի ձեռնպահ մնաց Հայաստան արշավելուց³⁹:

Այսպիսով ձերուճագարդ Սահակ Կաթողիկոսը՝ հայրենի երկրի քաղաքական փրկության իրաւունք առաջնորդը, առ ոչինչ համարելով ամեն տեսակ վտանգներ ու որոգայթներ, մեկնեց Նսառան, որպեսզի իր հոտին փրկի մահացու հորձանքից: «Եւ այսպէս, - գրում է Հովհաննէս Դրասխանակերտցին, - զմեռելութիւն նորա պատուական արար Աստուած քան զմեր կենդանութիւնս, եւ ի սաղրելոյ աղօթից նորա փրկութիւն մեծ ծագեաց աշխարհիս մերում»⁴⁰: Նրա համարձակ ձեռնարկումը քաղաքական խորքից զուրկ չէր ման Հայաստանի մախարարական համակարգի պահպանման տեսակետից: Հայոց Կաթողիկոսը ջանում էր իր հեղինակավոր միջնորդական առաքելությամբ ի դերն հանել խալիֆայության և հայ մախարարական իշխանությունների միջև գոյացած հակամարտության եզրերը: Նա վտանգավոր պահին երկիրը ձերբազերծեց ահավոր վտանգից և իր հոգով ու արյունով ապահովեց նրա թեկուզ կարմատն, բայց հույժ անհրաժեշտ խաղաղությունը: Նրա կատարածը հերոսական ինքնազոհություն էր, իր նպատակի ծանրալուծ բեռը կրելու բացառիկ օրինակ:

Սահակ Զորափորեցու ձեռք բերած հայ-արաբական համաձայնությունը որոշակի դեր խաղաց ման հետագայում: Ընդհատ է. 705 թ., ելնելով արաբների դեմ պատերազմող բյուզանդացիներին հայ մախարարների զորակցության փաստից⁴¹, արաբ

1966, էջ 18:

³⁷ Ղևոնդ, Թ, էջ 30:

³⁸ Նույն տեղում:

³⁹ Նույն տեղում, Թ, էջ 31:

⁴⁰ Հովհաննէս Դրասխանակերտցի, էջ 97:

⁴¹ Ղևոնդը մոյմիսկ գրում է, որ այդ թվականին տեղի ունեցած արաբ-բյուզանդական ընդհարումների ժամանակ «առաջնորդ գորում Յունաց եղեմ մախարարք Հայոց» (տե՛ս Ղևոնդ, Թ, էջ 32):

ռստիկանը Նախճավանի զորապետ Կասրմիմ հրամայեց պատժել հայ մախարար-ներից, ինչից հետևեց մրանց ողջակիզումը Նախճավանի և խրամ ավանի եկեղեցիներում⁴², սակայն Վալիդ խալիֆան մույմ 705 թվականին պաշտոնաձև արեց այդ ռճիրը մախաձեռնող ռստիկանից: Նոր ռստիկանը վերակառուցեց Դվիմ քաղաքը⁴³, այդ թվում մաև մրա կենտրոնական թաղը, որտեղ էին գտնվում կաթողիկե եկեղեցին և կաթողիկոսի պալատը: Հայաստանում վերահաստատվեց Սահակ Կաթողիկոսի օրոք ձեռք բերված խաղաղակեցությունը:



⁴² Նույն տեղում, ժ. էջ 32-34, Մովսես Կաղանկատվացի, էջ 318, Ստեփանոս Օրբելեան. Պատմություն ճահանգիմ Սիսակամ, Թիֆլիս, 1910, ԼԱ, էջ 137. Վարդան, ԼԷ, էջ 72. Асв Мухамед аз-Կыф, стр. 14, Chronique de Mishel le Synen, II, Paris, 1901, p. 474.

⁴³ Ղևոնդ, ժ. էջ 36, Մխիթար Այրիվանեցի, Պատմություն Հայոց, Մոսկովա, 1860, էջ 51:

ՌՈՒԲԵՆ ՄԻՄՈՆՅԱՆ

ՎԵՐՋԱՊԵՍ ՈՐՏԵՂ Ե ԳՏՆՎԵԼ ՀԻՆ ԳԵՏԻԿԻ
ՎԱՆՔԸ

Հիմ Գետիկի վանքի տեղադրության հարցը մինչև այժմ էլ հետաքրքրում է միջ-
նադարյան Հայաստանի պատմությունում ուսումնասիրողներին, առավելապես
«Ռոչկավոր և գիտությանը մեծիմաստ» Մխիթար Գոշի թեղում գործունեությանը
գրադպրոցներին, ամշուշտ մասնաճյուղի պատմական աշխարհագրության մասնագետ-
ներին: Հիմ Գետիկի վանքի գոյության մասին սկզբնաղբյուր են XIII դարի
դեպքերին քաջատեղյակ պատմիչներ, Ռոզնոր եղբայրներ Վարդան վարդապետը
(Արևելքին) և Կիրակոս Գանձակեցին: Սրանցից հատկապես երկրորդը տվել է մաս
խնդրի լուծման բանալին: Վարդան վարդապետին է պատկանում «Հիմ Գետիկի
վանք» («ի հիմն կոչեցեալ Գետիկ») արտահայտությունը¹, և հավանաբար մա-
օգտվել է իր բարեկամի՝ Կիրակոս Գանձակեցու ընդարձակ շարադրանքից², որից
աներկբայորեն հանկարծվում է, թե XII դարավերջին տեղի ունեցած երկրաշարժից
սաստիկ ավերված Հիմ Գետիկի վանքի փոխարեն Մխիթար Գոշը կառուցել է
Գետիկ անունով մոր վանք:

Կիրակոս պատմիչը հանգամանորեն ներկայացնելով Գոշ կոչված Մխիթար
վարդապետի Կիլիկիայում խոր ուսումնառության ընթացքը և կյանքի ողիսականը,
հայտնում է, թե մա Արցախում իմանալով Կայան և Մահկանաբերդ գավառի տեղ
Արծրունի Քուրդ իշխանի տարագրությունից հայրենիք վերադառնալը, որի հետ
ծանոթացել էր Կարիմում, գալիս է մորա մոտ հին սիրուց և մտերմությունից մղված:
«Եվ ապա բնակվեց Գետիկ կոչված վանքում Կայան գավառում, Աղստև մեծ գետի
աջ կողմի վրա: Վանքի առաջնորդը մորա աշակերտ Սարկավազ կոչված վարդա-
պետն էր, որ մեծ ուրախությամբ մորան ընդունեց, և ինքն էր սպասավորում մորան...:
Ապա սաստիկ երկրաշարժ եղավ, որ բազմաթիվ վայրեր կործանեց ու տապալեց
բարձրաբերձ շենքեր, որոնց հետ այնպես ուժեղ խախտվեց Նոր Գետիկի եկե-
ղեցին, որ վերստին մորոգեղու հմար չկար»³:

Վանքի բնակիչները երկմտելով կամեցան էին ցրվել այս ու այն կողմ ոչ
միայն եկեղեցու խախտվելու պատճառով, այլև նեղված էին մերձակայքից, որով-
հետև իշխաններից Սարգիս անունով մեկը իր գյուղը տեղահան արեց և քերեց,
վանքի մոտ մի այլ գյուղ շինեց: Այնուհետև վանքի և մորահաստատ գյուղի
բնակիչները գտնության մեջ էին միմյանց հետ և պարսավում էին իրար: Սուրբ

¹ Հառաչում պատմության վարդապետի, Վեմետիկ, 1862, էջ 140:

² Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 151-162:

³ Կիրակոս Գանձակեցի, նույն տեղում, էջ 153:

Մխիթար վարդապետն արգելեց նրանց ցրվելու մտադրությունը և հորդորեց միասին ապրել: «Ապա միաբան զնացին մեծ իշխան Իվաննի՝ վրաց գորավար Զաքարեի (ամիրսպասալար Զաքարե Զաքարյանի մասին է խոսքը, որը Մխիթար Գոշի խոստովանության հոգևոր որդին էր - Ռ. Ս.) եղբոր մոտ, որոնք այդ ժամանակ Կայան բերդին և զավատին իշխող բարեպաշտ Բուրդ իշխանի քեռորդիներն էին, ցույց տվեցին նրան իրենց խնդիրը, որպեսզի տեղ ցույց տա, ուր փոխադրեն իրենց վանքը: Նա հրամայեց նրանց, որ որոնեն, թե որտեղ է հարմար: Նրանք շրջելով գտան բարեվայելույ ռու զոգաձև տեղ երկու լեռների ստորոտների մոտ (որ կա գետ), որ գալիս է նրա լեռան գլխից: Տեղը անվանում են Տանձուտի ձոր՝ Այնտեղ կար մի գյուղ, ու մի փոքրիկ ձորակ էր անցնում նրա միջով և մի (գետ), ավելի հորդառատ, աչ կողմից տեղը փայտաշատ էր ու ջրավետ»⁴: Հենց այս հարմար տեղում Մխիթար վարդապետն իր միաբանների հետ մեծ իշխան Իվաննի հրամանով ձեռնարկեց վանքի և եկեղեցու շինությունը՝ դնելով Նոր Գետիկի նշանավոր համալիրի հիմքերը:

Երկար մեջբերումները կատարվեցին միայն այն նպատակով, որ ցույց տրվեն պատմիչի վկայություններն այն մասին, թե Գետիկ կոչված վանքը ի սկզբանե եղել է Կայան զավատում Աղստև անվանվող մեծ գետի աչ կողմի վրա: Նաև, որ նոր վանք կառուցելու համար գտած բարեվայելույ տեղով լեռան գլխից եկող գետակից աչ հոսում է մի ավելի հորդառատ գետ, որի անունը պատմիչը չի տալիս: Ըստ նկարագրության, լեռան գլխից եկողը ճիշտ և ճիշտ համապատասխանում է ներկայիս Գոշավանքի հարավ-արևելյան կողմով, Գոշ գյուղով հոսող Տանձուտ գետակին, իսկ նրանից աչ հոսող ավելի հորդառատը՝ ներկայիս Գետիկ գետին, որը Կիրակոս Գանձակեցու օրերում XIII դարում, դեռևս անուն չի ունեցել, կամ դա չի իմացել պատմիչը, այլապես կասեր:


Առաջին անգամ Գետիկի (Հին Գետիկի) վանքի տեղադրության մասին սխալ տեսակետ է հայտնվել Վարդան վարդապետի վերը նշված աշխատության 1862-ի վեցերորդական հրատարակության 140-րդ էջի ծանոթագրությունում, որը հետագայում կրկնել են շատ հեղինակներ: Այնտեղ ասված է. «Հին Գետիկ ի Միափոր գաւառի, որ ելից կոսէ ծովուն Սեւանայ, երկրասասան կործանմամբ ատրեալ. Մխիթար շինեաց զՆոր ոչ հեռի հնոյն»:

Նախ՝ Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ նախաստեղծ Գետիկի (Հին Գետիկ) վանքը գտնվել է ոչ թե Միափոր, այլ Կայան գավառում, այն էլ Աղստև գետի աջափնյակում: Ապա հայտնի է, որ նկարագրվող ժամանակում Կայան գավառը զբաղեցրել է նախկին Գուգարք աշխարհի Ջորափոր գավառը՝ Աղստև գետի միջին հոսանքի շրջանը, ներկայիս իջևան քաղաքի հյուսիս-արևելյան սահմաններից մինչև Դիլիջան ընկած հատվածը (տե՛ս քարտեզը): Սրա իշխանահայտը Բագրատունիների օրերից եղել է իջևանից 17-18 կմ հարավ-արևմուտք, Աղստևի ձա-

⁴ Կ. Գանձակեցի, նույն տեղում, էջ 153:

խափնյակի բարձր ժայռերից մեկի կատարին կերտված անառիկ քերդը: Եվ, ինչպես հասկացվում է Հովհաննես Դրասխանակերտցու ասածից⁵, Միափոր գավառը գտնվել է Սևանա լճին շատ մոտ, հյուսիսային կողմում, ուր ապաստան են գտնում արաբ ուտիկանի անողորմ հալածանքներից անդված Սյունյաց երիտասարդ իշխաններ, Սմբատ արքայի քեռորդիմներ Սահակն ու Վասակը: Ուրեմն Միափոր գավառը, որը հաջորդ ուղղափառացիների շնորհիվ XII դարի վերջում նույնպես անցել էր Զաքարյանների իշխանության տակ, ընդգրկում էր Գետիկի ձորահովիտը: Ուստի Գետիկի (Հին Գետիկի) վանքը Աղստևի աջ ափից՝ Կայան գավառից Միափոր գավառ տեղափոխվելը սխալ է:

Ի դեպ, ժամանակին անվանի հնագետ Գրիգոր Կարախանյանն ապացուցել է, որ Աղստև գետից, Կայան գավառի սահմանից 33-35 կմ հեռավորության վրա, Միափոր գավառի միջնամասում, մերկայիս Գեղարքունիքի մարզի Շամբարակի ենթաշրջանի Մարտունի գյուղի մոտ գտնվող հնավայրի ավերված կարծեցյալ Հին Գետիկի եկեղեցին խամշի վանքի գլխավոր շինությունն է: Այդ դեպքում որտե՞ղ է գտնվել Հին Գետիկը:



Նոր Գետիկի վանքի եկեղեցու հատակագիծը ըստ պահպանվող հիմնադատի պատկերի

Վանքի Գետիկ անունը հուշում է, որ այն ծագել է Կայան գավառում, Աղստևի աջափնյակում նդած փոքր գետից՝ գետիկից: Եվ իսկապես, պատմական Միափոր գավառի սահմաններից (Կարմիր կամրջից) մինչև Իջևան քաղաքի սահմաններում Աղստևի աջից միացող Ուրթիջուր գետն ընկած տարածքում կա ընդամենը մեկ մշտաճուս վտակ՝ մեկ գետիկ, որն այժմ կոչվում է Բերդաձորի ջուր և անցնում է Կայծոմ բերդի արևմտյան կողմի ձորով: Այս գետակն է վրիպել ուսումնասիրողների աչքից: Մեր կողմից մանրակրկիտ ուսումնասիրվել է Աղստևի աջափնյակի խնդրո առարկա տարածքը, ուր կան մի շարք հնագույն բնակավայրերի հետքեր, ավերված շինություններ, փոքրիկ, անշուք մատուռներ, անվիժագիտ խաչքարեր և ճանապարհներ: Սակայն հնավայրերից միայն մեկն է, որ գտնվում է մշտաճուս գետակի

⁵ Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն (Աշխարհարար թարգմանությունը և ծանոթագրությունները Գ. Թոսունյանի), Երևան, 1996, էջ 231:

ափից և ունի ուղղանկյուն հատակագծով, սաստկորեն ավերված եկեղեցի և վաճառական ընդարձակ համալիր:

Աղաստի հովտի արևելյան սահմանագիծը կազմող Պայտապարի լեռնաշղթայից ճյուղավորվող աճառապատ լեռնաբազուկներից մեկը հարավ-հյուսիս ուղղությամբ իջնում է Աղաստ մեծ գետի և ճրա Բերդաձորի Ջուր վտակի միախառնման անկյունը: Ահա այդ անկվող լեռնաբազկի միջնամասում, կայծոռ բերդից ուղիղ գծով 2,5-3 կմ արևմուտք, ճիշտ կայան իշխանացիստ բերդի դիմաց, տարածվում են հին բնակավայրերից մեկի՝ Հին Գետիկի վանքային համալիրի փլատակները, որոնց ժամանակի ընթացքում իր տակ է առել աճառը: Այստեղ եղել են շուրջ երեք տասնյակ ուղղանկյուն և թուրքի հատակագծերով շինություններ: Դրանց շուրջ բարեբեր սարավանգները դարավանդված են որպես վարելահող: Տեղը նաև նպաստավոր է եղել աճառապահության համար և առաջ՝ փայտանյութով, վայրի մրգերով, հատապտուղներով և ուտելի բանջարներով: Հնարավոր է, որ կալե խողովակներով ջուր բերած լինեն հնավայրի արևելյան կողմից հոսող գետիկից:

Բնակավայրի գրեթե կենտրոնում, լեռնաբազկի ժայռոտ կատարներից մեկին, տեղացիներից ծանոթ խաչի յալմ է, ուր գտնվում է վանքային համալիրի 320 x 610 սմ (արտաքին չափեր) ուղղանկյուն հատակագծով միջև հիմքերն ավերված եկեղեցին, որի թակում դրված են եղել անվիմագիր առնվազն չորս խաչքարեր: Վերջիններս բարբարոս եղանակով՝ պայթեցումով, հնավայրն ավերելով հողի նրես են հանել մեր ժամանակների զանախոյզները: Եկեղեցու հարավ-արևելյան կողմում պահպանվել են պարսպի մնացորդներ, կան նաև X-XII դարերին յուրահատուկ պարզ խաչեր կրող կիսամշակ գերեզմանաքարեր: Եկեղեցին կերտված է եղել տեղական հողված սպիտակ չեչաքարով և, չնայած փոքր ծավալներին, անշուշտ, գեղեցիկ քնության ֆոնի վրա վայելուչ տպավորություն է թողել դիտողի հոգում: Ի դեպ, այստեղից 1,5-2,5 կմ հեռավորությամբ, կայծոռ բերդը պահող զանգվածեղ ժայռի ստորոտին, կան գյուղատեղեր, որոնցից մեկը հավանաբար պատկանել է վանքի բնակիչների հետ գոտության պատճառով հեռացած Սարգիս իշխանին, որին ներկայացրել է պատմիչը:

Գրեթե առանց սխալվելու կարելի է ասել, որ X-XII դարերում հիմնված վանքը, ըստ ավերված շինությունների քանակի, ունեցել է մեծ միաբանություն, վարդապետական դպրոց և գեղեցիկ փոքրիկ եկեղեցի, մշտափոս գետակի անունով կոչվել է Գետիկ: Նրա ավերվելուց հետո, երբ միաբանները Մխիթար Գոշի գլխավորությամբ մոր վանք են հիմնում Զաքարյան Իվանի շնորհած Տանձուտի ձորում, պահպանում են նախկին բնակավայրի անունը՝ կոչելով Նոր Գետիկի վանք, ինչը վկայում են պատմիչները: Հետագայում ղեռան գլխից՝ եկող և Նոր Գետիկի վանական համալիրի հարավ-արևելյան կողմով, ներկայիս Գոշ գյուղի միջով անցնող գետակը կոչվել է Տանձուտ, իսկ ճրա ձորակի աջ կողմից հոսող ավելի հորդառատ գետը, Աղաստի Միափոր գավառից եկող ճշանավոր վտակը, որը կիրակոս Գանձակեցու ժամանակ եղել է աճառում, հիմ ու մոր վանական համալիրների պատվին՝ Գետիկ:

Ժիշտ է, մեր Ռայրենիքին տիրացած օտարներն ապագայում այս գետը կոչել են Թարսա-չալ, (Ռակառակ-գետ), որովհետև երկրամասի գետերի պես սա չի Ռոսում Ռյուսիս-արևելյան ուղղությամբ, այլ դեպի արևմուտք կամ Ռյուսիս-արևմուտք, սակայն օտար անուրը դուրս է մղվել և պահպանվել Ռայկակամը, գեղեցիկը, նախնականը՝ Գետիկ:

Եվ վերջապես, գոնե Հին Գետիկի վանքի ուժգին երկրաշարժից XII դարավերջին ավերված եկեղեցին պեղման կարիք է զգում, որը կարելի է մասնագետ գիտնականի հսկողությամբ մի քանի օրում իրականացնել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի պատմության ֆակուլտետի ուսանողների օգնությամբ: Գիտական արդյունքը, Ռավատացած եմ, կհատուցի քանքերը:



ԱՄՍՏՈՒՆԻ ՎԻՐԱԲՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հետպատկերված մյուս ժամանակաշրջանում ինչպես Գևորգ Զ Չորեքյան Կաթողիկոսի, այնպես էլ խորհրդային Հայաստանի իշխանությունների ուշադրության կենտրոնում էր Հայ Եկեղեցու Սահմանադրության ընդունման հարցը: Հայ Եկեղեցին մինչև խորհրդային իշխանության հաստատումը մախկին Ռուսական կայսրության սահմաններում ղեկավարվում էր դեռևս 1836 թ. ռուսական կառավարության հաստատած «Կանոնադրությամբ» /«Պոլյոժենիե»/, իսկ Արևմտյան Հայաստանի տարածքում՝ «Ազգային-եկեղեցական Սահմանադրությամբ»՝ հաստատված թուրքական կառավարության կողմից 1863թ.: Փաստորեն, խորհրդային իշխանության հաստատումից հետո Հայ Եկեղեցին չուներ այնպիսի մի կանոնադրական կամ օրենսդրական փաստաթուղթ, որը պարտադիր լիներ ամբողջ աշխարհի հայկական եկեղեցիների համար: Ելնելով այդ համաձայնության, 1945 թ. Ազգային եկեղեցական ժողովն օրակարգի հարցերից մեկը դարձրեց Հայ Եկեղեցու Սահմանադրության մշակումը և հաստատումը: Սակայն հարցը չստացավ իր վերջնական լուծումը, և ժողովը մորընտիր Գևորգ Զ Կաթողիկոսին հանձնարարեց մշակել Սահմանադրության մախագիծը, տարածելու այն արտասահմանյան թեմերում՝ քննարկման համար: Հետագայում Սահմանադրությունը հաստատվելու էր՝ հաշվի առնելով փոփոխությունները և առաջարկությունները, որոնք կարվեին մախագծի ուսումնասիրման և քննարկման ժամանակ:

Կաթողիկոսի հիվանդության պատճառով Սահմանադրության մախագիծը միայն 1947 թ. դեկտեմբերին ներկայացվեց Հայ Եկեղեցու գործերի խորհրդի (ՀԵԳԽ) քննարկմանը: Ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ այն մի քանի հոդվածներով հակասում է ՀԽՍՀ Սահմանադրությանը: Այսպես, օրինակ.

ա/ Համաձայն Սահմանադրության մախագծի, Ամենայն Հայոց Կաթողիկոսը իրավունք էր ստանում հանդես գալ «ՄԱԿ-ի, միջազգային կոնգրեսների և խորհրդակցությունների, պետությունների բարձրագույն և կենտրոնական մարմինների առջև... հայ ժողովրդի շահերի պաշտպանությամբ /կ. 20/: Դրանով Կաթողիկոսը իրավունք էր ստանում իրագործել ՀԽՍՀ իրավասությունները միջազգային հարաբերությունների բնագավառում, որը ՀԽՍՀ Սահմանադրությամբ վերապահված էր Նախարարների խորհրդին (ՀԽՍՀ Սահմանադրություն, հոդված 43, կ. «Ժ»):

բ/ Սահմանադրության միակնունդով համախառն էր հանդիպում «կաթողիկոսը որպես հայ ժողովրդի ղեկավար» ձևակերպումը, որը եթե մպատակաբար էր սփյուռքի հայության համար, ապա ԽՍՀՄ-ի սահմաններում իշխանությունների համար անընդունելի էր:

գ/ Սահմանադրության միակնունդ Հայ Եկեղեցին ձեռք էր բերում և տիրում սեփականության, այն դեպքում, երբ ԽՍՀՄ-ում կրոնական համայնքին արգելվում էր տիրել որևէ սեփականության, ուստի առաջարկվում է այդ կետը ձևակերպել «Հայ Եկեղեցին տվյալ երկրի գործող օրենքների հիման վրա...» և այլն:

Հայ Եկեղեցու Սահմանադրության միակնունդ, արված դիտողություններով, Հայ Եկեղեցու գործերի խորհրդի կողմից 1948 թ. փետրվարին ուղարկվեց ԽՍՀՄ Նախարարների խորհրդին կից Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդին՝ ԽՍՀՄ կառավարությանը հաստատման ներկայացնելու համար:

1948 թ. սկզբներին համոզվելով, որ առանց ԽՍՀՄ կառավարության և անձամբ ի. Ստալինի միջամտության հնարավոր չէ լուծել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Հայ Եկեղեցու կարգավիճակի որոշումը, Թուրքիայի նկատմամբ հայ ժողովրդի պահանջների արդարացի լուծումը և դրանում կաթողիկոսի կողմից միջազգային կազմակերպություններին դիմելու հնարավորությունը ստանալը, կամ Էջմիածնի ծանր մյուսական վիճակի քարելավումը, Գևորգ Զ Կաթողիկոսը ապրիլին երկու ամսակ է ուղարկում Մոսկվա՝ անձամբ Ստալինին և ԽՍՀՄ Նախարարների խորհուրդ¹:

Ստալինին հղած մամակում կաթողիկոսը խնդրում է նրա համաձայնությունը Ազգային եկեղեցական ժողով հրավիրելու և այնտեղ Հայ Եկեղեցու Սահմանադրությունը հաստատելու վերաբերյալ: Հայտնելով, որ վերամշակված Սահմանադրությունը կընդարձակեր և կուժեղացներ Ամենայն Հայոց Կաթողիկոսի իրավասությունները, մա շեշտում է, որ միակնունդ ջնմարկման և ժողովում հաստատման պահին հաշվի կառնվեն խորհրդային կառավարության բոլոր ցուցումները և ցանկությունները, ուստի խիստ ցանկալի է, որ միակնունդ անհապաղ ուղարկվի տեղեր՝ համաժողովրդական ջնմարկման համար:

1951 թ. վերջերին ստեղծված իրավիճակն ինչպես Ս. Էջմիածնի Կաթողիկոսաբանում, այնպես էլ Հայ Եկեղեցու արտասահմանյան թեմերում պահանջում էր պետական մարմինների լուրջ միջամտություն: Մտահոգված այդ իրավիճակով, ՀԵԳԽ Միապալատ Հ. Գրիգորյանը ղեկավարների 1-ին հատուկ զեկուցագրով դիմում է ՀԿԽԿ Կենտկոմի առաջին քարտուղար Գ. Հարությունյանին և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի միապալատ Ս. Կարապետյանին²:

¹ ՀՀ ՀՔԿԳ ԿՊԱ, ֆ.1, ց. 32, գ. 97, թ. 13:

² ՀՀ ՀՔԿԳ ԿՊԱ, ֆ.1, ց. 31, գ. 69, թ. 151-163:

Համաձայն այդ գնդուցազրի, «Հայ Եկեղեցու վիճակը արտասահմանում շատ երբերում է: Չկա ոչ մի փաստաթուղթ, որում հստակ կերպով սահմանված լինեին պատրիարքությունների և Հայ Եկեղեցու արտասահմանյան թեմերի կրոնական և իրավաբան փնտռվածքները և դրանց փոխհարաբերությունները Էջմիածնի հետ: Տեղում գործող բոլոր կանոնադրություններն ու համապատասխան փաստաթղթերը մշակվել են տարբեր ժամանակներում ու հաստատվել տեղական իշխանությունները, որոնք են տարբեր ժամանակներում կազմակերպված ազդեցության մեջ, որոնք են կողմից՝ այս կամ այն քաղաքական կազմակերպության ազդեցության մեջ մասամբ արդեն կորցրել են իրենց իրավաբանական ուժը: Այսպես, օրինակ՝ առ այսօր այս կարգի հիմնական փաստաթուղթն, այսպես կոչված, «Հայերի Ազգային Սահմանադրություն» է, որը 1863 թ. գործածվել է Օսմանյան կայսրության ողջ տարածքում (ներառյալ Արաբական Արևելքի բոլոր երկրները, Երուսաղեմն ու Եգիպտոսը): Հետագայում այս փաստաթուղթը քննվել է 1923 թ. Լոզանի խաղաղության կոնֆերանսում և ընդունվել թուրքական կառավարության և Լոզանի խաղաղության համաձայնագրով, իբրև Թուրքիայի տարածքում հայերի իրավական վիճակը որոշող փաստաթուղթ: Բնական է, որ այս «Սահմանադրությունը» ոչ մի ուժ չի կարող ունենալ այժմյան Թուրքիայից դուրս: Սակայն այժմ դաշնակցականները ցանկանում են դարձյալ վերհանել այդ «Սահմանադրությունը» և տարածել այն ողջ հայկական սփյուռքի վրա, իբր այն պատճառաբանությամբ, թե այն մշակված է եղել թուրքահայերի համար, իսկ ներկայիս հայկական սփյուռքը բաղկացած է Թուրքիայից գաղթած հայերից. սրան ավելացրած նաև այն, որ այս փաստաթուղթն ընդունված է Լոզանի միջազգային կոնֆերանսի կողմից: Դաշնակցականները համատորեն կառույն են այս փաստաթղթից, որովհետև այն մշակվել է ցարական Ռուսաստանի (որի տարածքում էր գտնվում Էջմիածնի Կաթողիկոսությունը) և սուլթանական Թուրքիայի միջև գոյություն ունեցող հակամարտության պայմաններում, որի հետևանքով Կ. Պոլսի պատրիարքությանը, այդ Սահմանադրության համաձայն, լիակատար ինքնուրույնություն է տրվում, և ոչ մի բառով հիշատակված չէր պատրիարքության նկատմամբ Էջմիածնի իրավունքների մասին: Այժմ, ցանկանալով «Սահմանադրությունը» տարածել ողջ սփյուռքահայության վրա, դաշնակցականները ջանում են լիակատար ինքնուրույնություն ձեռք բերել արտասահմանյան Հայ Եկեղեցու նկատմամբ: Վերջապես՝ Բաղդադում լույս տեսնող դաշնակցական թերթերից մեկը հանդես եկավ «Սահմանադրության» հիման վրա մոր՝ «սփյուռքահայության պատրիարքություն» ստեղծելու ընդարձակ ծրագրով, որն, Էջմիածնից կատարյալ անկախության մեջ գտնվելով, պետք է դեկավարի Հայոց Եկեղեցու բոլոր արտասահմանյան գործերը:

Երուսաղեմի պատրիարքության կանոնադրության համաձայն, որը մշակվել է Պաղեստինում անգլիական տիրապետության ժամանակաշրջանում, պատրիարքի ընտրությունը հաստատվում է ոչ թե Ամենայն Հայոց Կաթողիկոսի, այլ անգլիական կառավարության կողմից: Եկեղեցական կանոններից հակասող համանման դրույթներ են պարունակում նաև այլ թեմերի կանոնադրությունները:

Հաշվի առնելով այս հանգամանքը, 1945 թ. Ազգային եկեղեցական ժողովը որոշեց կաթողիկոսին հանձնարարել Հայ եկեղեցու նոր և միացյալ Սահմանադրության մշակումը, որը պարտադիր պետք է լինի բոլոր պատրիարքությունների և թեմերի համար³:

Առաջադրված հարցերն ուսումնասիրելու և ՀԿ/ԲԿ Կենտկոմի բյուրոյին առաջարկություններ ներկայացնելու համար ստեղծվում է հանձնաժողով՝ Կենտկոմի քարտուղար Զավեն Գրիգորյան, պետամվտանգության մասնաբաժնի Սեդրակ Կորյան և ՀԵԳԽ նախագահ Հրաչյա Գրիգորյան կազմով: 1952 թ. հունվարի 16-ին հանձնաժողովի զեկուցագիրը ներկայացվում է Կենտկոմի առաջին քարտուղար Գ. Հարությունյանին⁴:

Հանձնաժողովի այս առաջարկները քննարկվում են ՀԿ/ԲԿ Կենտկոմի բյուրոյի 1952 թ. փետրվարի 27-ի նիստում: Կենտկոմի որոշումը, որը կրում է «Հատուկ կարևորություն» մակագրությունը, դժբախտաբար ՀՀ պետարխիսիվներում չի պահպանվել, սակայն ՀԵԳԽ կողմից ՀԿ/ԲԿ Կենտկոմ ուղարկված, իսկ վեջինիս կողմից ՀամԿ/ԲԿ Կենտկոմ ներկայացված որոշ զեկուցագրեր տալիս են այդ որոշման մոտավոր բովանդակությունը:

ՀԿ/ԲԿ Կենտկոմի առաջին քարտուղար Գ. Հարությունյանը ընդունված միջոցառումների մասին փետրվարի 28-ին տեղյակ է պահում ՀամԿ/ԲԿ Կենտկոմի քարտուղար Գ. Մալեմկովին՝ դրանց իրականացման թույլատրությունը ՀամԿ/ԲԿ Կենտկոմից ստանալու համար⁵: Միջոցառումների թվում նշվում են 1953 թ. զարմանք մյուսողորհմություն կատարելը, 1948 թ. կաթողիկոսի մշակած Հայ եկեղեցու Սահմանադրությունը կառավարության կողմից հաստատելը ու այն եպիսկոպոսական ժողովում ընդունելը և Էջմիածնի միաբանությունը նոր անդամներով համալրելը:

Չնայած ՀԿ/ԲԿ Կենտկոմի որոշմանը և Մոսկվա ուղարկված վերոհիշյալ միջոցառությանը, միութենական իշխանությունները չէին շտապում որևիցե որոշում ընդունել:

1953 թ. երկրում տեղի ունեցած արմատական փոփոխություններ, մասնացավ Ստալինը, իսկ տարեվերջին փոխվեց նաև Հայաստանի կոմկուսի ղեկավարությունը:

Սակայն ընդհանուր առմամբ Ս. Էջմիածնի գործունեության հետ կապված հիմնական հարցերը մնում էին չլուծված: Վերոհիշյալ մկատառումներից ելնելով, ՀԵԳԽ նախագահ Հ. Գրիգորյանը Հայկոմկուսի ղեկավարության փոփոխությունից մի քանի օր անց, 1953 թ. դեկտեմբերի 11-ին, «Հայ եկեղեցու մասին» ծավալում զեկուցագիր է ներկայացնում ՀԿԿ Կենտկոմի մոլորմտի առաջին քարտուղար Ս.

³ ՀՀ ՀՔԿԳ ԿՊԱ, ֆ. 1, ց. 31, գ. 69, թ. 154-155:

⁴ Նույն տեղում, ց. 32, գ. 97, թ. 68-77:

⁵ Նույն տեղում, գ. 50, թ. 25-29:

Թովմասյանի⁶։ Այն իր բովանդակությամբ հիմնականում կրկնում էր 1951 թ. դեկտեմբերի 1-ի զեկուցագրի հիմնախնդիրները՝ միայն հավելելով 1952-1953 թթ. տեղի ունեցած իրադարձությունները և ձեռնարկած միջոցառումները։

Էջմիածնի Կաթողիկոսության գործունեության բարելավման, արտերկրում Հայ Եկեղեցու գործերին նրա միջամտության ակտիվացման և արտասահմանի հայ զաղթավայրերում Էջմիածնի հեղինակության առավել քարձրացման համար Հ. Գրիգորյանը խիստ անհրաժեշտ էր համարում հետևյալ միջոցառումների իրագործումը.

«1. Թույլ տալ 1954 թվականին Մյուռոնգորհինք կատարել։ Մյուռոնգորհինքի հրավիրել թուրք եպիսկոպոսներին և ամեն թեմից երկուական աշխարհիկ մերկայացուցիչ։ Միաժամանակ եպիսկոպոսաց ժողով հրավիրել Հայ Եկեղեցու նոր Սահմանադրության նախագիծը քննարկելու համար, ինչպես նաև քննարկել Հայ Եկեղեցու արտասահմանյան կենտրոնների գործունեության ակտիվացման հետ կապված հարցերը»⁷

Հ. Գրիգորյանի զեկուցագրի հիման վրա 1954 թ. սկզբին կազմվում է ՀԿԿ կենտկոմի բյուրոյի և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի որոշման և խորհրդային նոր դեկլարության՝ ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահ Գ. Մալենկովի և ԽՄԿԿ կենտկոմի քարտուղար Ն. Խրուշչովի անուշով ուղարկվելիք գրության նախագծեր։ Սակայն մարտ ամսին Կաթողիկոսի առողջության կտրուկ վատացման պատճառով դրանք մնացին իբրև նախագիծ։

Հետագա տարիներին պետական իշխանության մարմիններն այլևս չանդրադարձան Սահմանադրության ընդունման հարցին՝ համարելով այն «գուտ եկեղեցական խնդիր»։

⁶ ՀՀ ԼՊ ԿՊԱ, ֆ. 823, գ. 69, թ. 1-33:

⁷ Նույն տեղում, թ. 32:

1700-ԱՄՅԱԿ



1700-ԱՄՅԱԿԻՆ ԵՎ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 600- ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բովանդակ Քայ ժողովուրդը, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի տոնախմբում է քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու 1700-ամյակը: Հայ սփյուռքի ամբաժամ մասը կազմող ուղիմահայ թեմը ուրախությամբ և հպարտությամբ տոնում է ևս մեկ ուրիշ «շահանվոր իրադարձություն» առաջնորդական թեմի հաստատման 600-ամյակը:



Տ. Տիրայր արքեպս. Մարտիրոսյանը և պրն Իոն Իլիեսկուն «Թորոչեմ» պալատում

Թեմակալ առաջնորդ Տ. Տիրայր արքեպս. Մարտիրոսյանի հրահանգով, 2001 թ. ուղիմահայ մշակութային կյանքի բոլոր համդիսությունները մվիրվեցին այս երկու պանծալի հոբելյաններին:

կարդաց Ամենապատիվ Թեոկտիստ Պատրիարքի, ինչպես նաև Մոլդովայի առաջնորդ Դանիել միտրոպոլիտի ողջույնի խոսքերը հանդիսության առիթով: Պատարագի երաժշտական մասը կատարեց Բուխարեստի հայոց առաջնորդարանի երգչախումբը: Հավարտ Սուրբ Պատարագի վաճառի ուխտավորների սրահում ումիմացի և հայ հավատացյալներին մատուցվեց մատաղ և հրավիրվեցին սիրո սեղանին մասնակից դառնալու: Պաշտոնական հյուրերին իրենց հատկացված շենքի առանձին սրահում տրվեց պաշտոնական ճաշկերույթ: Նույն օրը, երեկոյան ժամը 6-ին, հայոց առաջնորդական ճախկին նստավայր Զամքայի հռչակավոր պատմական վաճառքի բակում տեղի ունեցավ հոգևոր համերգ: Ելույթներ ունեցան Բուխարեստի հայոց առաջնորդարանի, Սուչավա քաղաքի օրթոդոքս եկեղեցու քահանա հայրերի և ումիմական ժողովրդական երգերի երգչախմբերը:

Երկուշաբթի՝ Օր Մեռելոց. Բոլոր հայ ուխտավորների ներկայությամբ հոգեհամզստյան պաշտոն կատարվեց, ուր առաջնորդ Տիրայր Սրբազանը կրկին հիշատակեց ումիմահայ թեմի ճախկին 40 առաջնորդների անունները:

1700 և 600-ամյակներին նվիրված հանդիսությունները Սուչավայից տեղափոխվեցին Բուխարեստ: Սեպտեմբեր 4-ին Քոթորչեն ճախագահական պալատի համերգային սրահում տեղի ունեցավ հոգևոր երաժշտության համերգ՝ երկրի ճախագահ պարոն Իոն Իլիեսկուի հովանավորությամբ և ներկայությամբ: Համերգին հրավիրված էին քույր եկեղեցիների և հայ համայնքի, Հոռմի Պապի ներկայացուցիչը, մշակույթի գործիչներ: Պաշտոնական օթյակում պարոն ճախագահը հատուկ հարգանք և պատիվ ընծայեց՝ իր կողքին տեղ տալով ՀՀ դեսպան տիկին Կարինե Ղազիմյանին և ումիմահայ թեմի առաջնորդ Տիրայր Սրբազանին: Բեմ հրավիրվեց Ռումինիայի ճախագահը, որն իր սրտի խոսքն ասաց այս գույք տոների առիթով: Պարոն Իոն Իլիեսկուն մեծ հաճույքով և խոր իմացությամբ խոսեց հայ ժողովրդի մասին՝ վեր հանելով նրա մշակութային և հոգևոր արժեքները, ինչպես նաև դրանց թողած ազդեցությունը քաղաքակիրթ աշխարհի և մասնավորապես ումիմական մշակույթի վրա: Ելույթներ ունեցան նաև առաջնորդ Տիրայր Սրբազանը և տիկին Կարինե Ղազիմյանը: Համերգին իրենց մասնակցությունը բերեցին հայոց առաջնորդարանի երգչախումբը, որին հաջորդեցին Կաթողիկե եկեղեցու և Ռումինիայի Պատրիարքարանի երգչախմբերի ելույթները: Վերջինիս ղեկավարը՝ Դրեզդին քահանան, որ վաղեմի բարեկամն է Տիրայր Սրբազանի, նրա պատվին երգեց «Օստ տարիներ»՝ ի գնահատումն ումիմահայոց թեմի առաջնորդի անմնացորդ և նվիրյալ ծառայության:

Համերգից հետո պալատի սրահում տեղի ունեցավ հատուկ ընդունելություն:

Հիշատակության արժանի փաստ է նաև այն, որ այս գույք տոների առթիվ Տիրայր Սրբազանի մտածումով և միջնորդությամբ Ռումինիայում տպագրվեցին երկու մամուլաթարթեր՝ նվիրված Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու 1700-ամյակին և Սուչավայի հայկական եպիսկոպոսության հիմնադրման 600-ամյակին:

Ռումինիայում կան հայկական եկեղեցիներ և հայկական անուններով փողոցներ: Պետության որոշմամբ հայկական անուններ կրող փողոցների թիվը պետք է ավելանա: Բուխարեստի հայկական եկեղեցու մերձակա փողոցներից մեկը կոչվում է «Վազգեն Ա», իսկ Սուչավայում մեկ ուրիշ փողոց պետք է կոչվի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ»:

Հանդիսությունները Բուխարեստում շարունակվելու են միմչև այս տարվա վերջը:

ՄԻՐԱՆ ՆԵՎՐՈՒԶՅԱՆ

Բուխարեստի հայ մշակույթի տան
պատասխանատու

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԹՐԻՍՏՈՆՅԱ ԱՐԵՎԵԼՔԸ»

ԳԻՏԱԺՈՂՈՎ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

(27-30 հունիս 2001 թ.)

Սկսած 1998 թ., աշխարհի գրեթե բոլոր ծագերում բազմազան գիտաժողովներ են տեղի ունենում Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյա հոբելյանի կապակցությամբ: Այդ գիտաժողովները ուղեկցվում են նորամուտի ցուցահանդեսների բացումով, համերգներով, մշակութային զամազամ միջոցառումներով, որոնք ավելի շոշափելի և ընկալելի են դարձնում Հայոց մշակույթը օտար ժողովուրդների համար, հնարավորություն տալիս հայկական զաղութներին վերստին համախմբվել Եկեղեցու և ազգային պետականության շուրջ, վերջապես՝ հնարավորություն են ընձեռում հայագետներին և պատմաբաններին գիտական նոր փաստերով իմաստավորել Եկեղեցու դերը մեր ժողովրդի կյանքում: Այս տեսանկյունից արդյունավետ էր նաև Սանկտ Պետերբուրգում տեղի ունեցած գիտաժողովը, որը կազմակերպել էր քաղաքի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետը՝ Հայոց Եկեղեցու Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի, Սանկտ Պետերբուրգի Հայոց հյուպատոսարանի, Էրմիտաժի և «Ռուսաստանի հայերի միություն» հասարակական կազմակերպության աջակցությամբ:

Գիտաժողովին մասնակցում էին Բոլոնիայի, Իտալիայի, Երևանի, Ժնևի, Կլիվլենդի, Հարվարդի, Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Փարիզի գիտական կենտրոնները և համալսարանները ներկայացնող շուրջ 30 գիտնական: Տեղի ունեցած երկու լիազումար և չորս բաժանմունքային միստեր, որոնք ղեկավարում էին ՌԴ ԳԱ ակադ. Մ. Բ. Պիոտրովսկին, Մ. Ն. Բոգոլյուբովը, ՀՀ ԳԱԱ ակադ. Հ. Մ. Բարթիկյանը, ՌԴ ԳԱ թղթակից անդամ Ի. Մ. Ստեքլին-Կամենսկին և պրոֆ. Պարույր Մուրադյանը: Գիտաժողովի կազմակերպման ողջ ծրագիրը հետևողականորեն մշակել և իրականացնում էր Սանկտ Պետերբուրգի համալսարանի Արևելագիտության ֆակուլտետի «Հայագիտություն» հատուկ դասընթացի ղեկավար Արսեն Շահինյանը:

Բացման խոսքում Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս վարդապետ Ներսիսյանը ընթերցեց Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ-ի՝ գիտաժողովի կազմակերպիչներին և մասնակիցներին ուղղված խոսքը, որը մեկ օր առաջ հրատարակվել էր Սանկտ Պետերբուրգի հայկական զաղութի «Հավատամք» թերթում:

Բացման և փակման լիազումար միստերում ելույթ ունեցան ՍՊԲ-ի քաղաքային և մարզային իշխանության, Ռուսաստանում Հայաստանի դեսպանության և ՍՊԲ-ի հյուպատոսության պաշտոնյաներ, ՍՊԲ-ի համալսարանի ռեկտորատի և Ռուսաստանի հայկական համայնքի ներկայացուցիչներ, որոնք բարձր գնահատեցին գիտաժողովը՝ հույս հայտնելով, որ դրանով ավելի կսերտանան Հայաստանի և Ռու-

սաստանդի գիտական կապերը, և Ռայագիտությունը ապագայում կրկին իր տեղը կգտավի արևելագիտության ֆակուլտետի ամբիոնների շարքում:

Գիտաժողովի նյութը Հայոց Եկեղեցու 1700-ամյա պատմությունն էր՝ գիտական և մշակութային տարբեր դրսևորումներով: Հայոց Եկեղեցու պատմության ամենավաղ շրջանի ուսումնասիրության հարցերին էին իրենց զեկուցումները մվիրել Կ. Յուզբաշյանը, Պ. Մուրադյանը, Հր. Բարթիկյանը: Կ. Յուզբաշյանը «Հայոց Եկեղեցու կայացման Ռիմնական փուլերը» աշխատանքում անդրադարձավ Հայոց ազգացույցին Եկեղեցու կայացման Ռիմն շրջանների բնութագրմանը՝ կարևորելով հետևյալ կետերը. ա) Աթգարի մասին պատմությամբ Հայոց Եկեղեցին դրել է առաքելական ավանդության սկիզբը, բ) Անդրադարձելով Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն Ռոչակելու տարեթվին, հեղինակն անդրադարձնում է գիտության մեջ շոշափված բոլոր թվականներին և հավանական համարում Հայաստանում քրիստոնեության տարածումը միայն Միլանի էրիկտից հետո*, գ) Ընդգծեց այբուբենի ստեղծումը իբրև Հայոց Եկեղեցու կայացման կարևորագույն փուլերից մեկը, դ) Հայոց Եկեղեցու ինքնության հաստատման կարևոր փուլ համարեց 450/51 թթ. Վարդանան պատերազմը, և ե) Հայոց Եկեղեցու կայացման վերջնական փորձաքար դիտեց Դվինի երկրորդ ժողովը (555 թ.):

Պ. Մուրադյանը «Քրիստոնեության առաքելական քարոզչության առասպելը կովկասում» զեկուցման մեջ անդրադարձավ Հայաստանում, Վրաստանում և Ադվանքում առաքելական քարոզչության տարբեր ավանդույթներին, դրանց արձագանքները փորձեց գտնել ազգային մտածողության, բանահյուսության և ծեսի տարբեր դրսևորումներում:

Հր. Բարթիկյանը «Քրիստոնեությունը Գ դարի Բ կեսի Փոքր Հայքում» զեկուցման մեջ անդրադարձավ Դիոկղետիանոս կայսեր կողմից մահվան դատապարտված վաղ քրիստոնեական սրբեր Եվստրատիոսի, Օգեստիոսի, Եվգենիոսի, Օրեստի և Մարդարիոսի հուճարեց վարքին, որը թարգմանվել է Ե դարում հայերեն: Հեղինակն անդրադարձավ այդ վկայաբանության ստեղծման աշխարհագրական միջավայրին և ցույց տվեց, որ արդեն Գ դարում Փոքր Հայքը քրիստոնեությունը ընդունած շրջան է եղել:

Հ. Գրիգոր Լուրինեմ «Ա. Գրիգոր Լուսավորչի տեսիլքը. երկնային խորանի էջքը Նոր Սիոնի վրա» զեկուցման մեջ ներկայացրեց Ազաթանգեղոսի պատմությունը իբրև կարևոր սկզբնաղբյուր և իրեն հետաքրքրող տեսիլքի թվանդանությունը համեմատեց Հովհաննես Ավետարանչի Հայտնության համապատասխան հատվածի հետ: Շողակաթի երևումը ռուս աստվածաբանը բացատրեց էջմիածնի վրա աստվածային խորանի փայլարձակումով, որը ներառված է Աստվածամոր վերափոխման տոնի մեջ: Ըստ հեղինակի, Եկեղեցական ավանդության նույն հատկանիշներն ունի նաև Երուսաղեմի Ա. Սոփիայի տաճարը, որը էջմիածնի նման օծվել է Աստվա-

* Մի տեսություն, որը Ռիմնավորված կերպով անվերապահորեն մերժվում է Հայաստանի գրեթե բոլոր հեղինակավոր Ռայագետների կողմից [«Էջմիածին» ամսաթյի զլխ. խմբ. Վ. Դևրիկյան]:

ծածմի վերափոխան անսօրյակին: Քննարկելով քրիստոնեական աշխարհի նմանատիպ մի քանի օրինակներ, Հ. Գ. Լուրինն փորձեց թվագրել Ջ դարի երուսաղեմյան ծիսական տարվա արարողակարգի մի քանի առանձնահատկություններ:

Հիմնվելով Փափստոսի Պատմության հաղորդած տեղեկությունների վրա, իտալացի հետազոտող Մարկո Բիազը ամդրադարձավ Մասկութաց աշխարհում Վրթաբանսի որդի Գրիգորիսի միսիոներական գործունեությանը: Հեղինակը փորձեց մոտավոր մեկնաբանել պատմիչի տեղեկությունները Հյուսիսային Կովկասում քրիստոնեության տարածման խնդրի շուրջ:

Ամերիկացի հետազոտող Ջեյմս Ռասսելը հայ հին և նոր գրականություններից օրինակներ բերելով, ցույց տվեց խաչի սիմվոլի բացառիկ նշանակությունը Պետրոս Դուրյանի «Մանուկն առ խաչ» բանաստեղծության մեջ:

ՀՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի «Քրիստոնյա Արևելք» բաժնի աշխատակից Պ. Չոբանյանը «Երուսաղեմի հայկական վանքերի տեղադրությունը ըստ Անաստասի Ակարագրության (Ջ դար)» զեկուցման ընթացքում փորձեց ապացուցել, որ այս սկզբնաղբյուրը գրված է 570-ական թթ.: Սկզբնաղբյուրի մատնացուցած վանքերից շատերի հնագիտական մնացորդները, ըստ հետազոտողի, հայտնաբերվել են ժժ դարից հետո: Ըստ հետազոտողի, այսօր ևս այս ասպարեզում սպասելի են մոր հայտնագործություններ:

«Ջ-Է դարերի հայկական քաղկեդոնական համայնքի» պատմության ուսումնասիրությանն էր նվիրել իր զեկուցումը մոսկվացի հետազոտող Վ. Արուստյունով-Ֆիդանյանը: Նա հայ-թյուրքադական եկեղեցաքաղաքական փոխհարաբերությունների ֆոնի վրա ներկայացրեց քաղկեդոնական հայերի հույն մատնագրության մեջ թողած հետքերը՝ ի մասնավորի անդրադարձավ «Narratio de rebus Armeniacis» երկի պարունակած վկայություններին:

Կլոդ Մութաֆյանը «Կիլիկիայի տիրակալները Հռոմի, Բյուզանդիայի և Իսլամի միջև» զեկուցման մեջ անդրադարձավ Ռուբինյանների վարած արտաքին քաղաքականությանը՝ շեշտը դնելով Մլեն Իշխանի ընտրած մոր քաղաքական կուրսի դեռևս չլուսաբանված մոտեցումների վրա:

ՌԴ ԳԱ Մոսկվայի ազգագրության և մարդաբանության ինստիտուտի գիտաշխատող Ալլա Տեր-Սարկիսյանը զեկուցեց «Քրիստոնեության դերը հայ ժողովրդի վաղ միջնադարյան մշակույթի զարգացման գործում» թեմայով՝ շեշտը դնելով Եկեղեցու կատարած անփոխարինելի դերին մեր ժողովրդի հոգևոր-եկեղեցական և քաղաքական կյանքում:

Բոլոնիայի համալսարանի պրոֆեսոր Գաբրիելյա Ուլուֆոջյանը մեկնաբանեց վերջերս իր հրատարակած Երեմիա Ջյոմուրճյանի քարտեզի պարունակած նյութերը Գանձասարի կաթողիկոսության վերաբերյալ:

ՍՊԲ-ի համալսարանի պրոֆեսոր Ա. Գադյուն ներկայացրեց «Հայերը և Հյուսիսային Կովկասի ժողովուրդները մ.թ. Ա հազարամյակի երկրորդ կեսին» զեկուցումը: Հեղինակը ընդգծեց քրիստոնեության հաստատման դերը Այսրկովկասում և Անդրկովկասում, ցույց տվեց Հյուսիսային Կովկասում Ե-Թ դարերում ձևավորված

պետական միավորների հետ Հայաստանի փոխհարաբերությունների հիմնական ուղղությունները և առանձնացրեց Հայոց Եկեղեցու բացառիկ դերը այդ խնդրում:

Ուրախ համալսարանի պրոֆ. Վ. Ստեպանենկոն «Հայերը Բյուզանդիայում ԺԺԱ դդ.» զեկուցման մեջ անդրադարձավ վերջին տարիներին կնքագիտության ընդգրկմանը և շրջանառության մեջ մտած հայկական Գործերի հրատարակություններին և բարձր գնահատեց դրանց նշանակությունը Բյուզանդիայի պատմության մեջ հայկական տարրի ուսումնասիրության ընդգրկմանը:

ՍՊԲ-ի Պետրոս Մեծի անվան մարդաբանության և ազգագրության թանգարանի՝ Կոնստանտնուպոլիսի գիտաշխատող Ս. Չերմենովի զեկուցումը անվանված էր. «ԺԴ դարի եթովպական Ս. Եվստակիոսի ճանապարհորդությունը Հայաստան և Հովհաննես արքեպիսկոպոս-վարդապետի ուղեգրությունը Եթովպիա 1679 թ.» Եթովպ-հայկական եկեղեցական փոխհարաբերությունների լուսի անթոք: Հեղինակը կարևորեց այս ասպարեզում եղած հետազոտությունները և ցույց տվեց, որ հայ-եթովպական փոխհարաբերությունները դեռևս կարիք ունեն մանրակրկիտ ուսումնասիրությունների:

ՍՊԲ-ի համալսարանի ասպիրանտ Վ. Կրեչյանն իր զեկուցումը նվիրել էր «Կ. Պոլսի հայկական պատրիարքության դիվանագիտական միսիաները Սանկտ Պետերբուրգ և Եվրոպա. Բեռլինի կոնգրեսի նախաշեմին (1878 թ.)» հարցին: Վավերագրերի հետազոտության հիմքի վրա հեղինակն անդրադարձավ հարցի ուսումնասիրողների կողմից դեռևս լուծում չստացած մի շարք հարցադրումների և փորձեց տալ դրանց պատասխանները:

ՍՊԲ-ի համալսարանի դասախոս Մ. Մեջրումյանը «հայկական համակարգը հայերենում» զեկուցման մեջ անդրադարձավ արդի հայերենում բայի ձևաբանական դասակարգման քերականական խնդիրներին:

Հնագիտական մի կրճիմի լուծման տարբեր ճանապարհներ ու խնդիրներ էին իրենց առջև դրել Ա. Հակոբյանը և Հ. Սիմոնյանը: Նրանց զեկուցումները նվիրված էին Արցախի Ծիծեռնավանք հնավայրի ուսումնասիրության և թվագրման խնդիրներին: Եթե առաջինը, հենվելով այդ հուշարձանում հայտնաբերված մի վիմագիր արձանագրության վրա, հուշարձանը թվագրում էր Զ դարով, ապա երկրորդը, հետևելով հայտնաբերված հնագիտական հարուստ նյութին, դամբարանը վերագրում էր Գ դարում մարտիրոսացած մի արքի:

Ժնևի համալսարանի պրոֆ. Վ. Կալցուարին «նրա սահմաններն իբրև Ազատագրողի» «Ժամանակագրության» բանալի» զեկուցման տեղ, համեմատական բանասիրության հենքի վրա, փորձեց բացատրել Ս. Գրիգորի վարքի մի շարք մոտեցումներ:

Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի գիտաշխատող Գ. Տեր-Վարդանյանի զեկուցումն անվանված էր «Եվրոպական ժամանակագրությունների թարգմանությունները հայկական պատմագրության համակարգում (ԺԳ-ԺԴ դդ.)»: Հեղինակն անդրադարձավ Եվրոպայի պատմության միջնադարյան հայկական թարգմանություններին և արժևորեց դրանց դերը պատմագրության մեջ:

ՀՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող Ա. Բոգոյանի զեկուցումն ամփանված էր «ԺԴ տիտղոսների բյուզանդական սինտագմայի հայերեն թարգմանությունը և նրա կիրառման միջավայրը»: Հեղինակը ցույց տվեց, որ ԺԱ-ԺԳ դարերում հայերեն է թարգմանվել բյուզանդական կանոնագրքի հատուկ մի խմբագրություն, որը հավանաբար շրջանառության մեջ է եղել քաղկեդոնական հայերի միջավայրում:

ՌԴ ԳԱ Գրադարանի Ասիայի և Աֆրիկայի գրականության բաժնի աշխատակից Ն. Գորելովն իր զեկուցումն ամփանել էր «Հայագի Հայթոնի «Պարտեզ Արևելքի պատմության» երկը և ԺԴ դարի եվրոպական մատենագրությունը», ուր հեղինակը ներկայացրեց սեփական ուսման թարգմանությունը և որոշ ծանոթագրություններ:

Պիտի միայն ցավով նշել, որ ծրագրում հիշատակված մի շարք զեկուցումներ տեղի չունեցան:

Մշակութային ձեռնարկներով հարուստ այս գիտաժողովը տևեց երեք օր, որի ընթացքում Սանկտ-Պետերբուրգում լայնորեն պրոպագանդվում էր հայկական մշակույթը: Այդ ընթացքում մասնակիցները ներկա եղան Ռուսաստանի ազգային գրադարանի Կորֆի դահլիճում հայկական գրքի զանգեղի ցուցահանդեսի բացմանը (հունիսի 27, պատասխանատու՝ Վ. Կրեկյան), ՍՊԻ-ի համալսարանի արարողությունների դահլիճում քաղաքի հայագի մկարիչների ցուցահանդեսի բացմանը (հունիսի 28, պատասխանատուներ՝ Խ. Հարությունյան և Ս. Լանինա), Էրմիտաժի թատրոնում (հունիսի 28) և ՍՊԻ-ի Ակադեմիական ֆիլմաթեոմիայի Դ. Օոստակովիչի ամվան մեծ դահլիճում տեղի ունեցած հայկական արվեստին և երաժշտությանը նվիրված համերգներ (հունիսի 29), այցելեցին Պետերգորֆ (հունիսի 30):

Գիտաժողովի մասնակիցները այցելեցին վերջին տարիներին վերանորոգված քաղաքի հայկական սրբավայրերը. Ս. Կատարինե և Վասիլյան կղզու զերեզմանատան եկեղեցիներ, մասնակցեցին Տ. Եզրաս վարդապետ Ներսիսյանի գլխավորությամբ տեղի ունեցած ժամերգությանը և Պատարագի արարողությանը քաղաքի գլխավոր հայկական եկեղեցում, թեմի առաջնորդի ուղեկցությամբ այցելեցին վերանորոգված հայկական թաղամասի հնագույն շենքերից մեկը, որն արդեն ծառայում է իբրև կիրակնօրյա դպրոց, շփումներ ունեցան նաև քաղաքի հայկական զաղութի հետ, որի ներկայացուցիչներից շատերը իրենց մասնակցությունը բերեցին նաև գիտաժողովի նիստերին: Գիտաժողովի զեկուցողներին ուրախություն պատճառեց հատկապես այն հանգամանքը, որ ՍՊԻ-ում գործում է համախումբ հայկական զաղութ, որը նպատակաւազ կերպով լուծում է իր առջև դրված ազգային-եկեղեցական և մշակութային կարևոր խնդիրներ:

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

ՀՈՐԵԼՅԱՆ

ՇԱԽԵ ԱՐՔԵՂԻՍԿՈՂՈՍ ԱՃԵՄՅԱՆ



Հայ Առաքելական Եկեղեցու և հայ ժողովրդի պարմությունները անքակտելիորեն միանյութված են մեկմեկու: Երկար դարեր շարունակ Հայ Եկեղեցին եղել է մեր ժողովրդի միակ կռվանը՝ նրա հավատավոր հայրերն են սրբեղծել ու պահպանել հայ գիրն ու դպրությունը, հայ մշակույթը և գիտությունը: Նույն Ներսես Շնորհալու, Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Մազիսարտուսի և մեր մյուս նշանավոր հոգևորականների միջոցով քաղաքակիրթ աշխարհը ճանաչել, գնահատել և ընդունել է հայ ժողովրդին:

Նախընթաց բոլոր դարերում եղան մեծ հոգևորականներ, որոնք նշանակալից դեր խաղացին մեր ժողովրդի կյանքում: Նրանցից յուրաքանչյուրը յուրովի գրեց իր անունը պար-

մության քարե պախտակին՝ Ներսես Ե Աշտարակեցի, Խրիմյան Հայրիկ, Մաղաքիա Պարթիարք Օրմանյան, Եղիշե Պարթիարք Դուրյան, Գարեգին Ա Հովսեփյանց, Գևորգ Զ Չորեքյան, Վազգեն Ա Պալճյան: Հոգևորականների փայլուն այս փառանքում իր առանձնահատուկ տեղն ունի Շախե արքեպիսկոպոս Աճեմյանը:

Գերաշնորհ Շախե արքեպիսկոպոս Աճեմյանը (ավագանի անունով՝ Հովհաննես) ծնվել է Սիրիայի Հալեպ քաղաքում 1926 թվականի հուլիսի 24-ին: Նախնական կրթությունը ստացել է Հալեպի Հայկազյան և Մխիթարյան վարժարաններում, ապա հետագա կրթությունը շարունակել ֆրանսիական «Մարիամական եղբայրների» քոլեջում, ուր և ստացել է բակալավրի աստիճան: Դեռևս այդ փարիսերին նա աչքի է ընկնում իր ընդունակություններով, ուշիմությամբ և աշխատասիրությամբ: Հայ մշակույթի, դպրության և մայրենի լեզվի նկատմամբ բուռն հետաքրքրությամբ և սիրով համակված պարանի Հովհաննեսը որոշում է ուսումը շարունակել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության դպրեվանքում: 1947-ին ավարտում է ուսումը և ձեռնադրվում կուսակրոն քահանա՝ վերակոչվելով Շախե աբեղա: Գարեգին Ա Հովսեփյանց Հայրապետի խորհրդով նա մեկնում է Բրյուսել՝ ուսումը շարունակելու ժամա-

նակի լավագույն համալսարաններից մեկում: Սովորում և ավարտում է փիլիսոփայության և գրականության ֆակուլտետը՝ ստանալով մագիստրոսի աստիճան: 1951 թվականին ներկայացնում է դոկտորական աշխատանքը և արժանանում դոկտորական աստիճանի: Շահե արեղայի ներկայացրած և պաշտպանած աշխատությունն էր՝ «Ղափ Սևյադթի մեկնությունը Արիստոտելի ստորոգյալությանը»՝ Արիստոտելի գործերի հայերեն թարգմանությունների և մեկնությունների մասին ընդարձակ առաջաբանով, ինչպես նաև բնագրի ֆրանսերեն թարգմանությամբ: Այդ նույն տարին վերադառնում է Անթիլիաս, և Քարեգին Հովսեփյանց Կաթողիկոսը նրան նշանակում է Կաթողիկոսարանի դիվանապետ, արտաքին և պետական հարաբերությունների պատասխանատու՝ նկատի առնելով երիտասարդ արեղայի բացառիկ իմացությունը տիրապետող տեղական երկու լեզուների՝ ֆրանսերենի և արաբերենի: 1952-ին նա ստանում է վարդապետական աստիճան:

Տարիներ շարունակ նա դասավանդել է Անթիլիասի դպրեվանքում, Բեյրութի Հովակիմյան-Մանուկյան վարժարանում և Փալանջյան ճեմարանում: Այս տարիներին է պատրաստել և հրատարակել «Արաբերեն լեզուի դասընթացը հայ վարժարաններում համար» ձեռնարկը և «Ջրիստոնեական» դասագիրքը:

1960-ին տեղափոխվում է Երուսաղեմ: Դժվարին և ծանր էին Երուսաղեմում պաշտոնավարելու նրա տարիները. անհրաժեշտ էր ազգային զգաստ կողմնորոշում և շրջահայաց քաղաքականություն: Այստեղ նա շուրջ տասնեինգ տարիներ ստանձնում է «Սիոն» ամսագրի խմբագրի պաշտոնը և այն վերածում գիտական հեղինակավոր պարբերականի: Մեծ թիվ են կազմում հայերեն, ֆրանսերեն, անգլերեն լեզուներով ամենապարբեր առիթներով զրկած նրա հոդվածները, զեկուցումները, ռոտնք հրատարակվել են հայ, նաև օտարալեզու պարբերականներում:

1965 թվականին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ձեռնադրվում է եպիսկոպոս՝ ձեռամբ արժանափառակ Ամենայն Հայոց Հայրապետ Վազգեն Ա-ի: Նկատի առնելով Շահե եպիսկոպոսի շնորհները, բազմաթիվ լեզուների անթերի իմացությունը, Վազգեն Վեհափառը 1975-ին նրան նշանակում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ներկայացուցիչ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդում: Այդ նույն տարիներին Շահե Սրբազանը վարում է Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի դիվանապետի, կուլվածող տեսչի և այլ պատասխանատու պաշտոններ, ծավալում հայրենամոլեր և կառուցողական լայն գործունեություն: 1982-ին հիմնադրում է Զիթենյաց լեռան Հայ Աստվածաշնչի կենտրոնը, ուր պատրաստվում և հրատարակվում են Աստվածաշնչի զանազան բնագրեր: Այստեղ է պատրաստվել և հրատարակվել Ա. Գրքի ամենամեծ ժողովրդականություն վայելող գրքի՝ Դավթի սաղմոսների գրաբար բնագիրը՝ արևմտահայերեն անթերի թարգմանությամբ և առաջաբան-ուսումնասիրությամբ: Սա համակարգչի վրա հավաքված և ձևավորված հայերեն առաջին գիրքն է՝ նրա իսկ տրեմաշան աշխատանքով ստեղծված հայ տառերով: Շահե արքեպիսկոպոս Աճեմյանի գիտական, աստվածաբանական մրաժոռության գլուխգործոցն է հանդիսանում 1992-ին Պարտուգալիայում հրատարակված «Յուցուկ Աստուածաշունչ Մար-

եանի ձեռագիրներուն» մեծարժեք կոթողային աշխատությունը՝ հիմնալի առաջաքան-ուսումնասիրությամբ:

Այս իրագործումների ճանապարհին եղել են բազմաթիվ խոչընդոտներ. որոնք նա միշտ հաղթահարել է համառ ու հերոսական ջանքերով և հայ հոգևորականի աննկուն հավաքով: Որպեսզի էլ որ գրնվել է Շահն Սրբազանը՝ սփյուռքում թե Մայր հայրենիքում, միշտ հավատարիմ է մնացել ռաուցչի և դաստիարակի իր աստվածային կոչումին:

Դժվարին փարիներին գալով Հայրենիք, նա ապրեց իր ժողովրդի փառապանքով և ուրախությամբ, իր ուսերին վերցրեց պատմագիտական և դավանաբանական գրականության հրապարակման ծանր բեռը:

Շահն արքեպիսկոպոս Աճնյանի հասարակական, գիտա-մանկավարժական գործունեության թագն ու պսակն է հանդիսանում Աստվածաբանության ֆակուլտետի ստեղծումը և հիմնադրումը, որը նրա դեգերումների և փքնաջան աշխատանքի արդյունքն է: Նախկին ասվեպական հանրապետություններում ԵՊՀ-ն առաջինն էր, որ Սրբազանի շնորհիվ ունեցավ այս ֆակուլտետը: Մայր բուհի 80-ամյա փարեգրության մեջ նորապսելը Աստվածաբանության ֆակուլտետն արձանագրեց բազմաթիվ հաջողություններ և արդեն իսկ կայացել է իր ճանաչումով:

Շահն արքեպիսկոպոսը մեր մեծ վարդապետների նման փքնում է ու ստեղծում և իր անշահախնդիր հայրենասիրությամբ, յուրօրինակ բարությամբ, ապրած փարիների իմաստությամբ կրթում և դաստիարակում սերունդներ: Նա իր նպաստն է քերում ոչ միայն համալսարանին, այլև Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանին և Սևանի Վազգենյան Դպրանոցին, ուր ուսանողները սիրով սպասում են նրա դասախոսություններին: Անուրանելի է նաև նրա մեծ վաստակը Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:


Գերաշնորհ Սրբազան Հայր. թող հրքեք չսպասվի Ձեր ումն ու եռանդը, թող միշտ բեղուն մնա Ձեր գրիչը: Ձեր 75-ամյա հոբելյանի առթիվ մաղթում ենք Ձեզ քաջառողջություն, երկար և բազմաբայուն կյանք՝ ի նպաստ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Մայր Հայրենիքի:

«Երանի, որ ունիցի գաաակ ի Սիւն»:

Խ. ՊԱԼՑԱՆ

Մ. ՍԱՆԹՈՒՐԶՅԱՆ

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ևս իր սրտագին շնորհավորանքներն է քերում Սրբազան Հորը՝ մաղթելով եկեղեցական և գիտակրթական գործունեության արգասաբեր երկար փարիներ:



ՄԵԾ ԲԱՆԱՍՏԵՂԵԻ ՀՈԳՈՒ ԱՂՈԹՔՆԵՐԸ

Հայրենի առաջին աղոթքը, որ մեզ ուսուցանել են մեր պապերը, «Հայր մեր» էր, առաջին բանաստեղծությունը՝ աղոթքի կախարդանքով թովիչ ու հմայուն, մեր մեծերից լսած ու սովորած «Ես իմ անուշ Հայաստանի»։ Ի դեպ, այս անգուցական ստեղծագործությունը, որի հեղինակի ով լինելը դեռ մենք չգիտեինք, նաև երգում էին հանդիսությունների, իրենք իրենց հետ լինելու պահերին՝ տխրության, կարոտի կամ հպարտության զգացումները արտահայտելիս։ Երգում էին կրքոտ ու հուզումնալի, և մեր պատանեկան հոգու մեջ ճախրում էին կախարդական այդ երգի բառերը ու մեղեդին։ Այդ բանաստեղծության անանց հմայքն ու տպավորությունը դեռ մանկությունից մեր մեջ մնաց մեր խաչքարերի երկաթագիր քանդակների մեջ։ Հետագայում, արդեն գաղտնի, երբ կարդում կամ արտասանում էինք, մեզ թվում էր՝ այդ երգի տողերը վառվում են կարմիր-կապույտ բոցերով, և տողերի հուրքը ասես այրում էր մեր դեմքը։ Թվում էր, թե հեղինակը բառերը հանել էր սրտի քուրայից ու տեղադրել տողերի մեջ՝ այնքան մերդաշնակ ու աստվածորեն, որ նրանց բոցեղեն շրջյունը կարծես դառնում էր լսելի։ Այս բանաստեղծությունը թվում էր, թե Աստված ինքն էր թելադրել գրողին։

Հասուն տարիներին կարդացինք շատ և շատ բանաստեղծական ժողովածուներ, սակայն այն մնաց քողարկի քարձրն ու անկրկնելին։ Հպարտություն մերժելուդ այս ստեղծագործության մասին խոսել են շատերը՝ Ավետիք Իսահակյանը, Ստեփան Զորյանը և այլք։ Մարտիրոս Սարյանը գրել է. «... Դա մեր այսօրվա աղոթքն է։ Աղոթք, որ կարելի է թե՛ մոռում հյուսել, թե՛ մրմնջալ շշուկով, թե՛ արտասանել բարձրաձայն։ Քիչ կլինի ասել, թե բանաստեղծություն է... Դա անհիշելի ժամանակներից եկող Հայաստան-Ուրարտու-Արմենիա երկրի համապարփակ դիմանկարն է։ Դա մեր ազգի կենսագրության ու վարքի կենդանի արտացոլումն է, մեր կրած տառապանքների ու փայփայած իդեալների, մեր անկումների ու վերելքների, արհավիրքների ենթակա մեր ճակատագրի անմեռ մնալու ձգտման գեղարվեստա-

կամ բյուրեղացումն է: Այդպիսի մի երգ աշխարհ բերելու համար պետք է ամենաքիչը կիսաստված լինել:

Համարի բռնկումներով Չարենցի յուրաքանչյուր ստեղծագործությունը զարմանք է հարուցում, զարմանք ու հպարտություն. չէ՞ որ նրա փառափել ու ամմահ ստեղծագործությունները մեայոսյառնու լեզվի մեռածաբույրով են օծված, նրանցում արտահայտված են մեր լեզվի ամբողջ հմայքն ու հարստությունը, մեր հավատքի Լուսավորչական մշտավատ կանթեղի խնկաբույրը:

Տարեցտարի, բարեբախտաբար, Չարենցի ստեղծագործություններին հանգստանորեն ու խորությամբ ծանոթանալու հնարավորությունները ընդարձակվեցին: Լույս աշխարհ եկան ճկարչուհի Ռեզինա Ղազարյանի շնոնիվ կորստից փրկված նոր ստեղծագործություններ: Տպագրվեցին Գուրգեն Մահարու, Վահրամ Ալազանի, Վաղարշակ Նորենցի, Իզաբելլա Չարենցի, պոետի մտերիմ ռուս և այլազգի մտավորականների հուշերն ու կարծիքները: Արխիվների լույսն ահիջից լույս աշխարհ հանվեցին բանաստեղծի կյանքին ու գրական գործունեությանը վերաբերող քաղաքիվ նյութեր: Նրա անընթեռնելի ստեղծագործությունների վերծանման, նոր նյութերի հայտնաբերման աշխատանքները, ամշուշտ, դեռ կշարունակվեն:



Չարենցի ստեղծագործությունների գնահատման, նրա բերած բանաստեղծական արվեստի նոր ձևերին, ոճին ու թեմաներին, բառապաշարին ու լեզվի հարուստությանը անդրադարձել են շատերը, սակայն աստվածաշնչյան թեմաներին, պոետի ինքն իր հետ ու Աստծո հետ առնչվելու գրույցներին ու անկեղծ խոստովանություններին, հավատավոր նրա հոգու շշուկներին բնականաբար խորհրդային տարիներին ոչ ոք չի անդրադարձել: Բանաստեղծի դասեր՝ Արփեհիկ Չարենցի 1999 թ. լույս ընծայած «Եղիշե Չարենցի աղոթքները» գիրքը, որը տպագրվել է հոգողությամբ Մեսրոպ արքեպս. Աշենյանի և մեկենասությամբ տեղ և տիկին Թադևոսյանների, մի փորձ է՝ այդ բացը լրացնելու, բացելու մի աշխարհ, որը մշտապես անտեսվել է, իսկ իրականում մեծ բանաստեղծն իր համեմատել գործերը ստեղծելիս մշտապես գգացել է աստվածային ներշնչանքի գործությունը և Աստծո միջամտությունը:

Ծնորհապարտ եմ, Տեր, ինձ լիարուս ծնած

Ծնորհների համար և ձիրքների անեղծ,

Որ կոչեցիր երգիչ ու բանաստեղծ,

Նվիրեցիր տալիղ ու էվոյան քնար...

Ծնորհապարտ եմ, Տեր, ես առավել սակայն,

Որ կոչեցիր ինձ ոչ սոսկական քերթող ...

Գրքի առաջաբանում հեղինակը գրում է. «Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելու առթիվ նպատակահարմար եմ համարում ի մի քերել և տպագրության հանձնել Եղիշե Չարենցի ստեղծագործական հանճարի արտահայտություն հանդիսացող տարբեր ժամանակներում գրված աղոթքները՝ ցույց տալու, հիշեցնելու, որ Ե. Չարենցը մի պարզ հավատացյալ է եղել, ինչպես իր քրիստոնյա ժողովուրդը, մի ջերմեռանդ աղոթող»:

Գրքի «Աղոթքներ առ գոյատևումն մարդու», «Երեք մահվան տեսիլներ», «Չարենցը Աստծո բերկրանքով լեցուն», «Աղոթքը չմարող կանթեղ», «Չարենցը Աստվածապատումի ճանապարհին», «Աստված՝ սեր», «Չարենցի աղոթքը մահվան հետ հաշտ», «Ես իմ անուշ Հայաստանի»-ի և մյուս վերլուծական բաժիններում հեղինակը հանգամանորեն անդրադարձել է բանաստեղծական այն շարքերին, որոնց մեջ արտահայտվել են իր ժողովրդի փրկության համար աղոթող բանաստեղծի պատգամները: Դիմելով երկնքի ու երկրի Տիրակալին՝ «Քեզ եմ կանչում ես արդ, ինչպես Նարեկացին», Չարենցը շարունակում է.

Եվ ես - տխուր, ինչպես վկան Նարեկացին՝

Եվ զարհուրող այնպես, և մեռակյաց՝

Ջարհուրյալ կյանքի հանդեպ անօգ կանգնած՝

Ես ո՞ւմ դիմեմ, ո՞վ Տեր, արդ՝ Քեզանից բացի:

Բարձրյալի լուսավոր շունչը, Արարչական հայացքը բանաստեղծը մշտապես զգացել է իր գլխավերևում և դեռ պատանի գիտակցել, որ առանց Տիրոջ կամքի, առանց հավատքի չի ծնվի ձիրքն ու տողն աստվածային: Աստծո առջև նրա խոստովանությունները, անկեղծ երկխոսություններն ու զոհաբերությունները ավելի հաճախակի են արտահայտվում հատկապես բանաստեղծի կյանքի դժվարին ու հալածական տարիներին, իր երկրի մշուշոտ ապագամ ու ճակատագիրը անորոշության մեջ տեսնելիս: Իր երկրի ու ժողովրդի հանդեպ տաժած անսահման սերը նա արտահայտում է իր անձը Աստծո զոհասեղանին դնելու պատրաստակամությամբ: Այս հարցում նա երկմտաճ չույն:

Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,

Ուրիշ ոտքեր կախադանին թող մոտ չգան,

Ու թող տեսնեն իմ աչքերի մեջ կախվածի

Իմ բոքը երկիր, լուսապսակ քո ապագան:

Տիրոջ հետ իր բազմաբնույթ հարցադրումները, գրույց-մտորումներն ու աղոթքները արտահայտվել են հատկապես «Լեռան աղոթք», «Մահվան տեսիլ», «Տաղ անձնական», «Ի խորոց սրտի խոսք ընդ Աստված», «Իմ լեռան աղոթքը», «Հարդագողի ճանփորոդները» և բազմաթիվ այլ գործերում:

«Աստծուն աղոթելով Չարենցը տեսնում էր մեղսագործ երկիրն իր սգի, ցավի ու արյան մեջ: Տրտում երկրում մա վսեմ էր համարում այն կապի գոյությունը, որ մարդը ուներ Աստծո հետ... Չարենցի երազանքը մեկն էր՝ գտնել այդ ոսկեզօծ կապի սկիզբը... Չար ու դժնդակ ժամանակներում փոքրացել ու մարդացել էր մարդկային երգի ու աղոթքի ճանապարհը... Աշխարհի ճորտերը մնում էին ստրուկ ու խեղճ... Չարենցի հոգին փոքրիկվում էր, ճահճուտ էր համատարած, և դառնաթախիժ խոհերի մեջ քանաստեղծը ապավինում էր լոկ մեկին ու միակին՝ Երկնավորին»,- գրում է Արփեմիկ Չարենցը: Բանաստեղծն իր ստեղծագործություններում շարունակում է հաստատել Գրիգոր Լուսավորչի, Ներսես Շնորհալու, Հովհաննես Սարկավազի արտահայտած այն մեծ ու ճշմարտացի գաղափարը, որ Աստված Սեր է ու Սիրո արտահայտություն: Հոգով ու մարմնով ամաղարտ մնալու, աստվածաշնչյան պատվիրանները նվիրվածորեն կատարելու պատգամները քանաստեղծը արտահայտել է հստակորեն, և ինքն էլ եթե շեղվել է ինչ-որ մի տեղ, ապա հաջորդել է մեղացելու, ապաշխարելու աղոթքը:

Այդ խորհուրդները ոչ միայն արտահայտվեցին մրա ստեղծագործություններում, այլև իր ապրած հոգևոր ու ֆիզիկական կյանքը եղավ այդպիսին՝ «Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձից բացի»:- «Համայնական դաշտերի սերմնացանները» ստեղծագործության մեջ, ինչպես Հ. Հովհաննիսյանը «Հատիկը» գործում, ամփոփ գործվածքով է հատիկը՝ հողին հանձնող մրա սերմնացանը դիմում Բարձրյալին: Նա իր գործը սկսում է շերտաճառ աղոթքով՝ «Օրհնյալ է Աստված, քարձրյալ է Աստված», «Փառքը շատ, Տեր: Հորովե՛լ, հորովե՛լ... Հո՛, եզո ջան...»:

Հողի մշակի՝ Աստծուն ուղղված խոսքի մեջ ինչպիսի՜ հավատ ու սեր: Աշխատավոր մարդու հոգեբանության մեջ Երկնավորի քարեզօրությունը, կամեցողությունը շատ կարևոր հանգամանք է համապագայի հաց վաստակելու ճանապարհին, որը ևս մղում է աղոթքի:

Չարենցի նվիրյալ դուստրը մեկիկ-մեկիկ քացում է մեծ քանաստեղծի հոգու գաղտնաբանները: Իր սրտի ցավն ու մորմոքը, կյանքի հարուցած դառնությունները Երկնավորին պատմելով, միաժամանակ մա չի դժգոհում իր դաժան ճակատագրից ու ընծայված բախտից: Ինչպես քանաստեղծն ինքն է գրում.

*Օ, ոչ, Դու չես լսել նրբեք տրտումը իմ,
Ոչ հոգնության, ոչ չար հերյուրանքի համար,
Թեկուզ իջել եմ ծանր, օրհասական ամպեր,
Իմ ուսերին խոնջացած և անտերումը ջնջին:
«Իմ լեռան աղոթքը»*


Այո, վիթխարի եմ ընդամենը 40 տարի ապրած պոետի քանաստեղծական պատգամները և թողած գրական ժառանգությունը: Նրա երգերը մոգական ուժ ունեն իրենց մեջ: Ինչպիսի շերտություն ու հոգեհարազատություն կան «Գազել մոր համար», «Տաղ անձնական», «Հայրենիքում» լիրիկական, «Դամթեական առասպել»,

«Մահվան տեսիլ», «Գանգրաֆեր տղամ», «Սոմա» և էպիկական շնչի մյուս գործերում: Գրողի աստվածապատումները առկա են մահ «Երկվոր Նաիրի», «Երևանի ուղղիչ տմից» արձակ գործերում: Ինչպիսի՜ գործեր կենցիկն մրա տաղանդաշտայլ զորչից, եթե ամարդարության ու մախանձի թույնը չքայքայեին մրա միտքն ու մարմինը, եթե կույր ձևացած անաստվածները կարողանային տեսնել Աստծո ըմտըրյալին: Աստված մրան դրել էր Ռանճարների ճանապարհին, և մա խորապես զգում էր իր ստեղծածի արժեքն ու մեծությունը:

Այնն անգամ, երբ մորից ու մորից աղոթքների մամն ըմթերցում ենք «Լուսամփոփի պես աղջիկ», «Ինչ տրտում են գանգերը», «Կապույտի մեջ», «Ես էլ մի օր կանցնեմ ամդարձ» և մրբությանը ու ջերմ զգացումներով շաղախված մյուս գործերը, Չարենցը մեզ պատկերացում է վանքում խաչքարերի ու Աստվածամոր պատկերի առջև: Ու Ռավերժորեն էլ մրա ստեղծագործությունները դարձան Ռոզու մրմունջ-աղոթքներ:

... Ու գանգերը դողանցում են, կարկաչում, Ռնչում,
Փախցնում են աստղերի չում ու կանչո՛ւմ, կանչո՛ւմ:
Խաչը վանքի, երզը գանգի կապույտում վերջին,
- Չարթի՛ր, զարթի՛ր , կապույտ աղջիկ ու մայր խաչին...
Նա ոսկի է երկինք մետած, մի կտոր ոսկի,
Նա մի երազ, ոսկի միրաժ արթնացած խոսքի...

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԵՐՏԵՐԹԱՆ



ԵՐԿՈՒ ՏԱՄՆՅԱԿԻՑ ԱՎԵԼԻ ԱՆԱՊԱՍՏԱՐ ԵՐԵՒԱՆԵՐ ՄԿՐՏՎԵՑԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱՇՆՈՒՄ

Օգոստոսի 1-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մկրտարանում, ձեռամբ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի, մկրտվեցին և Հայ Եկեղեցու սրբալույս մյուստնով օծվեցին երկու պասնյակից ավելի անապաստան երեխաներ, որոնց մկրտելու խընդրանքով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղար Հովնան Սրբազանին էր դիմել մուրացիկ և թափառական երեխաների դաստիարակությամբ զբաղվող «Նոր Հայաստան, հումանիտար աջակցության կենտրոն»-ը: Մկրտվող երեխաներին միացան նաև կենտրոնի մի քանի աշխատակիցներ:

Մկրտության արարողությանը մասնակցեցին նախորդ կիրակի օրը ձեռնադրված յոթ նորածն քահանաները, որոնք Սրբազան Հոր հետ միասին երեխաներին բացառքում էին Մկրտության, Դրոշմի, Հաղորդության խորհուրդները՝ հեղինակելով մանուկների անվարժ խաչակնքումին:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՈՒԿՐԱԽՆԱՅՈՒՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ

Օգոստոսի 4-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ուկրաինայում հավաքարմագրված շուրջ 15 դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների և գործադար շրջանակների ներկայացուցիչների՝ Ուկրաինայում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Հրաչ Միլվանյանի և Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանի ուղեկցությամբ:

Նորին Սրբությունն ուրախությամբ նշեց, որ 1700-ամյակի առիթով Մայր Աթոռն առաջին անգամ է հյուրընկալում մեկ այլ երկրում հավաքարմագրված դիվանագետների: Վեհափառ Հայրապետը համոզմունք հայտնեց, որ օտարերկրյա դեսպանների այցն իր նպաստն է բերելու քաղաքներ երկրների հետ Հայաստանի բարեկամական կապերի զորացմանը: Երախտագիտությամբ վերհիշելով 1988 թ. աղե-

փայլի նրկրաշաղժի և անկախության հաստատման առաջին դժվարին փայրիների շնորհաբերում հայաստանին ցուցաբերած օփառ նրկրների եղրայրական օգնությունը, հայոց հայրապետը գոհունակությամբ նշեց, որ այսօր լարենկամության և հանձնառության ոգին շարունակվում է մեկ այլ դրսևորմամբ՝ նղրայրական օգնությունից վերածնելով համագործակցության:

հանղիպման ապարդիին, ի պատասխան իյուրների հարցումների, Նղրին Սրրությունը ներկայացրեց հայ եկեղեցու ներկայիս վիճակը և նրա վերագարթոնը անկախության փայրիներին:

ՎԵՐԱՕԾՎԵՑ 800-ԱՄՅԱ ՄԱՂՄՈՍԱՎԱՆՔԸ

Օգոստոսի 5-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց հարթղիկոսի հանղիսապետությամբ վերածովեց հոջակավոր Սաղմոսավանքը, 800-ամյա ընղմիջումից հետո կրկին պատարագ մատուցվեց հնագույն վանքի Ս. Սիոն և Ս. Ասրվածածին եկեղեցիներում:

Նախորղ օղը Սրրայույս Այուոոնով օծվել ու վերաարբագործվել էին փաճարի սյուներն ու գմբեթների խսեցըր: Կիրակնօղյա Պատարագից առաջ Վեհափառ հայրապետի և նրան ողեկցող Վերաշնորի Սրրագան հայրերի ձեռքով վերածովեցին Ս. Սեղանները:

«Երկիր և մշակույթ» լարեգործական կազմակերպությանն անղամագրված սիյուրառաիս եկեղեցասեր նրկրասարղների աշխատանքով նորղզվել են վանական համայրիի գմբեթները, փեղսղղվել նոր դռներ ու պատուհաններ: Վերականգնման գործն իր ապարդին հասավ 1700-ամյակի հոբելյանական փարում ամերիկարնակ մեծանուն լարերարներ փր և փրկին հրայր և Աննա հովնանյանների զուսփոր էղիլ հովնանյանի հովանավորությամբ:

Վանական համայրին ամբողջությամբ՝ վանքի գլխավոր Ս. Սիոն և հարակից Ս. Ասրվածածին եկեղեցիները, հղյակներփ գավիթն ու գրատուներ, 13-րղ դարում կառուցել են հայոց Վաչուրյան իշխսնական փաե մեծանուն իշխանները:

Սրբագան աղրաղղությունից հետո բագմաթիվ ուխտավորներին շնորհավորեց Գարեգին Բ Ամենայն հայոց հայրապետը: Նղրին Սրրությունն իր գնահատանքը հայրենց Տ. Մեսրոպ արքեպս, Աշնյանին, Տ. Տաթև արքեպս, Սարգսյանին և Արագածուրնի թեմի առաջնղղղական փեղապառ Տ. Վագգեն վրղ, Միրգախանյանին, որոնց նախանձախնղիր աշխատանքի շնորիիվ վերաբացվեց 800-ամյա վանական համայրիը:

ՓԱՐԵՔԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՀՈՒՆՍԻ 18-ԻՆ ՍԿՍՎԱԾ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԽԱՂԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Ն.Ա.Օ.ՏՏ. Փարեգի Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ոգոսարտի 18-ի ն ողջոյնի Հայրապետական խոսք է ասել Համահայկական երկրորդ խաղերի բացման առիթով:

«Սրբի տնկումն քերկրանքով Ամենայն Հայոց Սրբության Սրբոյ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից ողջունում ենք հանդիսավոր բացումը Մայր Հայրենիքում Համահայկական երկրորդ խաղերի:

Մեզ համար առանձնակի ուրախության առիթ է Հայոց Մեծ Դարձի 1700-ամյակի խորհրդով պատկազարդ այս տարում, Միաձուլեց Մայր Աթոռի շնորհարարչա հովանու ներքո, Ազատն Մասայաց հայացքի առջև, Հայոց ազատ ու տնկաւի Հայրենիքում օրհնել և Հայրապետական Մեր սրտգումբն հոյն աշխարհի տարբեր տնկյուններից ժամանած հայագի մարգիկներին:

Արդարեւ, բարի է նախաձեռնությունը խաղերի կազմակերպիչների, որ կոչված է մախական գեղեցիկ այս ձևակերպումով ամրապնդելու սիրտ, եղբայրության ոգին երկրասարդ հայորդիների սրտերում, համախմբելու Մայր Հայրենիքին ու Եկեղեցուն ծառայություն մատուցելու վեհ գաղափարի շուրջ, նպաստելու նրանց ազգային գիտակցության առաջնել գործունակը՝ ի խնդիր մեր ժողովրդի նվիրական իղձերի ու տեսիլների իրականացման:

Համահայկական երկրորդ խաղերի բացման առիթով Հայրապետական Մեր պատգամն է՝ մշտապես միասնական ու միակամ լինել, արմատավորել գեղեցիկ այս ավանդույթը հայրենական մեր կյանքից ներս՝ այն դարձնելով հայրենաշինության, եղբայրսիրության և հոգնեղբորդի քերկրալի հրավեր:

Հղում ենք Հայրական Մեր սերը, գնահատանքն ու օրհնությունը Համահայկական խաղերի կազմակերպիչներին ու բոլոր մասնակիցներին՝ հայցելով Տիրոջ համապարզ գորակցությունն ու հովանին նրանց:

Բարի երթ Համահայկական երկրորդ խաղերի», - ասված է Վեհափառ Հայրապետի ողջոյնի խոսքում:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԱՌԱՋԻԿԱՅՈՒՄ ԿԱՅՅԵԼԻ ՎՐԱՍՏԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն ընդունել է Վրաստանի Հանրապետության խորհրդարանի պատգամավոր, Վրաստանի հայերի միության նախագահի առաջին տնօրեն Վան Բայրուրթյանին և Աջարիայի Ինքնավար Հանրապետության հայ համայնքի «Աերածնունդ» միության նախագահ Արմեն Կևորգյանին: Հյուրերը Վեհափառ հայրապետին շնորհավորել են Նորին Սրբության 50-ամյա հոբելյանի առիթով և հույս հայտնել, որ հայ-վրացական բարիդրացիական հարաբերությունները կայահպանեն ավանդական ջերմությունը:

Քննարկվել է Ամենայն հայոց Կաթողիկոսի՝ առաջիկայում Վրաստան (Նիկո-ծմինդա, Ախալքալաք, Ախալցխա) կաթարելիք ուխտագնացության խնդիրը:

Վեհափառ հայրապետը հավաստել է, որ այդ այցի շրջանակներում, ընդառաջելով Աջարիայի Ինքնավար Հանրապետության նախագահ Ասյան Աբաշիձեի հրավերին և անսալով աջարահայության խնդրանքին, կժամանի նաև Բաթում, որպեսզի տեղի նորանորոգ հայկական եկեղեցին սրբազործի հայրապետական օծումով:

ՄԱՅՐ ԱԹՈՒՆ ԶԻ ԶԱՋԱԼԵՐՈՒՄ ՑԼԱՄԱՐՏԻ ԱՆՑԿԱՅՈՒՄԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Մայր Աթոռ Ա. Էջմիածինը միջազգային կենդանապաշտպան և հասարակական կազմակերպություններից, Էվրոպայում գործող եկեղեցիների հոգևոր հայրերից և անհատ անձանցից ստացել է ահագանգ-հետազոտ, որոնցում ընդգծվում է մարտի-գությունը, որ Երևանում սեպտեմբերի 7-9 անցկացվելու է ցլամարտի՝ եվրոպա-Քրիստոնեությունը հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակին: -

Քանի որ շրջանառության մեջ դրված լուրերը կեղծ հղում ունեն, թե իբր հայ Եկեղեցին ոչ միայն հանդուրժում է, այլ նաև համաձայնել է հայաստանում ցլամարտի անցկացմանը, ուստի Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգը յիստորված է հայտարարելու, որ Երևանում ցլամարտի հավանական անցկացումը որևէ կապ չունի 1700-ամյակի սեպտեմբերյան տոնակատարությունների եկեղեցական ծրագրերի հետ:

Ավելին, հայ Առաքելական Եկեղեցին չի ընդունում և չի սատարում գվարճանքային այնպիսի միջոցառումները, որպիսիք արյունալի տեսարաններ են մատուցում զանգվածներին՝ հիմնովին խտրաբերելով հապկապես մանուկների, պատանիների և երիտասարդների հոգևոր կերպվածքը, ձևախնդելով քրիստոնեական բարոյակա-նության և քրիստոնեական կենսակերպի չափանիշները:


ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՎ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԸ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՅՐ ԷԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ՆՈՐԱԿԱԹՈՒՅՑ ԲԱՑ ԽՈՐԱՆԻ ՈՒ ԿԱՄԱՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓՈԻԼԻ ԱՇԽԱՏԱՆ-ՔՆԵՐԸ

2001 թ. օգոստոսի 30-ի առավոտյան Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն և Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը, Երևանի թաղաքապետ Ռոբերտ Նազարյանի ուղեկցությամբ, այցելել են նորակառույց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի՝ շինարարության ավարտական փուլի աշխատանքների ընթացքին ծանոթանալու համար:

Վեհափառ Հայրապետը գլխունակությամբ նշել է, որ Երևանի Մայր եկեղեցու շինարարությունը կավարտվի նախապեսված ժամկետներում: Մայր եկեղեցու զլխավոր ճարտարապետը նախագահին ծանոթացրել է. թե ինչպիսի հարդարման աշխատանքներ են մնացել կատարելու: Քննարկվել է նորակառույց եկեղեցու շրջակայքը ոչ միայն բարեկարգելու, այլ նաև մոտակա ժամանցային օբյեկտների պատշաճության խնդիրը:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն և Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը, Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շինարարության ընթացքին ծանոթանալուց հետո մեկնել են Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ նորակառույց Բաց Խորանի և Մայր Աթոռի նոր մուտքի մեծածավալ Կամարի աշխատանքապարակ:

ՄԱՀԱԳՐԱԿԱՆ



ՀԱՆԳԻՍՏ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՍԱՐԳԻՍ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՉԱՓԱՐՅԱՆԻ

Սույն թվականի օգոստոսի 20-ին ի Տեր հանգչավ Երևանի Ս. Զորավոր եկեղեցու ծիսակատար Տ. Սարգիս ավագ քահանա Չափարյանը, որ ավելի քան երեսուն տարի անբասիր ծառայեց Արարատյան Հայրապետական թեմում: Համեստ էր, խոնարհ, մկիրված, խաղաղասեր: Ամմնացորդ սիրում էր եկեղեցին և ժողովրդին:

Հանգուցյալ Տեր Հայրը ծնվել է 1938 թ. Սիրիայի Քեսաբի շրջանի Գալատուրան գյուղում: 1947 թ. ծնողների հետ մեղադրվում է Մայր Հայրենիք և բնակություն հաստատում Երևան քաղաքում:

Նախնական կրթությունը ստանալուց հետո, 1956 թ. ընդունվում է Ս. Էջմիածնի Հոգևոր մեմարան, ուր սովորում է շուրջ երկու տարի:

1958-1960 թթ. ծառայում է խորհրդային բանակում:

1962 թ. ամռանը մեկնում է Երևան:

1967 թ. հուլիսի 2-ին. երջանկաբեկական վազգեն Ա Վեհափառ Հայրապետի կաթաղությանը և ձեռամբ Տ. Վահան եպս. Տերյանի, ձեռնադրվում է քահանա:

1967-1978 թթ. ծառայում է Եղեգնաձորի Ա. Խաչ վանքում որպես վանահայր. ապա հոգևոր ծառայությունը շարունակում Երևանի Ա. Գևորգ և Ա. Զորավոր եկեղեցիներում:

Հանգուցյալ Տեր Հոր հոգևոր ծառայությունը բարձր են գնահատել երջանկաբեկական վազգեն Ա և Գաբեգին Ա Հայրապետները՝ 1983 թ. № 1233 թվակիր կոնդակով շնորհելով նրան լանջախաչ կրելու իրավունք, 1991 թ. № 1777 թվակիր կոնդակով՝ ծաղկյա փիղոն կրելու իրավունք և 1998 թ. № Է/128 թվակիր կոնդակով՝ ավագության տիտղոս և պատիվ:

Հանգուցյալ Տեր Հոր աճյունը դրվեց Ա. Զորավոր եկեղեցում, ուր օգոստոսի 23-ին մատուցվեց Ա. Պատարագ, որի ընթացքում, ձեռամբ առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կոչյանի, կատարվեց վերջին օծման կարգը: Դամբանական խոսքում Սրբազան Հայրը մասնավորապես մեջք. «Տ. Սարգիս քահանան իր կյանքն ամենացորդ մկիրեց Աստծուն, Եկեղեցուն և ժողովրդին, որի համար մա սիրված էր բոլորի կողմից: Հետևաբար երախտագիտությամբ, հարգանքով ու աղոթքով ենք նրան ճանապարհում դեպի Երկնքի Արքայության դռները»:

Հանգուցյալ Տ. Սարգիս ավագ քահանա Զափարյանի աճյունն ամփոփվեց Երեվանի Ծառուվյանի շրջանի գերեզմանատանը՝ մեջքյալ հարազատների կողքին:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

Տ. Սարգիս ավագ քահանա Չափարյանի մահվան առիթով Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսը հետևյալ ցավակցական հեռագիրն է հղել հանգուցյալի սգակիր ընտանիքին.

ԲԱՐԵՀԻԾԱՏԱԿ

Տ. ՍԱՐԳԻՍ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՉԱՓԱՐՅԱՆԻ ՍԳԱԿԻՐ ՀԱՐԱՋԱՏՆԵՐԻՆ

Ցավով ու ափսոսանքով լսեցինք մեր Եկեղեցու երախտարժան զավակ և մկիրյալ սպասավոր Տ. Սարգիս ավագ քահանա Չափարյանի մահվան լուրը: Մեր հավատի մկիրական կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր անկեղծ ցավակցությունն ենք բերում հոգեղույս Տեր Հոր հարազատներին և բոլոր մերձավորներին:

Բարեհիշատակ Տեր Հայրը բազում տարիներ ամբողջամպեր իմքնընծայումով իր կարելիքն էր սպաս դրեց համուն Առաքելական մեր Մայր Եկեղեցու պայծառության ու բարեպաշտ հավատացելոց հոգևոր կյանքի նորոգության՝ ի Տեր մեջելով անսակարկ ու բազմարդյուն սպասավորության վաստակն ուներին:

Ի խորոց սրտի Մեր աղոթքն ու հայցն է առ Բազումողորմն Աստված, որ առատ ողորմությամբ գրա իր հավատարիմ ծառային, երկնային մկիրական հանգրվաններում խաղաղության մեջ ընդունի նրա լույս հոգին՝ արժանացնելով փառաց պսակին:

Խումկ և աստվածային օրհնություն լուսահոգի Տ. Սարգիս ավագ քահանա Չափարյանի շիրմին:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՎԱՅՈՑ

Ա. Էջմիածին,

22 օգոստոսի 2001 թ.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱԴԱԼՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

ՍԳԽԻՐ ԲԵՐԱՅԱՆ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Ցավով և ափսոսանքով լսեցինք մեծանուն երգիչ, մեր Եկեղեցու արժանավոր զավակ Հովհաննես Բաղայանի մահվան մասին: Հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսության, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության՝ անդարձ կորստի այս դժվարին պահին ցավակցում ենք հանգուցյալի բոլոր հարազատներին ու մերձավորներին:

Հայ երգարվեստի անկեղծ նվիրյալն էր երջանկափայտակ Հովհաննես Բաղայանը: Նրա բարձրարվեստ կատարմամբ հայ ժողովրդական և աշուղական երգը տասնամյակներ շարունակ ջերմացրել է հազարավոր հայորդյաց հոգիները: Նրա հայրենաբույր և հոգեթով երգը հնչել է նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Վեհարանի կամարներից ներս, գերելով բոլորիս և անմոռաց մնալով մեր հիշողության մեջ:

Մեր ազդեթն է, որ Բազումտղորմն Աստված երկնային երանավեր Իր բարձունքներում խաղաղության մեջ ընդունի հանգուցյալ Հովհաննես Բաղայանի հոգին և Սուրբ Հոգու շնորհով սփռվածք ու մխիթարություն պարգևի նրա բոլոր հարազատներին:

«Թիշաբական արդարոց օրհնութեամբ եղիցի»: Ամեն:

Վշտակցությամբ և աղոթքով՝

ԳՄՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,

20 օգոստոսի 2001 թ.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

ՄԿՐՏՉՅԱՆ ՄԳԱԿԻՐ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Ցավով և ափսոսանքով լսեցինք հայրենի գրականագետ և վաստակյալ մանկավարժ, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր Լևոն Մկրտչյանի անսպասելի մահվան լուրը: Նաևոն Վմենայն Նայոց Կաթողիկոսության, Գերագույն Նոգևոր Խորհրդի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության Մեր անկեղծ վշտակցությունն ենք բերում հանգուցյալի թուր հարազատներին ու մերձավորներին:

Կյանքով ու գործունեությամբ հոգեկույս հանգուցյալը եղավ ջախջախյալ հայ և ռուս ժողովուրդների բարեկամության գորացման, որի արտահայտություններից էր նաև իր նախանձախնդրությունն ու նվիրումը Սլավոնական համալսարանի ռեկտորի պաշտոնում: Գիտնականի իր հարուստ փորձառությունը, գիտելիքներն ու կարողությունները Լևոն Մկրտչյանը փարիներ շարունակ սիրով ու նվիրումով փոխանցել է իր ուսանողներին՝ նրանց հոգիներում միաժամանակ գորացնելով հայրենասիրության ու ազգասիրության ոգին:

Մեր աղոթքն է, որ Ողորմած Աստված երկնային Իր բարձունքներում խաղաղության մեջ ընդունի հանգուցյալ Լևոն Մկրտչյանի հոգին և Սուրբ Նոգու շնորհով մխիթարություն պարգևի նրա սգակիր հարազատներին:

Խունկ, մշտառաջ աղոթք և օրհնություն ննջեցյալի անանց հիշատակին:
Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ

Ա. Էջմիածին,

23 օգոստոսի 2001 թ.



«ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ* (1984-2000 թթ.)

1988

Ա-Գ

772. Վեճափառ Հայրապետի Ա. Ծննդյան քարոզը՝ արտասանված Ա. Էջմիածնի Մայր տաճարում (6 հունվար 1988 թ.): 3-5

773. Ամանորի և Փրկչի հրաշափառ Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Բույր Եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները: 6-8

774. Ամենայն Հայոց Վեճափառ Հայրապետի շնորհավորական գիրը Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ՝ ուղղված Հայաստանյայց Եկեղեցու մփրապետական երեք Աթոռներին, թեմակալ բոլոր առաջ-

նորդներին և եկեղեցական համայնքներին: 9

775. Ամենայն Հայոց Վեճափառ Հայրապետի և պետական բարձրաստիճան անձնավորությունների միջև փոխանակված հեռագրեր Նոր տարվա առթիվ: 10-13

776. Ընդունելություն ՀՍՍՀ Միհիստրների խորհրդում: 14

777. ԱՐԲԱՀԱՄ արքեպ ՄԿՐԸՏ-ԶԹԱՆ Ամանորյա և Ա. Ծննդյան հանդիսություններ Մայր Աթոռում: 15-22

778. Ամենայն Հայոց Կաթողիկոս, Տ.Տ. Վազգեն Ա Հայրապետի հովվապետական այցելությունը ԱՄՆ և Կանադա: 23-251

779. ՆՈՒԲԱՐ ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼ-ԹԱՆ, Ցուցակ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մոր ստացված ձեռագրերի: 56-60

Սկիզբը տես 32, 51, 82, 100, 150, 192, 264, 280, 294, 353, 418, 491, 549, 713, 771

* Սկիզբը տես 2001 թ., № Դ, էջ 104-118, Ե, էջ 112-126, Զ-Է, էջ 112-126

780. Մամուլի արձագանքներ:
252-263

*Վազգեն Ա Հայրապետի ԱՄՆ և
Կանադա այցելության մասին*

781. ՍՈՒՔԻԱՍ ԳՈՒՄՐՈՒԹԱՆ,
Խոսք ողջույնի: 264

Ուտամավոր

782. ՇԱՀՆԱԶԱՐ ՔԵՈՒԹԱՀ-
ԹԱՆ, Վեհափառն է: 264-265

Ուտամավոր

Դ

783. Ամենայն Հայոց Կաթողիկոս,
Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի Սուրբ
Զատկական քարոզը՝ արտասան-
ված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում
(3 ապրիլ 1988 թ.): 3-4

784. ԹԵՄԱԿԱՆ ԿԹԱՆՔ: ՍԱ-
ՀԱԿ սարկավազ ՍՈՒՔԻԱՍԹԱՆ,
Հանդիսավոր պատարագ և մատաղ-
օրհնություն Լիոնի Ս. Հակոբ Մայր ե-
կեղեցվո մեջ: 5-6

785. ԹԵՄԱԿԱՆ ԿԹԱՆՔ: ՍԱ-
ՀԱԿ սարկավազ ՍՈՒՔԻԱՍԹԱՆ,
Բացում Լիոնի Աստվածաբանական
համալսարանի հայագիտական ամ-
պիոնին: 6-7

786. Փրկչի Հրաշափառ Ս. Հարու-
թյան տոնի առթիվ Ամենայն Հայոց
Մայրազույն Պատրիարք և Կաթողի-
կոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Հայրա-
պետի և քույր եկեղեցիների հոգևոր
պետերի միջև փոխանակված ողջույ-
նի հեռագրերն ու գրությունները: 8-10

787. Ամենայն Հայոց Վեհափառ
Հայրապետի շնորհավորական գիրը
Փրկչի Հրաշափառ Ս. Հարության
տոնի առթիվ՝ ուղղված Հայաստան-
յայց եկեղեցու մկրտապետական ե-

րեք Աթոռներին, թեմակալ բոլոր ա-
ռաջնորդներին և եկեղեցական հա-
մայնքներին: 11-12

788. Հայրապետական հանդիսա-
վոր Սուրբ Պատարագ և քարոզ
Փրկչի Հրաշափառ Հարության տոնի
առթիվ: 13

789. ՍԱՀՄ ՄԻՃԻՍՏՐՈՆԵՐԻ խորհր-
դին առընթեր կրոնական գործերի
խորհրդի մախագահ, տիար Կոս-
տանտին խարչևը Հայաստանում: 14

790. Ս. Վարդանանց տոնակա-
տարությունը և Վեհափառ Հայրա-
պետի անվանակոչության տարե-
դարձը Մայր Աթոռում: 15-21

791. Մասնավոր վարդապետա-
կան աստիճանի տվչություն: 22-25

*Վարդապետական աստիճան են
ստանում Տ. Սասուն աբեղա Զըմ-
րուխտյանը , Տ. Արարատ աբեղա
Գալթազյանը և Տ. Օջական աբեղա
Գյուլգյուլյանը*

792. Տ. Սասուն վարդապետ Զըմ-
րուխտյան: 26

793. Տ. Արարատ վարդապետ
Գալթազյան: 27

794. Տ. Օջական վարդապետ
Գյուլգյուլյան: 28

795. Քահանայական ձեռնադր-
ություն Ս. Գայանե վանքում: 29

*Քահանայական ձեռնադրություն
են ստացել Ռուբեն Հարությունյանը
(Կոմիտաս քահանա), Մարգար Տեր-
տերյանը (Մակար քահանա) և Լևոն
Քեսաբյանը (Գեղամ քահանա)*

796. Տ. Կոմիտաս քահանա Հա-
րությունյան: 31

797. Տ. Մակար քահանա Տեր-
տերյան: 31

798. Տ. Գեղամ քահանա Քեսարյան: 32

799. ԱՐԲԱՀԱՄ արեղա ՄԿՐԸՏ-28ԱՆ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի երիտասարդ միաբանների հավաքույթ: 33-42

800. Ավարտաճառերի պաշտպանություն Հոգևոր ժեմարանում: 43-45

Ավարտաճառեր են պաշտպանել Հրաչ Հակոբյանը, Գևորգ Աջապահյանը, Կամո Աթրահանյանը, Արծվի Գևորգյանը, Համազասպ Բաբուրյանը, Գառնիկ Կարապետյանը, Սամվել Հովհաննիսյանը

801. ԳԵՎՈՐԳ սարկավագ ԱԶԱՊԱՀԹԱՆ, Հոգևոր ժեմարանի՝ Հովհաննավանդից Ս. Էջմիածնի փոխադրության 350-ամյակին նվիրված գիտական զեկուցումների Ա. Եսայանի Մայր Աթոռում: 46-47

802. ՄԱԹՐ ԱԹՈՒՈՒՄ: Եկեղեցական քեմ. լուրեր: 48-51

803. Ավագ քահանայության տըվչություն: 51

Ավագ քահանայի պատիվ է ստացել Տ. Ղևոնդ քահանա Հարությունյանը

804. ՆԵՐՍԵՍ արքեպիսկոպոս ՊՈԶԱՊԱԼԹԱՆ, Քարոզ՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Աքսորման Կիրակի օրը (21 փետրվար, 1988 թ.): 52-55

805. ԳՐԻԳՈՐԻՍ եպիսկոպոս ԲՈՒՆԻՍԻԹԱՆ, Քարոզ (Ծաղկազարդի տոնին): 56-58

806. ՆԵՐՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ, Ավագ Օարաթվա խոհեր

Ավագ Հինգշաբթի: 59-60

Քարե աղոթք: 60

Առ յարուցեալն (Զատիկ): 60
Ռտանավորներ

Ե - Զ

807. Լեոնային Ղարաբաղի իրադարձությունների մասին: 3

808. ՎԱԶԳԵՆ Ա. ՍՄԿԿ ԿԵՆՍԿՈՒՄԻ զխավոր քարտուղար Մ. Գորբաչովին: 4

809. Վեհափառ Հայրապետի խոսքը Երևանի հեռուստացույցից (25 փետրվարի 1988 թ.): 5-6

810. Վեհափառ Հայրապետն ընդունեց Դոլգիխին և Լուկյանովին: 6

811. Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա -ի խոսքը՝ արտասանված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Սուրբաշխի զոհերի հիշատակին նվիրված հանդիսավոր հոգեհանգստյան առթիվ (Կիրակի, 13 մարտ, 1988 թ.): 7-9

812. Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի կրոնապետների ժողով Ռոստովում: 10-11

813. Վեհափառ Հայրապետի խոսքը (Ռոստովի ժողովում): 11-13

814. Ուղերձ Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի հավատացյալներին: 13-15

815. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ցավակցական հեռագիրը Եթովպիայի Եկեղեցու Ս. Սինդոնին: 16

Եթովպական Ռղափառ Եկեղեցու պետ Աբունա Թեքլե Հայսանոթ Պատրիարքի մահվան առթիվ

816. ԾԱՆՈՒՑՈՒՄ: 17

Կարգադրվել է արված Միքայել քահանա կյուրեղյանը

817. ԵԱՆՈՒՑՈՒՄ: 17

Կարգալույծ են արված Հարություն և Կարգալույծ են արված Հարություն և Կարգալույծ են արված Հարություն և Կարգալույծ են արված Հարություն

818. ՄԱՅՐ ԱԹՈՐՈՒՄ: Եկեղեցական քեմ. լուրեր: 18-19

819. ԹՂԹԱԿԻՑ, Սովետական Միության խաղաղության կողմնակիցների հերթական հավաք Մոսկվայում: 20

820. ՎԻԳԵՆ վարդապետ ԱՅՔԱՋԱՅՆ, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի «Առաքելություն և ավետարանչությունն աշխարհում» հանձնաժողովի հերթական նստաշրջանը: 21-22

821. Եվրոպայի Եկեղեցիների կոնֆերանսի համաժողովը: 23

822. ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ: ԱՄՆ-ի Արևելյան թեմի հոգևորականաց տարեկան համագումար և 86-րդ թեմական պատգամավորական ժողովը: 24-26

823. ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ: Սարկավազական ձեռնադրություն (Թբիլիսիում): 26

Սարկավազ է ձեռնադրվել խաչատուր Գյուլանջյանը

824. ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ: 27

Հոգևորականաց պատրաստություն իրաքահայ թեմեմ ներս

825. ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ: 28

Իրաքահայ առաջնորդի ընտրություն

826. ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ: 29

Եգիպտոսի հայոց թեմում

827. ՊԻՈՆ ՀԱԿՈՐԱՅՆ, Կորած և վերագտնված մի գլուխգործոց (Ա.

Տեր-Մարությանի «Հայ Գեղջուկ»): 30-34

828. ԱՐԲԱՀԱՄ արեղա ՄԿՐՏ-ԶԱՆ, Սյունյաց մետրոպոլիտական Աթոռը Օրբելյանների իշխանության ժամանակ: 35-43

Շար. տես № 853, 872

829. ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍ-ԹԱՆ, Ագաթանգեղոսի աստրական խմբագրությունը: 44-54

Սկ. տես № 776

830. ԱՐՄԻՆԵ ՔՅՈՐԿԵՐԱՆ, Գրիգոր Տաթևացու «Սաղմոսաց մեկնություն» նորահայտ տարբերակը: 55-64

Սկիզբը տես 1987, ԺԱ-ԺԲ, № 767

831. ԳՈՀԱՐ ՄՈՒՐԱԴԵԱՆ, Գրախոսություն: 65

«East of Byzantium» գրքի մասին,

832. ՆՈՒԲԱՐ ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼ-ԹԱՆ, Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի: 72-76

Սկիզբը տես № 32, 51, 82, 100, 150, 192, 264, 280, 294, 353, 418, 491, 549, 713, 771, 779

Է

833. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրք Գերշ. Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսիսյանի քահանայական ձեռնադրության 60-ամյակի առթիվ: 3

834. Ն.Ա.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Հայրապետի խոսքը՝ ուղղյալ Միացյալ Նահանգաց Հայոց արևելյան թեմի պատգամավորական ժողովին: 4-5

835. ԹՂԹԱԿԻՑ: ԱՄՆ հայոց արևմտյան թեմի 61-րդ պատգամավորական ժողովը: 6-8

836. ԹՂԹԱԿԻՑ: Գիտական ճշտաշարժի Մայր Աթոռում՝ մվիրված Ռուս Պրավոսլավ եկեղեցու հազարամյակին: 9-17

837. ԳԱՐԵԳԻՆ եպիսկոպոս ՆԵՐՍԻՍԻԱՆ, Ռուս Պրավոսլավ եկեղեցու հազարամյակի տոնակատարությունը Մոսկվայում: 18-26

838. Ռուս ժողովրդի քրիստոնեացման 1000 - ամյակը Կ. Պոլսում: 27

839. Ռուսաց մկրտության 1000 - ամյակի գիտաժողովը Վրաստանում: 28

840. ԹՂԹԱԿԻՑ: Ռուս եկեղեցու հազարամյակի տոնակատարությունը Վաշինգտոնում: 29

841. Քահանայական ձեռնադրություն Մայր աթոռում: 30-31

Քահանայական ձեռնադրություն են ստացել Գևորգ Աբապահյանը (Միքայել արեղա), Կամո Աբրահամյանը (Վրթանես արեղա), Սամվել Հովհաննիսյանը (Նաթան արեղա), Արծիվ Գևորգյանը (Թադեոս քահանա)

842. Տ. Միքայել արեղա Աջապահյան: 32

843. Տ. Վրթանես արեղա Աբրահամյան: 33

844. Տ. Նաթան արեղա Հովհաննիսյան: 34

845. Տ. Թադեոս քահանա Գևորգյան: 35

846. Սարկավագական ձեռնադրություն Մայր Աթոռում: 36-37

Սարկավագ են ձեռնադրվել Էդրեկ Բարամյանը, Արամայիս Հու-

մանյանը, Սիմոն Առուշանյանը, Սարգիս Ղանդիլյանը, Սերժիկ Մամարյանը, Արա Հովհաննիսյանը, Մուրադ Սողոմոնյանը, Անդրանիկ Տերտերյանը

847. ԹՂԹԱԿԻՑ: Ամսվերջի հանդես Հոգևոր ժամարանում: 38-41

848. ԱԼԵԽՍԱՆԴՐ ՄԱՆՈՒ-ՉԱՐԹԱՆ, Թալիմի Կաթողիկե եկեղեցին: 41-48

Ծար. տես № 873

849. ՄԱՅՐ ԱԹՈՐ: Եկեղեցական բեմ. լուրեր: 42

850. ՆԵՐՍԵՍ արքեպիսկոպոս ՊՈԶՆՊԱԼԹԱՆ, Քարոզ: 43-45

851. ԹՂԹԱԿԻՑ: ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի եկեղեցական հավաք Մոսկվայում: 46

852. ԹՂԹԱԿԻՑ: Սովետական Միության երկրների և կրոնական հարանվանությունների պետերի հանդիպում Մոսկվայում: 47-48

853. ԱԲՐԱՀԱՄ արեղա ՄԿԸՐՏ-ՉԹԱՆ, Սյունյաց մետրոպոլիտական Աթոռը Օրբելյանների ժամանակ:

Սկ. տես 1988. Ե-Ջ, № 828

854. ՆՈՒԲԱՐ ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼԹԱՆ, Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի: 55-60

Սկ. տես № 32, 51, 82, 100, 192, 264, 280, 294, 353, 418, 491, 549, 713, 771, 779, 832

Ը

855. Ընդունելություն ՍՍՀՄ Գերագույն սովետում: 3

856. Ծնորդավորական հեռագիր Եթովպիայի քույր եկեղեցուն: 4

857. Բանակցություններ Պատրիարքական ընտրության մասին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության միջև: 5-6

858. Քառանայական ձեռնադրություն Էջմիածնի Ս. Գայանե վանքում: 7-8

Քառանա է ձեռնադրվել Սարգիս Մեղրոնյանը

859. Սարգիս քառանա Մեղրոնյան: 9

860. ՄԱՅՐ ԱԹՈՒ: Եկեղեցական բեմ. լուրեր: 10

861. ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ:

ԱՍՈՂԻԿ վարդապետ ԱՐԻՍՏԱԿԵՍԹԱՆ, Վիրահայոց թեմում: 11-13

Գևորգ եպս. Սեդրադարյանի ծննդյան 50 և քառանայական գործունեության 25 - ամյակներ

862. ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ: Այցելություն վատիկան: 13

863. ԹՂԹԱԿԻԾ: Օծում Ֆյորիդայի նորակառույց Ս. Դավիթ Հայաստանյայց եկեղեցվո: 14-15

864. ԹՂԹԱԿԻԾ, Գեղշ. Տ. Թորոսյան արքեպիսկոպոս Մանուկյան կրմասնակցի Փիթգալդրի համալսարանի հայկական դասարանի բացման հանդիսություն: 16-18

865. ՍԱՀԱԿ սարկավագ ՍՈՒՔԻԱՍԹԱՆ, Հայկական ամենօրյա դպրոց Լիոնի մեջ: 18

866. ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ: ԹՂԹԱԿԻԾ, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի տարեկան նշատաշրջանը: 19-20

867. ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ: ԹՂԹԱԿԻԾ, Եկեղեցիների Համաշ-

խարհային Խորհրդի գործադիր մարմնի ժողովը Կ. Պոլսում: 20-23

868. ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ: Համաքրիստոնեական համագումար կեդրոնական Ֆրանսայի մեջ: 23

869. ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ: Իրաքի քրիստոնյա պետերու առաքելությունը վասն խաղաղության: 23-24

870. ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ: ԹՂԹԱԿԻԾ, Մասնակցություն Լամպեթի ժողովին: 23-24

871. ՄԱՂԱՔԻՆ, վարդապետ ՕՐՄԱՆԵԱՆ, Հայություն հոգին: 26-31

Օար. տես № 930

872. ԱՐԱՀԱՄ արքեպ ՄԿԸՐՏՉԹԱՆ, Սյունյաց մետրոպոլիտական Աթոռ Օրբելյանների ժամանակ: 32-40

Սկ. տես 1988, № 828, 853

873. Ա. ՄԱՆՈՒԶԱՐԹԱՆ, Թափնի Կաթողիկե եկեղեցին: 41-48

Սկ. տես № 448

874. ՍՐԱԴԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՍՏԱՆԹԱՆ, Բազմալեզու մի գրքի լույսընծայման 150-ամյակը: 49-53

875. ՆՈՒԲԱՐ ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՆԵԱՆ, Ճուգակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Նոր ստացված ձեռագրերի: 54-60

Սկ. տես № 32, 51, 82, 100, 192, 264, 280, 294, 353, 418, 491, 549, 713, 771, 779, 832, 854

Թ - Ժ

876. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Ծնորդավորական հեռագիրը ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ա. Գորբաչովին՝

ՍՍՀՄ Գերագույն Սովետի նախագահության նախագահ ընտրվելու առթիվ: 3

877. ՊԻՄԵՆ ՊԱՏՐԻԱՐԶ, Ն. Ս. Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Վազգեն Առաջին: 4

Ծնորհավորանք ծննդյան 80-ամյակի և Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանի արժանանալու առթիվ

878. ԻԼԻԱ Բ, Ն.Ս. Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Վազգեն Ա-ին: 5

Ծննդյան 80 - ամյակի և կառավարական պարգևի համար

Ծնորհավորանք

879. ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐԶ, Ն. Ս. Վազգեն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց: 6

Ծնորհավորանք

880. ԾՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐԶ, Ն. Ս. Վազգեն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց: 7

Ծնորհավորանք

881. Մոկվայի պատրիարքարանի հրատարակության բաժնի նախագահ Պիտիրիմ միտրոպոլիտի շնորհավորանքի խոսքը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ ծննդյան 80 - ամյակի և զահակության 33 - ամյակի առթիվ: 8-9

882. ԽԱՐԶԵՎ, Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Վազգեն Առաջին: 10

883. Ծնորհավորական հեռագրեր Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան 80 - ամյակի առթիվ :

Հեռագրեր են հղել Թեոկտիստ, Մաքսիմ Պատրիարքները, Ռոբերտ Ռոնսին, Կունո Պայուպան, Լոգվիննկոն, Ալեքսի Բ, Պիտիրիմը, Յուվենալին, Ալեքսանդրը և այլք: 11-27

884. Սրբազան Պատարագ և Հայրապետական մաղթանք Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ծննդյան 80-ամյակի առթիվ: 28-34

885. ՍՈՒՐԵՆ Ծ. ՎԱՆԵՑԻ, Համառոտ ժամանակագրություն (Վազգեն Ա. Հայրապետի): 35-48

886. Վեհափառ Հայրապետի խոսքը միաբանական հավաքույթին (10 հոկտեմբերի 1988 թ.): 49-58

887. ԱՄՆ-ի արևելյան թեմի առաջնորդ, Գերշ. Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի ուղերձը (ԱՄՆ-ի արևելյան թեմի 86 -րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովին): 59-62

888. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի ընդլայնված նիստը Վեհաքառույթ: 63

889. Հոգևոր ընտարանի վերաբացման հանդիսությունը: 64-66

890. ՆՈՐԱՅՐ քահանա ԲԱՂ-ՂԱՍԱՐԾԱՆ, Քահանայական ձեռնադրություն: 67

Քահանա է ձեռնադրվել Արամայիս սարկավագ Հունանյանը՝ վերանվանվելով Արամ քահանա

891. Տ. Արամ քահանա Հունանյան: 68

892. ԹՂԹԱԿԻՑ, ՀԸԸՄ Սիդեյի մասնաճյուղի անդամների այցը Մայր Աթոռ: 69

893. ԹՂԹԱԿԻՑ, Մայր հայրենիքի բուհերում սովորող հորդանանա-

հայ ուսանողների այցը Մայր Աթոռ:
70

894. ՄԱՅՐ ԱԹՐՈՒ: Եկեղեցա-
կան բեմ, լուրեր: 71-72

895. ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ: Ծի-
րակի թեմում: 73

896. ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ: ՆՈ-
ՐԱՅՐ քահանա ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ,
Արարատյան հայրապետական թե-
մում: 73-74

897. ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ: ԹՂԹԱԿԻՑ, Մոսկվայի հայոց Ա.
Հարություն եկեղեցում: 75

898. ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ: ԹԸՂ-
ԹԱԿԻՑ, Իրաքի հայոց թեմում: 76-77

899. ԹՂԹԱԿԻՑ, Եթովպական
Ուղղափառ եկեղեցու մոր Պատրի-
արքի զահակայության հանդիսու-
թյունները Ադիս Աբեբայում: 78-79

900. ԹՂԹԱԿԻՑ, Կ. Մ. Խարչևի
այցը ժմե: 80-82

901. ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ: ԹՂԹԱԿԻՑ, Էկումենիկ երիտասար-
դական սեմինար Օդեսայում: 83

ԺԱ - ԺԲ

902. Ամենայն Հայոց Վեհափառ
Հայրապետի Կոնդակը Իրաքի հա-
յոց թեմի կազմավորման 350-ամյակի
առթիվ: 3 - 4

903. Ամենայն Հայոց Վեհափառ
Հայրապետի Կոնդակը Գերշ. Տ. Ա-
վագ եպիսկոպոս Ասատուրյանի՝
կրկին անգամ Իրաքի հայոց առաջ-
նորդ ընտրվելու առթիվ: 5-6

904. Ամենայն Հայոց Վեհափառ
Հայրապետի հարցազրույցը «Մովե-

տական Հայաստան» թերթի թղթակ-
ցի հետ: 7-17

905. ՎԱԶԳԵՆ Ա. ԵՎ ԳԱՐԵ-
ԳԻՆ Բ. Կոչ մեր ժողովրդին: 15-17

Երկրաշարժի առթիվ

906. Երկրաշարժի առթիվ ցա-
վակցություն հայտնած կրոնապե-
տեր: 18-22

907. ՍՍՀՄ Միջիստրների խոր-
հրդի մախագահ Ն. Ի. Ռիժկովի այ-
ցելությունը Մայր Աթոռ: 23

908. Մեծի Տանն Կիլիկիո Կաթո-
ղիկոս Գարեգին Բ - Զ Մայր Աթոռում:
26-27

909. Գարեգին Բ Կաթողիկոսի
քարոզը Ա. Էջմիածնի Մայր Տաճա-
րում: 28-33

910. ԵՐՎԱՆԴԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ,
Մեռելներու իբրև խաչ՝ ես այս ծաղը
տնկեցի: 34-44

911. ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆ, Հայաս-
տանի Հրեշտակը: 45

*Ուսանավոր՝ մպիրված երկրա-
շարժի ժամանակ գոհված հայ մա-
նուկներին*

912. Գարեգին եպիսկոպոս Հով-
սեփյանի գեկուցագիրը Ն.Ա.Օ.Տ.Տ.
Գևորգ Սրբազնագույն Կաթողիկո-
սին Ամենայն հայոց: 46-48

913. Հանդիսավոր Պատարագ
հայ մոր պետականության տարե-
դարձի առթիվ: 49-52

914. ՍԵՐՈՎԱԵ արեղա ԻՍԱ-
ԽԱՆՅԱՆ, Մեռնողների հանդի-
սություններ Աթիլիասում: 53-57

915. ԹՂԹԱԿԻՑ, Այցելություն-
ներ Մայր Աթոռ: 58

916. ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ:
Եպիսկոպոսական ձեռնադրություն:
59-60

Եպիսկոպոս են ձեռնադրվել Վաղարշ Խաչատրյանը, Վահան Թոփալյանը, Սեան Ղարիպյանը, Տիրան Կյուրեղյանը, Ասողիկ Արիստակեսյանը, Պարզև Մարտիրոսյանը

917. ԱԲՐԱՀԱՄ արքեպ ՄԿԸՐՏ-28ԱՆ, Եպիսկոպոսական ձեռնադրություն Մայր Աթոռում: 61-70

918. Տ. Վաղարշ եպիսկոպոս Խաչատրյան: 71

919. Տ. Վահան եպիսկոպոս Թոփալյան: 72

920. Տ. Սեան եպիսկոպոս Ղարիպյան: 73

921 Տ. Տիրան եպիսկոպոս Կյուրեղյան: 74

922. Տ. Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյան: 75

923. Տ. Պարզև եպիսկոպոս Մարտիրոսյան: 76-77

924. ԱԲՐԱՀԱՄ արքեպ ՄԿԸՐՏ-28ԱՆ, Ծայրագույն վարդապետական աստիճանի տվչություն: 78-81

